

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (89)

2021 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո Ր Ի Ո Ւ Ր Պ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

Գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

Գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Նիկոլայ Ստոյկո – ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
Էլ. կայք՝
[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb)

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am
Դասիչ՝ 77771

Տպագրական 13 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

10.02.2021

Հանձնված է տպագրության

10.06.2021

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (89)
2021 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Арутюн Хачикян - д.ю.н.

Геворг Даниелян - д.ю.н.

Николай Стойко – д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb)

13 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 10.02.2021
Подписано к печати 10.06.2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արսեն Թավադյան

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ. ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄ, ԹԵ՞ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ 4

Ռուբինա Պետրոսյան

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ, ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ 11

Արթուր Վարդանյան

ԿՈՂՊԵՐԱՏԻՎԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 22

Կարեն Ավետիսյան

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 31

Օքսանա Դիլբանդյան

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 38

Նաիրա Արտաշեսյան

ՓՈԽՆԱԿ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԻՐԱՈՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՀՀ-ՈՒՄ 47

Գևորգ Վիրաբյան

ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ՈՐՊԵՍ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ-ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑ 52

Արսեն Մարտիրոսյան

ԴԱՏԱԽԱՋԱԿԱՆ ԽՄՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆՑՄԱՆ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 61

Սևակ Պողոսյան

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՂԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ 68

Արվիինե Սարգսյան

ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ ՊԱՏԺԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄՎԵՏ ԱԶԱՏԵԼԻՍ 72

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁ. ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄ, ԹԵ՞ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

Արսեն Թավադյան

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

2015 թ. փոփոխություններով ՀՀ սահմանադրության մեջ ներառվեց «հանրային իրավունքի իրավաբանական անձ» տերմինը: Մասնավորապես, 180-րդ հոդվածի 2-րդ մասում նշվեց. «Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է»: Օրենսդրության մեջ այս տերմինի ներդրումը որևէ փաստացի փոփոխության չհանգեցրեց:

Հանրային իրավունքի իրավաբանական անձ կատեգորիան մի կողմից ընդհանրացնող, մյուս կողմից պայմանական հասկացություն է, որը որպես այդպիսին չի կարող որոշել առանձին կազմակերպությունների իրավական կարգավիճակը և նախատեսված էլ չէ դրա համար: Դրա ընդհանրացնող բնույթի մասին փաստում է այն հանգամանքը, որ պատմականորեն ձևավորված որոշակի իրավակարգում այդ հասկացության ներքո կարող է նկատի ունեցվել ինչ ասես՝ պետությունից, մունիցիպալ և պետական իշխանության մարմնից մինչև պետական ձեռնարկություն և հարյուր տոկոսանոց պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերություն¹:

Հանրային իրավունքի իրավաբանական անձ եզրույթի բնույթը հասկանալու համար պետք է նախ անդրադառնալ իրավաբանական անձ հասկացության զարգացմանը: Շատ կարևոր է արձանագրել, որ իրավաբանական անձ տերմինի տակ տարբեր լեզուներով, տարբեր իրավակարգերում և տարբեր ժամանակներում տարբեր երևույթներ են ընկալվել: Երբեմն իրավաբանական անձ ասելով իրավաբաններն ի նկատի են ունենում արհեստական անձին կամ որոշակի ֆիկցիա, որով մարդ չհամարվող գոյությունը դիտարկվում է որպես մարդու իրավունքներ ունեցող²: Այս տեսակետից շատ կարևոր է պարզել՝ ինչ էին հասկանում 19-րդ դարի գերմանացի գիտնականները իրավաբանական անձ եզրույթի տակ, և արդյոք մենք այժմ նույն երևույթն ենք հասկանում:

Հռոմեական իրավունքը «persona» եզրույթի տակ ի նկատի ուներ միայն մարդուն³: Իրավաբանական անձ հասկացությունը միջնադարի ծնունդ է: Այդ տերմինի հայր են համարում 13-րդ դարի Հռոմի պապ Ինոկենտիոս IV-ին, որը մեկնաբանելով հռոմեական իրավունքը, փորձում էր կարգավորել եկեղեցական որոշ միությունների վերաբերյալ հարցեր⁴:

¹ Տե՛ս Суханов Е.А. Сравнительное корпоративное право. М.: Статут, 2014, էջ 255:

² Օրինակ՝ Նյու Յորք նահանգի գերագույն դատարանը քննել է գործ, որտեղ դիմորդ հասարակական կազմակերպությունը պահանջել է ճանաչել շիմպանզե Թոմիի իրավաբանական անձ լինելը (legal personhood) և նրա նկատմամբ կիրառել Habeas Corpus: <https://www.nonhumanrights.org/content/uploads/Tommy-Appellate-Brief-Oct-2016.pdf> (07.08.2020 դրությամբ):

³ Տե՛ս George Mousourakis Fundamentals of Roman Private Law, Springer-Verlag Berlin Heidelberg, 2012, էջ 85:

⁴ Տե՛ս Maximilian Koessler The Person in Imagination or Persona Ficta of the Corporation // Louisiana Law Review Volume 9 | Number 4 // մայիս, 1949, էջեր 435-438:

Այնուամենայնիվ, մինչև 19-րդ դարը «իրավաբանական անձ» տերմինն օրենսդրության մեջ ամրագրում չէր ստանում: 1804 թ. Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքը ճանաչում էր միայն մարդու իրավասուբյեկտությունը, սակայն որոշ միավորումների վրա իրավասուբյեկտության կարգավորումը տարածվում էր ավանդույթի ուժով¹: Միայն 1978 թ. ընդունվեց Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 1832 հոդվածի փոփոխությունը, որը սահմանեց կորպորացիաների նկատմամբ կիրառելի կանոններ²:

Բայց չպետք է մոռանալ, որ Ֆրանսիայում փաստացի գործում է երկու առանձին իրավական համակարգ՝ *droit prive* և *droit administratif*, ընդ որում՝ վերջինը կարգավորում է ոչ միայն մեզ համար սովորական վարչական հարաբերություններ՝ վարչական մարմինների կարգավիճակը և լիազորությունները, բայց նաև նրանց գույքը, գործարքները, նյութական պատասխանատվությունը և ընդհանրապես նրանց բոլոր հարաբերությունները մասնավոր սուբյեկտների հետ³, այսինքն՝ նաև այնպիսի հարաբերություններ, որոնք մեր իրավական համակարգում դիտարկվում են որպես գույք քաղաքացիական:

Հանրային իրավունքի իրավաբանական անձի տեսությունը ծագել է հենց ֆրանսիական վարչական իրավունքում⁴: Այս եզրույթի պատմությունը կարելի է սկսել 1873 թ. Բլանկոյի հայտնի գործից⁵, երբ Tribunal des conflicts-ը (Պետական խորհրդի և ընդհանուր իրավասության դատարանների միջև ենթակայության հարցերը լուծող մարմինը) որոշեց, որ Ծխախոտային վարչակազմին (հանրային մարմին) սեփականության իրավունքով պատկանող սայլից վնասվածքներ ստացած աղջկա հարցը պետք է լուծի Պետական խորհուրդը⁶: Այսինքն՝ Ֆրանսիայի իրավական համակարգի պատմականորեն ձևավորված դիֆստոմիայի արդյունքում անհրաժեշտություն էր առաջացել ստեղծել այնպիսի կառուցակարգ, որը կկարգավորեր նաև պետական մարմինների գույքային պատասխանատվությունը:

Ի տարբերություն Ֆրանսիայի՝ հանրային իրավունքի իրավաբանական անձ տերմինը Գերմանիայում օգտագործվում է հենց քաղաքացիական օրենսգրքում, և այն նույնպես ուղղված է կարգավորելու մեր տեսակետից քաղաքացիական հարաբերություններ: Մասնավորապես, BGB 89-րդ հոդվածը նշում է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձինք պատասխանատու են իրենց աշխատողների և մարմինների պատճառված վնասների համար 31-րդ հոդվածի կանոններով (միավորումների մարմինների և աշխատողների պատասխանատվություն)⁷:

Այնուամենայնիվ, Գերմանիայում էլ «հանրային իրավունքի իրավաբանական անձ» տերմինը համակարգելու փորձերը անհաջողության են մատնվել՝ մնալով

¹ St' u Л. Жоллио де ла Морандьер Гражданское право Франции, Издательство иностранной литературы, Москва, 1958 էջ 230:

² St' u George A. Bermann, Etienne Picard Introduction to French Law, Kluwer Law International B.V., 2008թ. էջ 336:

³ St' u Etienne Picard, The Public-Private Divide in French Law Through the History and Destiny of French Administrative Law, in Matthias Ruffert (ed.), The Public-Private Law Divide: Potential for Transformation, 2009, էջ 18:

⁴ St' u Ястребов О.А. Основы правового положения юридических лиц публично права зарубежных стран, М.: Вестник РУДН № 3, 2009թ., էջ 32:

⁵ St' u <https://www.conseil-etat.fr/actualites/discours-et-interventions/the-french-administrative-jurisdictional-system> (07.08.2020 դրությամբ):

⁶ St' u Dacian C. Dragos, Bogdana Neamtu Alternative Dispute Resolution in European Administrative Law, Springer, 2014, էջ 58:

⁷ St' u https://www.gesetze-im-internet.de/englisch_bgb/englisch_bgb.html#p0266 (07.08.2020 դրությամբ):

տեսական քննարկումների մակարդակում¹: Ինչ վերաբերում է Չեռմանական հանրային մարմինների քաղաքացիական պատասխանատվությունը, պետք է նշել, որ այդպիսի հայցերի համար գոյություն չունի միացյալ իրավական բազա: Մեկ օրենսդրական ակտի մեջ կարգավորումներ տալու փորձերը անհաջողության են մատնվել և որպես հետևանք պետության պատասխանատվության հարցերը կարգավորվում են նախադեպային իրավունքով: Պետության պատասխանատվությունը հաճախ նկարագրվում է որպես «աճող քառուս», որը չի կարող կարգավորվել համակարգման որևէ փորձով²:

Ղրա հետ մեկտեղ պետք է հիշել, որ 19-րդ դարի վերջին, երբ գրվում էր Չեռմանիայի քաղաքացիական օրենսգիրքը, «իրավաբանական անձ» եզրույթն ուներ շատ ավելի լայն ընկալում և ներառում էր ֆիզիկական անձ չհամարվող և իրավունակությամբ օժտված ցանկացած սուբյեկտի: Այդ իսկ պատճառով և՛ Ֆրանսիայում³, և՛ Չեռմանիայում⁴ պետությունը դիտարկվում է որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ:

Բայց արդեն նախորդ դարի կեսերից «իրավաբանական անձ» եզրույթի տակ իրավաբանները սկսեցին հասկանալ միայն կորպորատիվ անձին⁵, և տարբեր երկրների օրենսդրությունները սկսեցին ձանաչել հենց պետության առանձին քաղաքացիաիրավական իրավասուբյեկտությունը՝ թույլ տալով վերջինիս անմիջականորեն մասնակցել քաղաքացիաիրավական հարաբերություններին՝ առանց հանրային իրավունքի իրավաբանական անձի դիմակի տակ թաքնվելու անհրաժեշտության⁶: «Հանրային իրավունքի իրավաբանական անձ» եզրույթը ժամանակակից քաղաքացիական իրավական համակարգ ունեցող երկրներում այս առումով պետք է դիտարկել որպես անախրոնիզմ:

Այս տեսակետից՝ «հանրային իրավունքի իրավաբանական անձ» եզրույթի ներառումը մեր օրենսդրության մեջ կարող է առաջացնել մի շարք խնդիրներ.

1. Առկա է անհրաժեշտություն փոփոխելու իրավաբանական ամբողջ լեզվամտածողությունը: Հայաստանի և բազմաթիվ երկրների իրավական տերմինաբանության մեջ իրավաբանական անձ տերմինի տակ հասկացվում է միայն քաղաքացիական հարաբերությունների սուբյեկտ կազմակերպությունը, որը պետություն կամ համայնք չէ: Հանրային իրավունքի իրավաբանական անձ եզրույթի ներառման դեպքում անհրաժեշտ կլինի փոփոխել քաղաքացիական, վարչական և ընդհանրապես ամբողջ օրենսդրությամբ սուբյեկտային ընկալումը՝ սահմանելով, որ համայնքը և պետությունը նույնպես իրավաբանական անձ են: Ինչքանով է դա արդարացված և նպատակային՝ շատ վիճելի է:

Նշված ուղղությամբ գնացել է Վրաստանը, որի քաղաքացիական օրենսգրքի 1509-րդ հոդվածը⁷ պետությունը դիտարկում է որպես հանրային իրավունքի իրա-

¹ Տե՛ս **Суханов Е.А.** Проблемы кодификации корпоративного и вещного права: Избранные труды 2013–2017 гг., М.: Статут, 2018, էջ 92:

² Տե՛ս Martina Kiinnecke Tradition and Change in Administrative Law An Anglo-German Comparison, Springer-Verlag Berlin Heidelberg 2007, էջեր 185-186:

³ Տե՛ս **George A. Bermann**, Etienne Picard Introduction to French Law, Kluwer Law International B.V., 2008 էջ 336:

⁴ Տե՛ս **Эннекцерус Л.** Курс германского гражданского права. Том I, полутом 1: Введение и общая часть / Л. Эннекцерус, Т. Кипп, М. Вольф; М.: Издательство иностранной литературы, 1949, էջ 422:

⁵ Տե՛ս Maximilian Koessler The Person in Imagination or Persona Ficta of the Corporation // Louisiana Law Review Volume 9 | Number 4 // մայիս, 1949, էջ 449:

⁶ Տե՛ս **Суханов Е.А.** Сравнительное корпоративное право. М.: Статут, 2014, էջ 256:

⁷ Տե՛ս <https://matsne.gov.ge/document/download/31702/75/en/pdf> (07.08.2020 դրությամբ):

վաբանական անձ: Բացի դրանից, Վրաստանում նաև ընդունվել է «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասին» օրենքը¹, որը փաստացի միայն հղող նորմերով հագեցած իրավական ակտ է. դրա բոլոր հոդվածները հղում են անում հատուկ օրենքներին:

2. «Հանրային իրավունքի իրավաբանական անձ» եզրույթը հակասության մեջ կմտնի վարչական իրավունքում կիրառվող վարչական մարմին հասկացության հետ: Ընդ որում, նմանատիպ հակասություն արդեն կա, օրինակ, Ֆրանսիայի և ԵՄ օրենսդրությունների միջև, քանի որ վերջինս օգտագործում է հանրային մարմին հասկացությունը, որը չի համապատասխանում ֆրանսիական հանրային իրավունքի իրավաբանական անձ եզրույթին²:

Պետք է նաև նշել, որ հանրային իրավունքի իրավաբանական անձ տերմինն ինքնին կայացած չէ, և օրինակ՝ անգլիալեզու գրականությունում օգտագործվում են տարբերվող հասկացություններ, որոնց իմաստային ծավալը նույնպես տարբեր է («public legal entity», «legal entity of public law», «public corporation», «legal entity with public participation», «publicly traded company», «public company», «legal entity of public interest» / «public interest company»)³:

3. «Հանրային իրավունքի իրավաբանական անձ» եզրույթը որևէ իրավական ծանրաբեռնվածություն չի կրում: Ինչպես նշվեց, հանրային իրավունքի իրավաբանական անձ եզրույթը ՀՀ իրավական համակարգ մտավ ՀՀ սահմանադրության 2015 թ. փոփոխություններով: Դրանից հետո մեր օրենսդրության մեջ այս տերմինի ներդրումը որևէ առարկայական փոփոխության չհանգեցրեց:

ՀՀ իրավական համակարգը վարչական հարաբերությունների տեսակետից օգտագործում է «վարչական մարմին» հասկացությունը, իսկ քաղաքացիաիրավական իրավասուբյեկտության տեսակետից՝ համայնք, պետություն և իրավաբանական անձ հասկացությունները:

Թե ինչ հարց է լուծելու հանրային իրավունքի իրավաբանական անձ տերմինի ներդրումը, հասկանալի չէ:

Ըստ իս, վարչական հարաբերությունների սուբյեկտային կազմի կարգավորությունների առումով առկա են որոշակի խնդիրներ. օրենսդրությունը վարչական մարմին չի դիտարկում փաստացի հանրային պատվիրակված գործառույթ իրականացնող անձանց: Բայց այս հարցը կարելի է ուղղել վարչական մարմնի հասկացությունը բարեփոխելով, ոչ թե մեր օրենսդրությանը խորթ տերմինի կիրառմամբ: Առավել ևս, որ այս հասկացությունը հայրենական օրենսդրության մեջ ներառել ցանկացողները նույնպես չեն բարձրացնում վերոնշված խնդրի լուծման անհրաժեշտությունը⁴:

Հակառակը, մեր օրենսդրությանը և պրակտիկային ծանոթ է դեպք, երբ նույն մարմինը դիտարկվել է և՛ քաղաքացիական հարաբերությունների տեսակետից իրավաբանական անձ, և՛ վարչական մարմին վարչական հարաբերությունների տեսակետից: Խոսքը ՀՀ կենտրոնական բանկի մասին է, որը ՀՀ քաղաքացիական օ-

¹ Տե՛ս <https://matsne.gov.ge/en/document/download/19204/19/en/pdf> (07.08.2020 դրությամբ):

² Տե՛ս Sébastien Platon The notion of "public authority" in the recent case law of the European Court of Justice and its impact on French administrative law, Montesquieu law review, Issue No.1 January 2015, էջ 5:

³ Տե՛ս Сулейменов М.К., Карагусов Ф.С., Кот, А.А., Дуйсенова, А.Е., Скрыбин, С.В. О понятии и правовом статусе юридических лиц публичного права в законодательстве некоторых развитых иностранных государств и бывших советских республиках:

<https://www.zakon.kz/4902443-o-ponyati-i-pravovomstatuse.html> (07.08.2020 դրությամբ):

⁴ Տե՛ս http://www.justice.am/storage/files/legal_acts/legal_acts_1656566421131_Iravabanakan_andinq.pdf (07.08.2020 դրությամբ):

րենսգրքի իմաստով *sui generis* իրավաբանական անձ է, կարող է մասնակցել քաղաքացիական հարաբերություններին, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի տեսակետից վարչական մարմին է. վարչական հարաբերությունների դեպքում նրա վրա տարածվում է վարչական օրենսդրությունը¹:

Այս առումով, ՀՀ իրավական համակարգում հանրային իրավունքի իրավաբանական անձ եզրույթը իրավաբանական քիմերա է²՝ մեռելածին կարգավորում, որը խախտում է նաև Օկկամի ածելիի կանոնը՝ իրավական համակարգ ներառելով ավելորդ հասկացություն, որը չի լուծում որևէ կոնկրետ հարց, այն դեպքում, երբ առկա հարցերը կարող են լուծվել առանց այդ հասկացության, և փաստացի անախորհիզմ է: Նույն հաջողությամբ կարելի էր իրավական համակարգի մեջ ներառել նաև հանրային իրավունքի ֆիզիկական անձ հասկացությունը³, օրինակ՝ նոտարներին նկարագրելու համար:

Այնուամենայնիվ, անհնար է առարկել այն պնդմանը, որ առկա են հանրության համար կարևոր նշանակություն ունեցող սուբյեկտներ: Այդպիսի սուբյեկտներ կարող են լինել ինչպես հանրային գործառույթներով օժտվածները, այնպես էլ, օրինակ, այնպիսի իրավաբանական անձինք, որոնց գործունեությունը մեծ կարևորություն ունի երկրի տնտեսական, սոցիալական, մշակութային կյանքի համար:

Հանրային իրավունքի իրավաբանական անձ հասկացության ներդրումը, ինչպես նշվեց, հնարավորություն չի տա լուծելու այս ոլորտում առկա խնդիրները, քանի որ արհեստականորեն միավորելու է իրար հետ կապ չունեցող մի շարք սուբյեկտների, որոնք, հանրային իրավունքի իրավաբանական անձի ընդհանուր տեսակի մեջ ներառվելուց բացի, որևէ այլ ընդհանրություն չեն ունենա: Եվ, իսկապես, բարդ է պատկերացնել՝ ինչ ընդհանրություն կարող են ունենալ, օրինակ, Հայ Առաքելական Եկեղեցին, Հայփոստը, Հանրային հեռուստատեսությունը, Ատոմակայանը, Փաստաբանների պալատը և այլն:

Մեթոդաբանական տեսակետից ավելի ճիշտ է նախ հասկանալ հանրային նշանակություն ունեցող սուբյեկտների կազմը: Մոտավոր ցանկը հետևյալն է՝

1. Իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող քաղաքացիական իրավունքի սուբյեկտ հանդիսացող վարչական մարմիններ (պետություն, համայնք),
2. Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող վարչական մարմիններ (կենտրոնական բանկ),
3. Քաղաքացիական իրավունքի սուբյեկտ չհանդիսացող վարչական մարմիններ (պետական մարմիններ, մարզպետարաններ և այլն),
4. Պետության կողմից հիմնադրած ոչ առևտրային կազմակերպություններ, որոնք վարչական մարմին չեն (հիմնադրամներ, ՊՈԱԿ-ներ),
5. *Sui Generis* իրավաբանական անձինք, որոնք իրականացնում են հանրային պատվիրակված գործառույթներ, սակայն վարչական մարմիններ չեն (փաստաբանների պալատ և այլն),
6. Հանրային պատվիրակված գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձինք (նոտարներ),

¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ թիվ 3-1886(ՏՂ) քաղաքացիական գործ 25.12.2007թ. որոշումը:

² Տե՛ս **Хохлов Е. Б.** Юридические химеры как проблема российской правовой науки /Е. Б. Хохлов. //Правоведение. – 2004. – № 1 (252), էջ 4-14:

³ Տե՛ս **Усков О.Ю.** Юридические лица публичного права: понятие и виды // "Журнал российского права", 2010, N 6, էջ 103:

7. Հանրային ծառայություններ մատուցող առևտրային իրավաբանական անձինք,

8. Տնտեսության համար մեծ նշանակություն ունեցող առևտրային իրավաբանական անձինք (խոշոր մթերողներ, խոշոր արտադրողներ, խոշոր արտահանողներ, գերիշխող, մենաշնորհ դիրք գրավող կազմակերպություններ),

9. Սոցիալական մեծ նշանակություն ունեցող ոչ առևտրային իրավաբանական անձինք (Հայ Առաքելական Եկեղեցի):

Վերոնշյալ բոլոր խմբերում էլ առկա են իրավական կարգավորման բացեր: Օրինակ՝ ՊՈԱԿ կազմակերպաիրավական ձևի մեջ ներառվում են ինչպես զուտ մշակութային, կրթական, գիտական նշանակություն ունեցող կազմակերպություններ (բուհեր, ինստիտուտներ, թանգարաններ), այնպես էլ փաստացի վարչարարություն իրականացնողներ (ՇՄԱԳ փորձաքննությունների կենտրոնը), սակայն բոլոր նշված կազմակերպությունները նույն կարգավորման տակ են, ընդ որում՝ միայն քաղաքացիաիրավական: Սակայն հարց է՝ որքանով են այսպիսի հարցերը ենթակա սահմանադրաիրավական կարգավորման:

Իմ խորին համոզմամբ, բոլոր խմբերում եղած հարցերը կապված չեն Սահմանադրության հետ: Միակ սահմանադրաիրավական հարցը, որ կարող է ծագել, հետևյալն է՝ արդյո՞ք հանրային պատվիրակված գործառույթներ իրականացնող անձինք (օրինակ՝ փաստաբանների պալատը) կարող են դիտարկվել որպես վարչական մարմին, և արդյո՞ք դա հակասության մեջ չի մտնի ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքի հետ: Դարձյալ կարծում եմ, որ այստեղ խնդիր առկա չէ: Այնուամենայնիվ, հնարավոր է լրացուցիչ քննարկում անհրաժեշտ լինի:

LEGAL ENTITY UNDER PUBLIC LAW: PROBLEM SOLVING OR NEW PROBLEMS

Arsen Tavadyan

*Associate Professor at the YSU Chair of Civil Law,
Candidate of Legal Sciences*

The article describes the term "legal entity of public law", which was introduced into the RA legal system as a result of the 2015 reforms of the RA Constitution. It is indicated that introduction of this term was carried out without a systematic approach, and also without taking into account the logic of civil legislation. As a result, we got a regulation that does not solve any problems and actually is a burden for the legislation. It is also indicated that instead of trying to introduce the term "legal entity of public law", it would be more correct to reform the concept of "administrative body", as well as to regulate the behavior of subjects of public importance by sectoral laws.

ЮРИДИЧЕСКОЕ ЛИЦО ПУБЛИЧНОГО ПРАВА. РЕШЕНИЕ ПРОБЛЕМЫ ИЛИ НОВЫЕ ПРОБЛЕМЫ

Арсен Тавадян

*Доцент кафедры гражданского права ЕГУ,
кандидат юридических наук*

В статье рассматривается термин «юридическое лицо публичного права», который был привнесен в правовую систему РА в результате реформ Конституции РА 2015 года. Указывается, что закрепление этого термина было осуществлено без системного подхода, а также без учёта логики гражданского законодательства. В результате мы имеем регулирование, которые не решает никаких проблем и фактически обременяет законодательство. Указывается также, что вместо попыток привнесения термина «юридическое лицо публичного права», было бы правильнее реформировать понятие «административного органа», а также урегулировать поведение субъектов, имеющих общественное значение, отраслевыми законами.

Բանալի բառեր – *հանրային իրավունքի իրավաբանական անձ, կորպորատիվ իրավունք, վարչական մարմին*

Ключевые слова: *юридическое лицо публичного права, корпоративное право, административный орган*

Key words: *legal entity of public law, corporate law, administrative body*

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ, ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՉՏՆԿՈՂ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ռուբինա Պետրոսյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Երեխայի ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքի իրացման առումով կարևոր նշանակություն ունի օրենսդրությամբ սահմանված սանիտարական և տեխնիկական պահանջներին համապատասխանող բնակելի տարածությամբ ապահովված լինելը: Երեխայի չափահասության տարիքի հասնելու կամ այլ հիմքով խնամակալության և հոգաբարձության ու խնամատարության դադարման և սեփականության իրավունքով բնակելի տարածություն չունենալու դեպքում՝ վերջինիս բնակելի տարածությամբ ապահովելու պարտականությունը կրում է պետությունը:

Օրենսդիրը «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում¹ (այսուհետ՝ Օրենք) ամրագրել է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրենց բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իրավունքի պահպանության իրավունքը, իսկ 18 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, որոնք չունեն սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն և վերջին 5 տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունը, ընծեռում է նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածություն ստանալու իրավունք, բնակտարածությունը տրվում է արտահերթ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից, բնակարան տրամադրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Օրենքի 9-րդ հոդվ.): Բացի այդ, Ընտանեկան օրենսգրքում² առանձնակի շեշտվում է հոգեզավակի՝ բնակելի տարածության սեփականության օգտագործման, իսկ բնակելի տարածության բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բնակելի տարածություն ստանալու իրավունքը (Ընտանեկան օրենսգրքի, 138-րդ հոդվ., 3-րդ մաս):

Առանց ծնողական խնամքի մնացած ու խնամակալության և հոգաբարձության (այսուհետ՝ նաև խնամակալություն), խնամատարության ներքո գտնվող երեխաների բնակելի տարածության իրավունքի հիմնահարցը ցանկանում ենք քննարկել՝

¹ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքն Ազգային ժողովն ընդունել է 24.09.2002թ., ուժի մեջ է մտել 18.10. 2022թ., ՀՕ-411-Ն, ՀՀՊՏ 2002.10.30/46(221) Հոդվ.1054:

² ՀՀ ընտանեկան օրենսգրքն ՀՀ Ազգային ժողովն ընդունել է 09.11.2004 թ., ուժի մեջ է մտել 19.04.2005 թ.: ՀՀՊՏ 2005.01.19/4(376) Հոդվ. 60:

հիմք ընդունելով վերոգրյալ իրավակարգավորումները, բնակարանային իրավահարաբերություններում խնամակալության, խնամատարության ներքո գտնվող երեխայի կարգավիճակը, իրավունքները, դրանց նկատմամբ անրագրված երաշխիքները, հիշյալ հարաբերություններում վերջինիս մասնակցության առանձնահատկությունները: Այսպես, գործող քաղաքացիական և ընտանեկան օրենսդրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս երեխայի «բնակարանային իրավունքների» ածանցյալ լինելը իր օրինական ներկայացուցչի համապատասխան իրավունքներից: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի¹ (այսուհետ՝ Քաղաքացիական օրենսգրք) 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տասնչորս տարեկան չդարձած անչափահասների կամ խնամակալության տակ գտնվող քաղաքացիների բնակության վայր է համարվում նրանց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ խնամակալների բնակության վայրը: Քաղաքացիական օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ, Ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ, 53-րդ հոդվածի 3-րդ մասերի դրույթները հաստատում են թեզն առ այն, որ երեխան պետք է համատեղ բնակվի իր օրինական ներկայացուցչի հետ: Հետևաբար, մինչև տասնչորս տարեկան երեխայի օրինական ներկայացուցչի բնակության վայրի փոփոխությամբ վերջինիս բնակության վայրը ևս փոխվում է, և նա ծեռք է բերում այն բնակելի տարածության օգտագործման իրավունքը, որի նկատմամբ առաջանում են իր օրինական ներկայացուցչի համապատասխան իրավունքները. այդպիսի կախվածությունն իր օրինական ներկայացուցիչների իրավունքներից պայմանավորված է անչափահասների ընդհանուր քաղաքացիաիրավական գործունակությամբ: Այսպիսով, սեփականության իրավունքով բնակելի տարածություն չունեցող՝ խնամարկյալի կամ հոգեգավակի՝ իր խնամակալի կամ խնամատար ծնողի հետ բնակվելու դեպքում առաջնային է դառնում վերջիններիս բնակելի տարածության՝ երեխայի լավագույն շահերին համապատասխանելու հարցը: Տվյալ դեպքում «երեխայի լավագույն շահի» բացահայտիչ է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի² (այսուհետ՝ Կոնվենցիա) 27-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ մասնակից պետությունները ճանաչում են *յուրաքանչյուր երեխայի՝ իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքը*: Նշված դրույթը ներառում է նաև համարժեք բնակարանային պայմանները³: Կոնվենցիայում ամրագրված է նաև, որ ծնողը(ները) կամ *երեխայի համար պատասխանատու այլ անձինք*, իրենց կարողությունների և ֆինանսական հնարավորությունների շրջանակներում, *կրում են երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններն ապահովելու հիմնական պատասխանատվությունը* (Կոնվենցիա, 27-րդ հոդվ., 2-րդ մաս): Մինչդեռ հարկ է նկատել, որ ՀՀ օրենսդիրը անձի՝ մշտական բնակության վայր չունենալը, ինչպես նաև սահմանված սանիտարական և տեխնիկական պահանջներին չհամապատասխանող բնակելի տարածություն ունենալը բացառող հանգամանք է դիտարկում միայն խնամատար ծնող դառնալու դեպքում, իսկ անչափահասի՝ խնամակալ դառնալու հարցում այս հանգամանքին

¹ ՀՀ քաղաքացիական օրենսգրքն ՀՀ Ազգային ժողովի ընդունել է 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1998 թ.: ՀՀՊՏ 2005.01.19/4(376) Հոդվ. 60:

² «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության կողմից 20.11.1989 թ., ուժի մեջ է մտել 22.07.1993 թ.: ՄՊՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում:

³ **Children deprived of parental care found in an EU Member State other than their own**, A guide to enhance child protection focusing on victims of trafficking, European Union Agency for Fundamental Rights, 2019 European Commission, 2019, էջ 74: Հասանելի է https://fra.europa.eu/sites/default/files/fra_uploads/fra-2019-children-deprived-of-parental-care_en.pdf հղումով 05.02.2021 թվականի դրությամբ:

որևէ իրավական նշանակություն չի տրվում (Ընտանեկան օրենսգիրք, 138.1-ին հոդվ., 1-ին մաս, 7-րդ կետ, Քաղաքացիական օրենսգիրք 37-րդ հոդվ., 3-րդ մաս): Կողմ լինելով պետության որդեգրած և իրականացնող երեխայի ընտանեկան դաստիարակությանը նախապատվություն տալու քաղաքականությանը, օբյեկտիվորեն ընդունելով այդ հարցում խնամակալության կառուցակարգի կիրառելիության տեսանկյունից առավել մատչելիությունը և օպերատիվությունը՝ այդուհանդերձ գործող իրավակարգավորումների պայմաններում խնամակալության հանձնվող երեխան կարող է հայտնվել այնպիսի բնակարանային պայմաններում, որը կարող է խաթարել նրա՝ Կոնվենցիայով ճանաչված՝ *անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքը, ինչը միանշանակ չի կարող բխել Ընտանեկան օրենսգրքի անկյունաքարային սկզբունք դարձած՝ երեխայի լավագույն շահից: Հետևաբար տրամաբանական կլինի երեխային խնամակալության (հոգաբարձության) հանձնելու դեպքում ևս որպես պարտադիր պայման ամրագրել խնամակալի (հոգաբարձուի)*՝ սանիտարական և տեխնիկական պահանջներին համապատասխանող բնակելի տարածություն ունենալու հանգամանքը: Այլապես ստացվում է, որ պետությունը խուսափում և ձևականորեն է միայն կատարում սոցիալական պաշտպանության իր վրա դրված պարտականությունը՝ երեխային խնամակալության հանձնելով անձի, որը հնարավոր է՝ չունի սահմանված պահանջներին համապատասխանող բնակելի տարածություն¹ այդպիսով, կարծես, պարզապես իրենից հեռացնելով վերջինիս: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներից մեկում արձանագրել է. «Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում պարտավոր է ելնել միմիայն երեխայի լավագույն շահերից, երեխային ապահովել բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ»²:

Միավորված ազգերի կազմակերպությունը Կոնվենցիայի և միջազգային իրավական այլ փաստաթղթերով սահմանված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բարեկեցությանը վերաբերող համապատասխան պահանջների առավել արդյունավետ իրականացմանը վերաբերող իր բազմաթիվ հրապարակումներում ընգծում է, որ բոլոր նախաձեռնությունները, որոշումները պետք է կիրառվեն, իրացվեն անհատական կարգով՝ ամենից առաջ նպատակ ունենալով ապահովել երեխայի անվտանգությունն ու պաշտպանությունը, ներառելով խտրականության բացառման սկզբունքին համապատասխան՝ յուրաքանչյուր երեխայի իրավունքներն ու շահերը³: Երեխայի՝ ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ բնակարանային պայմանները հանդիսանում են նաև վերջինիս ինչպես Սահմանադրության 83-րդ հոդվածով ամրագրված

¹ Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորման հիմնախնդրին վերաբերող ուսումնասիրություններում հետազոտողները միայն կենսաբանական ծնողների դեպքում են անընդունելի համարում երեխայի հեռացումը ընտանիքից՝ անհրաժեշտ կենսամակարդակի բացակայության (ինչպես հաճախ նշվում է՝ աղքատության) հիմնավորմամբ: Համակարծիք լինելով այս տեսակետին՝ գտնում ենք, որ խնամակալի (հոգաբարձուի) կամ խնամատար ծնողի դեպքում անհրաժեշտ կենսամակարդակի առկայությունը օրենսդիրը պետք է ամրագրի պարտադիր հանգամանքների թվում: Այս մասին առավել մանրամասն տե՛ս հետևյալ՝ https://www.childrightsconnect.org/working_groups/children-without-parental-care/ հղմամբ, 17.01.2021 թվականի դրությամբ:

² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/1513/02/08 գործով 01.04 2011 թ. որոշումը:

³ ОБСЕ/Бюро Специального представителя и координатора ОБСЕ по борьбе с торговлей людьми, Тематическая публикация №9 “Торговля детьми и защита несовершеннолетних: Обеспечение защиты прав и удовлетворения потребностей детей, пострадавших от торговли людьми, в рамках существующих механизмов защиты детей”, 2019, էջ 26: Հասանելի է հետևյալ՝ <https://www.osce.org/files/f/documents/d/2/413021.pdf> հղմամբ, 17.01.2021 թվականի դրությամբ:

սահմանադրական, այնպես էլ Կոնվենցիաի 26-րդ հոդվածի 1-ին մասով և մի շարք այլ միջազգային իրավական փաստաթղթերով (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր և այլն) ամրագրված անձի՝ սոցիալական ապահովության իրավունքի բաղադրատարրն են: Իսկ սոցիալական ապահովությունը առհասարակ պետք է հիմնված լինի խտրականության բացառման և մատչելիության սկզբունքների վրա, իսկ խոցելի, միևնույն կարգավիճակն ունեցող և այս իրավունքի իրականացման գործում դժվարությունների հանդիպող անձանց համար՝ հատկապես: Միջազգային այլ կառույցները ևս ընգծում են, որ միջազգային իրավական փաստաթղթերը վավերացրած պետությունները պետք է իրականացնեն սոցիալական իրավունքների մատչելիության բարելավումներ՝ ելնելով խտրականությունների արգելքի սկզբունքից¹:

Ուստի, խնամակալության և խնամատարության դեպքում առաջ եկող վերը նշված իրավիճակների բացառման, երեխայի անհրաժեշտ կենսամակարդակի ապահովման և խնամակալության ու խնամատարության հանձնվող երեխաների դեպքում այս առումով ստեղծված անհավասար իրավիճակի վերացման և երեխայի լավագույն շահերի ապահովման նպատակով առաջարկում ենք Քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. *«Անչափահասի խնամակալներ և հոգաբարձուներ չեն կարող նշանակվել այն անձինք, որոնք չունեն մշտական բնակության վայր, ինչպես նաև այնպիսի բնակելի տարածություն, որը համապատասխանում է սանհիտարական և տեխնիկական սահմանված պահանջներին, եթե պետք է համատեղ բնակվեն խնամարկյալի հետ, և խնամարկյալը չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող սանհիտարական և տեխնիկական սահմանված պահանջներին համապատասխանող բնակելի տարածություն»:*

Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բնակելի տարածություն չունեցող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակտարածությունը տրվում է արտահերթ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացնում է սոցիալական բնակարանային ծրագիր բնակելի տարածության կարիք ունեցող սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց համար, որոնց ցանկը և «Բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց (ընտանիքներին) հաշվառելու և կացարան տրամադրելու» կարգը հաստատված է ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման N 1 և N 2 հավելվածներով: Երեխայի բնակելի տարածություն ստանալու իրավունքը ծագում է նրա 18 տարին լրանալու կամ անչափահասի՝ օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ ձանաչելու օրը (հիշյալ որոշման 1-ին հավելված, 14-րդ կետ): Կացարանները բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին դասվող անձանց, *մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին տրամադրվում են 10 տարի ժամկետով* (1-ին հավելված, 42-րդ կետ 2-րդ ենթակետ): Մինչ-

¹ Այս մասին Սոցիալական համախմբվածության եվրոպական կոմիտեն ազդարարել էր դեռևս 2003 թվականի մայիսի 20-22-ը տեղի ունեցած 10-րդ ժողովում հաստատված սոցիալական իրավունքների բարելավմանն ուղղված առաջարկությունների նախագծում: Հասանելի է հետևյալ <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=51649&Site=CM&BackColorInternet=C3C3C3&BackColorIntranet=EDB021&BackColorLogged=F5D383> հղմամբ, 18.01.2021 թվականի դրությամբ:

դեռ ՀՀ կառավարության հիշյալ որոշման որոշ դրույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև որպես սույն որոշման շահառու հանդիսացող անձանց շրջանակ նշվում են «առանց ծնողական խնամքի մնացած երեխաները», այդուհանդերձ զուգահեռաբար նշվում են նաև «առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին դասվող անձինք», «մանկատան շրջանավարտներ», «մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներ» հասկացությունները (1-ին հավելված, 31-րդ կետ, 9-րդ ենթակետ, 42-րդ կետ, 2-րդ ենթակետ): Հարկ է նշել, որ Որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ բնակարանային ֆոնդում կացարան ազատվելու դեպքում այն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի որոշմամբ առաջնահերթ տրամադրվում է բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող անձանց (ընտանիքների) հերթացուցակում ընդգրկված մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին¹:

Խնդրո առարկա հարցի համատեքստում անհրաժեշտ ենք համարում որոշակի տեսանկյունից քննարկել նաև «սեփականություն» ինստիտուտն ու հասկացությունը: ՄԻԵԴ-ը, անդրադառնալով «սեփականություն» հասկացությանը, նշել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) կից 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «սեփականություն» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, այն չի սահմանափակվում ֆիզիկական բարիքների սեփականությամբ, գույքային որոշ այլ իրավունքներ և շահեր նույնպես կարող են համարվել «սեփականության իրավունքներ» և հետևաբար՝ «սեփականություն» Կոնվենցիայի իմաստով²: Ավելին, «սեփականություն» եզրույթը նշանակում է ոչ միայն «գոյություն ունեցող գույքը»³, այլև այն գույքը (իրավունքներն ու շահերը), որոնց նկատմամբ դիմումատուն առնվազն ողջամիտ կամ իրավաչափ սպասումներ կարող է դրսևորել⁴: Հետևաբար, Օրենքով ամրագրված բնակելի տարածություն ստանալու իրավունքը ևս «սեփականություն» է Եվրոպական կոնվենցիայի իմաստով, իսկ այս իրավունքներից օգտվող անձինք անկասկած ունեն ողջամիտ և իրավաչափ սպասումներ: Թեև պետությունը չի հրաժարվում այդ իրավունքները տրամադրելուց, սակայն ողջամիտ երաշխիքներ չի սահմանում այդ իրավունքների անխոչընդոտ, ժամանակին իրականացման համար: Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում առկա հետևյալ **«18 տարին լրացած՝ առանց ծնողական**

¹ Պետք է նշել, որ ՌԴ օրենսդիրը, նպատակ ունենալով ևս մեկ գործիքով ապահովել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բնակելի տարածության պահպանության իրավունքը, Քաղաքացիական օրենսգրքի 292-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրել է, որ «բնակելի տարածության օտարումը, որտեղ ապրում են ... սեփականատիրոջ ընտանիքի անդամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները (ինչի մասին հայտնի է խնամակալության և հոգաբարձության մարմնին) պետք է կատարվի խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշմամբ, եթե այդպիսով շոշափվում են նշված անձանց օրենքով պահպանվող իրավունքներն ու շահերը»:

² St' u European Court of Human Rights, Iatridis v. Greece [GC], no. 31107/96, para. 54, Beyeler v. Italy [GC], no. 33202/96: Հասանելի է հետևյալ https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_5_ENG.pdf հղմամբ, 18.01.2021 թվականի դրությամբ:

³ St' u European Court of Human Rights, Van der Mussele v. Belgium, 23/11/1983, Series A no. 70, p. 23, para 48: Հասանելի է հետևյալ <https://hudoc.echr.coe.int/eng> հղմամբ, 18.01.2021 թվականի դրությամբ:

⁴ St' u European Court of Human Rights, Pine Valley Developments Ltd and Others v. Ireland, judgment of 29 November 1991, Series A no. 222, p. 23, para 51, Pressos Compania Naviera S.A. and Others v. Belgium, judgment of 20 November 1995, Series A no. 332, p. 21, para. 31: Հասանելի է հետևյալ <https://hudoc.echr.coe.int/eng> հղմամբ, 18.01.2021 թվականի դրությամբ:

խնամքի մնացած երեխաները, որոնք չունեն սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն և **վերջին 5 տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունը**, իրավունք ունեն ստանալու նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածություն» ձևակերպումը տարակարծությունների տեղիք կարող է տալ առ այն, թե որ պահից սկսած է հաշվարկվում բնակելի տարածությունը օտարելու 5 տարվա արգելքը. անձի 18 տարին լրանալուն նախորդող, թե՞ առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառվելուն նախորդող 5 տարիների ընթացքում: Օրենքի տրամաբանության մեջ դիտարկելով այն պետք է հաշվարկվի առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառվելու պահից: Ուստի, տարընկալումներից խուսափելու նպատակով, առաջարկում ենք հստակեցնել, որ խոսքը 18 տարին լրացած և առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակի ձեռքբերման պահից սկսած 5 տարվա ընթացքում բնակելի տարածությունը օտարած չլինելու մասին է, քանի որ պետության բնակելի տարածությամբ ապահովելու պարտականությունն էլ ծագում է երեխայի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ձեռք բերելուց՝ կենտրոնական հաշվառման պահից:

Նշենք, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ուղղված մեր պաշտոնական հարցմանն ի պատասխան նշվել է, որ 2010 թվականից մինչ օրս առանց ծնողական խնամքի մնացած 20 անձանց հատկացվել է բնակարան¹, անհատույց օգտագործման պայմանագրով, սարքին վիճակում²: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ին մասի³ գույքի անհատույց օգտագործման լեզալ բնորոշումից հետևում է, որ այն չի ենթադրում անհատույց օգտագործման հանձնվող գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում: Մինչդեռ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում ամրագրված «18 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները... իրավունք ունեն ստանալու նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածություն» ձևակերպումը և այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի N 1555-Ն որոշմամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը զումար հատկացվեց «Հայաստանի Հանրապետության Մանկատան շրջանավարտներին բնակարանի ապահովում» միջոցառումը՝ բնակարանի գնման վկայագրերի տրամադրման միջոցով իրականացնելու համար, ապա սա ենթադրում է 18 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին սեփականության իրավունքով տրամադրվող բնակելի տարածությամբ ապահովելու պետության պարտականության մասին: Այսպիսով պետք է արձանագրել, որ մինչև նշված վկայագրերի հանձնումը պետությունը չի կատարել կամ առնվազն պահանջվող ձևով չի կատարել Օրենքով իր վրա դրված պարտականությունը, քանի որ հատկացված բնակելի տարածությունները չեն տրամադրվել սեփականության իրավունքով և հատկացվել են միայն մանկատան շրջանա-

¹ ՀՀ-ում սոցիալական բնակարանները գտնվում են ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/14, ք. Մարալիկ, Շիրազի 25, 27, 33.34, ք. Սպիտակ, Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փ. հասցեներում:

² ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականի մարտի 30-ի զԳ/ԳԳ-2-3/9374-2020 գրություն:

³ Նշված հոդվածը սահմանում է, որ գույքի անհատույց օգտագործման պայմանագրով (փոխատվության պայմանագիր) մի կողմը (փոխատուն) պարտավորվում է գույքը հանձնել կամ հանձնում է մյուս կողմի (փոխառուի) անհատույց ժամանակավոր օգտագործմանը, իսկ վերջինս պարտավորվում է այդ գույքը վերադարձնել նույն վիճակում՝ հաշվի առնելով դրա բնականոն մաշվածքը, կամ պայմանագրով որոշված վիճակում:

վարտներին, մինչդեռ վստահ հնարավոր չէ ասել, որ, օրինակ՝ խնամակալության կամ խնամատարության ներքո գտնվող մյուս երեխաները չեն ունեցել բնակելի տարածությամբ ապահովվելու խնդիր և դեռ շարունակում են ունենալ, թե՞ ոչ, բացի այդ, առկա վիճակագրությունը փաստում է, որ բնակելի տարածություններ հատկացվել են ավելի քիչ թվով անձանց, քան հաշվառված են եղել, իսկ հատկացված բնակելի տարածությունները չեն հատկացվել ի սեփականություն:

Օտարերկրյա պետությունների դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին պետության կողմից բնակելի տարածություն տրամադրելու ընթացքում եղել են դեպքեր, երբ պարզվել է, որ բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ հերթացուցակում հաշվառված անձը տվյալ պահին ապահովված է եղել բնակելի տարածությամբ, օրինակ՝ տեղափոխվել է այլ բնակելի տարածություն՝ որպես վարձակալի ընտանիքի անդամ կամ բնակելի տարածության նկատմամբ իրավունք է ձեռք բերել այլ եղանակով: Կարծում ենք՝ նման իրավիճակներում կարևոր են հետևյալ հարցադրումների պատասխանները՝ անկախ բնակելի տարածության նկատմամբ սեփականության առաջացման եղանակից (ժառանգում, նվիրատվություն, առուվաճառքի պայմանագրի կնքում և այլն)՝ այն որքա՞ն բնակելի տարածություն է ընդգրկում, ի՞նչ վիճակում է գտնվում, չկա՞ն արդյոք այդտեղ ապրելու համար խոչընդոտներ: Այդուհանդերձ, պետք է նշել, որ այս առթիվ ծագած վեճերը քննող դատարանները միևնույն հանգամանքներին միանշանակ նույն իրավական գնահատականը չեն տվել: Մի խումբ դատավորներ իրենց վճիռներում նշում էին, որ անձնական միջոցների հաշվին բնակելի տարածության ձեռքբերումը չի կարող հիմք հանդիսանալ անձի՝ օրենքով երաշխավորված և ոչ իր կամքով չհրացված՝ արտահերթ բնակելի տարածություն ստանալու իրավունքից զրկելուն¹: Մեկ այլ խումբ դատավորներ անձի՝ բնակարանի տրամադրման պահին սեփականության՝ թեկուզև համատեղ սեփականության իրավունքով անձին պատկանող բնակելի տարածության առկայությունը դիտարկել էին պետության կողմից տրամադրվող բնակելի տարածության տրամադրումը մերժելու հիմք²: Կարծում ենք, որ քննարկվող իրավիճակում դատարանները պետք է ելնեն այն փաստի հաստատումից, թե արդյոք առանց ծնողական խնամքի մնացած և բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող անձանց հերթացուցակում հաշվառված անձը սեփականության իրավունքով բնակելի տարածություն ձեռք բերելուց (անկախ ձեռքբերման եղանակից՝ նվիրատվություն, ժառանգում, առուվաճառքի պայմանագիր և այլն) հետո դադարել է լինել բնակելի տարածության կարիք ունեցող, թե ոչ, այսինքն՝ արդյոք տվյալ բնակելի տարածությունը համապատասխանում է նրանց տրամադրվող բնակելի տարածություններին օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին, թե ոչ, իսկ այնպիսի այլ հանգամանքներ, ինչպիսիք են, օրինակ, սեփականության ձեռքբերման եղանակը, բնակարանի ապահովման իրավունք ունեցող անձի ընտանեկան դրությունը, ընտանիքի կազմը, տրամադրված բնակելի տարածության մակերեսը (որպիսիք կարող են վկայակոչվել հաշվառված անձանց կողմից), ապա դրանք քննարկվող իրավունքի ապահովման հարցում իրավական արժեք չեն կարող ունենալ, քանի որ բնակարանի արտահերթ տրամադրումը արտոնություն է, որը կրում է հասցեական բնույթ և ուղղված է հենց այս անձանց բնակելի տարածությամբ ապահովելուն:

¹ Сборник судебной практики в сфере защиты прав и интересов детей-сирот и детей, оставшихся без попечения родителей, составители: Головань А.И., Купцова О.Ю., Москва, 2016, էջ 52:

² Նույն տեղում, էջ 52-53:

«խնամատար ընտանիքի» ինստիտուտի ստեղծման և կայացման բնօրրան համարվող ԱՄՆ-ի, մասնավորապես Կալիֆորնիա նահանգի օրենսդրությամբ 18 տարին լրանալով, չափահասության հասնելու հիմքով այլևս խնամատարության ներքո չգտնվող նախկին խնամատար երեխաների, այնպես էլ առանձին ապրելու ցանկություն ունեցող և սահմանված պահանջներին բավարարող խնամատար երեխաների համար ամրագրված են բնակարանի իրավունքի, կեցության ապահով և անվտանգ պայմանների ապահովման համար նախատեսված գործուն երաշխիքներ պարունակող հստակ ծրագրեր¹: Մասնավորապես նախատեսված է այնպիսի ծրագիր, ինչպիսին է «Անցումային բնակարան» ծրագիրը², որը բաղկացած է «Անցումային բնակարանային տեղավորման» ծրագրից (16-18 տարեկան խնամատար երեխաների համար), «Անցումային բնակարանային տեղավորման լրացուցիչ» ծրագրից (խնամատարության ներքո գտնվող 18-21 տարեկան չափահասների համար³) և «Անցումային բնակարանային տեղավորման լրացուցիչ» ծրագրից (մինչև 24 տարեկան չափահասների համար, ովքեր այլևս խնամատարության ներքո չեն)⁴: Այս ծրագրերում ընդգրկվելու, ծրագրի իրականացման ողջ ընթացքի, վերահսկման գործում առանցքային դերակատարում է վերապահված սոցիալական աշխատողին: Նրան է վերապահված յուրաքանչյուրի անձնական գործի, անհատական հատկանիշների հաշվառմամբ անհատական պլանի կազմումը, համապատասխան ծրագրում ընդգրկումը և վերահսկողության իրականացումը: Այսպիսով, նախ չափահասության տարիքի հասնելը չի համարվում խնամատարության դադարման անվերապահ հիմք (օրինակ՝ եթե անձը ունի առողջական խնդիր և դրանով պայմանավորված չի կարող աշխատել, ինքնուրույն վաստակել և ապրել), երկրորդ՝ դադարման դեպքում ևս պետությունը պարտավորություն է ստանձնում տարբեր ծրագրերի միջոցով աջակցելու բնակելի տարածության խնդրի լուծման հարցում⁵:

Ամփոփելով վերոգրյալը՝ արձանագրենք հետևյալը. նախ՝ միևնույն կարգավիճակն ունեցող, սակայն խնամքի և դաստիարակության տարբեր ձևերի ներքո տեղավորված երեխաների հանդեպ այս հարցում ներպետական օրենսդրությամբ դրսևորված է խտրական մոտեցում, և առաջնություն տրվում է՝ ելակետ ընդունելով երեխայի տեղավորման ընտրված ձևը, որը, կարծում ենք, ոչ բոլոր դեպքերում է արդարացված: Երկրորդ՝ գործող իրավական ակտերից և ոչ մեկում չի նշվում, թե

¹ Տե՛ս **Legal rights of teens in out-of-home care**, youth law center, revised september 2014, էջ 13, 33-39: Հասանելի է հետևյալ <https://ylc.org/wp-content/uploads/2018/11/legal-rights-of-teens-2014.pdf> հղմամբ, 18.01.2021 թվականի դրությամբ:

² Ներառում է խնամատարությունից դուրս գալու դեպքում խնամատար երեխային բնակարանի և այլ ծառայությունների հարցերում օժանդակման միջոցառումներ, որոնց կատարումն իրականացվում և ընթացքը վերահսկվում է շրջանային տեղական կառավարման մարմինների կողմից:

³ Կալիֆորնիայի օրենսդրությունը խնամատարության ներքո մնալու հնարավորություն է ընձեռում չափահասության տարիքի հասած (18 տարին լրացած), օրենքով սահմանված որոշակի իրավիճակներում (օրինակ՝ բժշկական ցուցումի համաձայն՝ անաշխատունակ, ինքնուրույն կենցաղ վարելու անկարող) գտնվող անձանց մինչև 21 տարին լրանալով:

⁴ Առաջին երկու ծրագրերը թույլ են տալիս ապրելու վերահսկվող անկախ միջավայրում՝ բնակարանում, հանրակացարանում, տանը, հյուրընկալ ընտանիքում (host family) և այլն), իրենց կողքին ապրող չափահասի վերահսկմամբ կամ առանց դրա, որի մասին հոգում է պետությունը: Այդ ընթացքում ծրագրի շահառուներին ներկայացվում են որոշակի պահանջներ՝ կրթություն ստանալու, սեփական եկամտի ձեռքբերման համար աշխատելու և այլն: Տեղական կառավարման մարմինները այս հարցերում ևս տրամադրում են համապատասխան օժանդակություններ՝ այդպիսով օգնելով անձին՝ պատրաստվելու ինքնուրույն կյանքի:

⁵ Տե՛ս **Legal rights of teens in out-of-home care**, նշված աշխատ., էջեր 13, 33-39:

հաշվառման վերցված՝ բնակարանի կարիք ունեցող անձանց ցուցակներն ինչ առաջնահերթությամբ են կազմվում¹: Եթե խնամակալության և հոգաբարձության դեպքում նման մոտեցումը կարելի է պատճառաբանել մեր երկրում առկա այն վիճակագրությամբ, որ խնամակալներ (հոգաբարձուներ) ՀՀ-ում մեծամասամբ դառնում են երեխաների հարազատները² և չափահասության տարիքի հասնելուց հետո ևս իրենց նախկին խնամարկյալին առանց տանիքի չեն թողնի (թեև հակառակը ևս բացառված չէ), ապա պայմանագրային հիմունքներով իրականացվող խնամատարության դեպքում նույնը հնարավոր չէ պնդել: Ընդունելով, մանկատների շրջանավարտների ընտանեկան դաստիարակության բոլոր ձևերից զրկված լինելով պայմանավորված պետության առանձնակի հոգածությունը վերջիններիս նկատմամբ՝ այդուհանդերձ կարծում ենք, որ տեղավորման մյուս ձևերի ներքո գտնված, միևնույն կարգավիճակն ունեցող երեխաների դեպքում ընդգծված խտրական մոտեցում դրսևորելը հակասում է ինչպես սոցիալական պետության էությանը, այնպես էլ խտրականության արգելման սկզբունքին:

Ընդունելով, որ պետության համար առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակելի տարածությամբ ապահովելու պարտականության կատարումը ենթադրում է զգալի ֆինանսական միջոցներ, դժվարություններ, այդուհանդերձ առկա խնդիրները պահանջում են լուծումներ, որոնց հաղթահարման նպատակով առաջարկում ենք հետևյալը.

- պետությունն իր սոցիալական քաղաքականությունը պետք է կառուցի այնպիսի ձևաչափով, երբ մի կողմից օբյեկտիվորեն հաշվի կառնվեն խոցելի խմբում գտնվող այս անհատների կողմից բնակարանային խնդրի լուծման սեփական հնարավորությունները, մյուս կողմից՝ պետության հնարավորությունների հանգամանքը: Այս ձևաչափի կիրակման համար պետք է մշակվի և կենսագործվի այնպիսի մի կառուցակարգ, որը հնարավորություն կտա, ըստ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի անապահովության աստիճանի, 18 տարին լրանալիս վերջինիս ապահովել անհրաժեշտ բնակելի տարածությամբ,

- առկա խտրական մոտեցման հաղթահարման նպատակով պետք է օրենքի մակարդակում ամրագրվի առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու առաջնահերթությունը (այս պահի դրությամբ իրավական ակտերի որևէ մակարդակում ամրագրված չէ)՝ պայմանավորված առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի որոշակի համեմատական կայու-

¹ ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 983-Ն որոշման (ՀՀ կառավարության 2013 թվականի 894-Ն որոշմամբ ձանաչվել է ուժը կորցրած) 1-ին կետով հաստատված առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգի 12-րդ կետով ամրագրված էր հետևյալ առաջնահերթությունը՝ ա) 3 և ավելի անչափահաս երեխա ունեցող անձինք, բ) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներ, գ) 2 անչափահաս երեխա ունեցող անձինք, դ) մեկ անչափահաս երեխա ունեցող անձինք, ե) միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ ավարտածներ, զ) բնակության համար ոչ պիտանի վայրերում բնակվողներ, է) ժամկետային զինվորական ծառայություն անցածներ, ը) ժամանակավոր բնակվողներ, թ) ազգականների մոտ բնակվողներ, ժ) վարձով բնակվողներ, Ճա) ազատագրված վայրերից վերադարձածներ, Շբ) բնակարանի կարիք ունեցող մյուս անձինք:

² Տես օրինակ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի 27.10. 2009թ. N 1, 03. 05.2010թ. թիվ 120, 01. 02. 2010թ. թիվ 04 որոշումները, Տավուշի մարզի Իջևանի քաղաքապետի 2016 թվականի 11. 03.2016թ. N119 որոշումը:

նությամբ, դրանցում կատարվող փոփոխությունների համար անհրաժեշտ համեմատաբար տևական ժամանակին և առավել լուրջ հիմնավորումներին,

- առաջնահերթություններ սահմանելիս ելակետ պետք է ընդունել անձի՝ առաջին՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառված լինելը, երկրորդ՝ բնակելի տարածության տրամադրման պահին սեփականության կամ օգտագործման իրավունքով բնակելի տարածություն չունենալը, երրորդ՝ «առանց ծնողական խնամքի մնացած երեխայի» կարգավիճակ ձեռք բերելուն հաջորդող 5 տարիների ընթացքում սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունը օտարած չլինելը, չորրորդ՝ չափահասության տարիքի հասնելով՝ սեփական միջոցների հաշվին կամ այլ եղանակով բնակելի տարածություն ձեռք բերելու հնարավորության բացակայությունը (ժառանգության, նվիրատվության կամ որևէ այլ գործարքի արդյունքում գույք (անշարժ գույք, դրամական միջոցներ և այլն), ձեռք բերած չլինելը կամ այնպիսի եկամտի բացակայությունը, որը հնարավորություն է տալիս լուծելու իր բնակելի տարածություն ունենալու խնդիրը¹,

- ելակետ չի կարող ընդունվել նախկինում երեխայի նկատմամբ ընտրված խնամքի և դաստիարակության ձևը:

ЗАДАЧИ РЕАЛИЗАЦИИ В РА ПРАВА НА ЖИЛОЕ ПОМЕЩЕНИЕ ДЕТЕЙ, ОСТАВШИХСЯ БЕЗ ПОПЕЧЕНИЯ РОДИТЕЛЕЙ, НАХОДЯЩИХСЯ ПОД ОПЕКОЙ, ПОПЕЧИТЕЛЬСТВОМ И В ПРИЕМНОЙ СЕМЬЕ

Рубина Петросян

Аспирант кафедры гражданского права ЕГУ

Обеспечение жилым помещением, соответствующим требованиям закона, детей, оставшихся без попечения родителей, находящихся под опекуном, попечительством и в приемной семье, необходимо для гарантирования физического, умственного, духовного, нравственного и социального развития ребенка, а также для обеспечения права детей на необходимый уровень жизни.

Между тем, согласно законодательству РА, исходя из выбранной формы ухода и воспитания ребенка, в вопросе реализации права детей, имеющих одинаковый статус на получение жилого помещения, закреплён дискриминационный подход, не вытекающий из основополагающего принципа Семейного кодекса РА - обеспечение «наилучших интересов ребенка», а также не соответствующий конституционному запрету дискриминации.

¹ Այս հանգամանքները պետք է հաստատվեն իրավասու մարմինների կողմից:

ISSUES OF IMPLEMENTATION IN THE RA OF THE RIGHT TO HOUSING FOR CHILDREN LEFT WITHOUT PARENTAL CARE, WHO ARE UNDER GUARDIANSHIP AND IN A FOSTER FAMILY

Rubina Petrosyan

Post-graduate student at the YSU Chair of Civil Law

The provision of living quarters that meet the requirements of the law for children left without parental care, who are under guardianship, guardianship and in a foster family, is necessary to ensure the physical, mental, spiritual, moral and social development of the child, as well as to ensure the right of children to the required standard of living.

Meanwhile, according to the legislation of the Republic of Armenia, based on the chosen form of childcare and upbringing, a discriminatory approach is enshrined in the implementation of the right of children with the same status to receive housing, which is not based on the fundamental principle of the Family code of the RA - ensuring the "best interests of the child", but also inconsistent with the constitutional prohibition of discrimination.

Բանալի բառեր – առանց ծնողական խնամքի մնացած երեխա, բնակելի տարածության իրավունք, խնամակալություն, հոգաբարձություն, խնամատար ընտանիք, խնամարկյալ, հոգեգավակ, անհրաժեշտ կենսամակարդակի իրավունք, երեխայի լավագույն շահ

Ключевые слова: *ребенок, оставшийся без попечения родителей, право на жилое помещение, опека, попечительство, приемная семья, подопечный, приемный ребенок, право на необходимый уровень жизни, наилучшие интересы ребенка*

Key words: *a child without parental care, the right to housing, guardianship, custody, foster family, fosterer, guardian, the right to an adequate standard of living, the best interest of the child*

ԿՈՌՊԵՐԱՏԻՎԻ ԱՆՂԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Արթուր Վարդանյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Կոոպերատիվի անդամի իրավական կարգավիճակը պարզելը, իրավունքների և պարտականությունների հստակ շրջանակը որոշելը կարևոր նշանակություն ունեն անդամներին ներգրավելու, գրավչությունը մեծացնելու և այդ շարժմանը զարկ տալու գործում:

Կոոպերատիվը՝ որպես իրավաբանական անձի յուրահատուկ տեսակ, իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է ֆիզիկական անձանց միջոցով, որոնք կոոպերատիվի անդամներ են համարվում: Ընդ որում, ի տարբերություն իրավաբանական անձանց մյուս տեսակների (սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերություններ), կոոպերատիվը պետք է ունենա մեկից ավելի անդամ: Տարբեր երկրներում կոոպերատիվների ստեղծման համար անհրաժեշտ անդամների նվազագույն թիվը տարբեր է և որպես կանոն տատանվում է երկուսից յոթ հոգու միջև: Աշխատանքի միջազգային կազմակերպության ուղեցույցի համաձայն՝ կոոպերատիվի ստեղծման համար անհրաժեշտ է նվազագույնը 3 անդամի առկայություն¹:

«Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կոոպերատիվը կարող է ստեղծվել առնվազն հինգ անդամի կազմով²:

Կոոպերատիվի անդամ կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք, սակայն հարկ է նկատել, որ իրավաբանական անձինք կարող են լինել միայն սպառողական (ոչ առևտրային) կոոպերատիվների անդամ, իսկ ֆիզիկական անձինք՝ և՛ սպառողական, և՛ առևտրային: Առաջին հայացքից թվում է, թե այս տարանջատումն ունի զուտ տեսական նշանակություն, սակայն հաշվի առնելով այն, որ կոոպերատիվների աշխատանքին մասնակցելը անդամի հիմնական պարտականությունն է և շահույթի բաշխման հիմնական չափորոշիչը, ուստի մեծ է նաև այս տարանջատման և օրենսդրական մակարդակում դրա հստակ ընդգծման գործնական նշանակությունը: Այնինչ շատ օրենսդիրներ, չըմբռնելով խնդրի խորությունը և վեճի գործնական նշանակությունը, օրենսդրական մակարդակում ամրագրում են, որ կոոպերատիվի անդամ կարող են դառնալ ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք: Այդպիսի մոտեցում է դրսևորվել նաև մեր հանրապետությունում. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կոոպերատիվի անդամ կարող են դառնալ իրավաբանական և տասնվեց տարին լրացած ֆիզիկական անձինք»: Օրենքը չի տարանջատում առևտրային և ոչ առևտրային կոոպերատիվները: Այնինչ, ինչպես իրավաբաններն նշում է իրավաբան-գիտնականների Ճնշող մեծամասնությունը, առևտրային կոոպերատիվներին կարող են անդամակցել միայն ֆիզիկական անձինք, իսկ իրավաբանական անձինք կարող են ունենալ միայն աֆիլացված (փոխկապակցված) կամ, ինչպես մեր Օրենքում է ամրագրված, ներդ-

¹ Տե՛ս The ILO guidelines for cooperative legislation Henry, 2012, էջ 73:

² Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.30/91(1180):

րող անդամի կարգավիճակ¹: Հարկ է նկատել, որ նման մոտեցումն իր դրսևորումն է գտել ոչ միայն տեսական գրականության մեջ, այլ օրենսդրական մակարդակում. օրինակ՝ Ռուսաստանի Ղաշնության «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքում հստակ նշվում է, որ առևտրային կոոպերատիվի անդամ կարող են լինել միայն ֆիզիկական անձինք, իսկ վերջիններիս աշխատանքային մասնակցությունը կոոպերատիվի աշխատանքներին պարտադիր է»²: Նմանատիպ մոտեցում է ամրագրվել նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների «աշխատավորների կոոպերատիվ» (workers' cooperative) մոդելում³:

Հարկ է նկատել նաև, որ ԱՊՀ երկրների՝ կոոպերատիվներին վերաբերող մոդելային օրենքի նախագիծը նախատեսում է, որ բոլոր տիպի կոոպերատիվների անդամ կարող են լինել միայն ֆիզիկական անձինք⁴, ինչի հետ, սակայն, մենք համակարծիք չենք, քանի որ ժամանակակից տնտեսական հասարակարգի պայմաններում իրավաբանական անձանց մասնակցությունը առևտրային կոոպերատիվներին ներդրող անդամի կարգավիճակով, կարող է լուրջ խթան դառնալ գյուղատնտեսական կոոպերացիան զարկ տալու և գյուղական համայնքների տնտեսական ներուժը զարգացնելու առումով:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ կարծում ենք՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը անհրաժեշտ է լրացնել նոր՝ 1.1 մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Առևտրային կոոպերատիվի անդամ կարող են դառնալ միայն ֆիզիկական անձինք: Իրավաբանական անձինք կարող են անդամակցել միայն ոչ առևտրային կոոպերատիվներին, իսկ առևտրային կոոպերատիվներում կարող են ունենալ ներդրող անդամի կարգավիճակ»:

Կոոպերատիվի հավակնորդները այդպիսի կարգավիճակ կարող են ձեռք բերել ինչպես կոոպերատիվի ստեղծման պահից, այնպես էլ դրա գործունեության ընթացքում՝ անդամագրվելու վերաբերյալ դիմում ներկայացնելով: Դիմումը քննարկվում է առաջիկա ընդհանուր ժողովի ընթացքում՝ կայացնելով համապատասխան որոշում, որի մասին դիմումատուին ծանուցվում է:

Կոոպերատիվին անդամակցելը իրավաբանական փաստ է, որի ուժով անդամի և կոոպերատիվի միջև ծագում են փոխադարձ իրավունքներ և պարտականություններ, որոնց ամբողջությունն էլ կոոպերատիվի անդամի իրավական կարգավիճակն է: Ընդ որում դրանց շրջանակը կարող է նախատեսված լինել ինչպես օրենքով, այնպես էլ կոոպերատիվի կանոնադրությամբ:

Որոշ իրավաբան-գիտնականների կարծիքով՝ կոոպերատիվի անդամակցության պարտադիր պայման է նաև փայի վճարումը⁵: Սակայն ինչպես նշում են իրա-

¹ St' u **Берсункаев Г. Э.** Правовое положение субъектов предпринимательской деятельности. Сб. науч. тр./ Отв. ред. **В. С. Бельх.** Екатеринбург, 2002. էջ 103-104; Коммерческое право: Учеб. в 2 ч. Ч. 1 / Под ред. В. Ф. Попондопуло, **В. Ф. Яковлевой.** 3-е изд., перераб. и доп. М., 2002, էջ 195 (авт. раздела—Д. В. Нефедов):

² St' u Федеральный закон "О сельскохозяйственной кооперации" от 08.12.1995 N 193-ФЗ (последняя редакция), հոդված 3, մաս 1-ին և հոդված 13, մաս 1-ին:

³ St' u **Carla Neeley Freitag,** Taxation of Cooperatives, 744 BNA Tax Management Portfolio § I (2d ed. 2008), էջ 1:

⁴ St' u Модельный закон о кооперативах и их объединениях (союзах) (принят в г. Санкт-Петербурге 06.12.1997. Постановлением 10-18 на 10-ом пленарном заседании межпарламентской асамблеи государств-участников СНГ. Постановление N 10-18 от 6 декабря 1997 года), հոդվածներ 1, 10:

⁵ St' u **Коваленко Е. И.** К вопросу об объектах права собственности колхозного двора// Уч. зап. Пермского гос. ун-та. Т. XIX. Вып. 4. Пермь, 1961, էջ 146:

վաբան գիտնականների ստվար հատվածը, անդամության հանգամանքը չի կարող պայմանավորված լինել դրանով, սակայն չվճարելը կարող է հանգեցնել մի շարք անբարենպաստ հետևանքների, այդ թվում՝ հեռացում կոոպերատիվից¹: Եվ պատահական չէ, որ իրավաբանական գրականության մեջ արտահայտվել է տեսակետ, որ անդամի հիմնական իրավունքը փայի նկատմամբ նրա իրավունքն է, որը ձեռք է բերվում այն վճարելուց հետո²: Փայի նկատմամբ անդամի իրավունքը նշանակում է փայը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հնարավորություն: Փայի արժեքը անդամի գույքային մասնակցության չափն է կոոպերատիվի ընդհանուր գույքային կազմում և յուրաքանչյուր անդամի մասնակցության թվային ցուցիչն է³: Պարտադիր փայի արժեքը պետք է հավասար լինի կոոպերատիվի բոլոր մասնակիցների համար, ինչն ամրագրված է նաև «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով: Իրավաբան-գիտնական Շերշենևիչի կարծիքով՝ «կոոպերատիվի փայը անդամին տալիս է հետևյալ իրավունքները.

1. Շահույթի և վնասների բաշխմանը մասնակցելու հնարավորություն,
2. Կոոպերատիվից դուրս գալիս կամ վերջինիս լուծարվելու դեպքում գույքի փային համարժեք գույք կամ փոխհատուցում ստանալու հնարավորություն,
3. Գործերի կառավարմանը մասնակցելու հնարավորություն»⁴:

Սակայն հարկ է նկատել, որ վերը նշվածները այն իրավունքներն են, որոնք իրացնելիս փայի արժեքը ունի նշանակալի դեր, սակայն ոչ այնպիսի իրավունքներ իրացնելիս, ինչպիսիք են կոոպերատիվի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքը, այլ անդամի փայը գնելու նախապատվության իրավունքը և այլն, քանի որ դրանց իրացման համար փայի արժեքը էական նշանակություն չունի:

Կոոպերատիվի անդամի կարգավիճակի հիմնական տարբերությունը տնտեսական ընկերությունների անդամների համեմատ դրսևորվում է առաջին հերթին աշխատանքային ակտիվ մասնակցությամբ և երկրորդ՝ կառավարման մարմիններում անդամների ակտիվ ներգրավմամբ՝ հաշվի առնելով նաև կոոպերատիվ սկզբունքները: Հենց այս տարբերակիչ հատկանիշներն են հիմք հանդիսացել, որպեսզի առանձին հեղինակներ կոոպերատիվին անդամակցելը դիտեն որպես ինքնուրույն ձեռնարկատիրական գործունեություն,⁵ ինչը, սակայն, իրավացի մոտեցում չէ, և ըստ էության հենց դրանում է դրսևորվում կոոպերատիվների տարբերությունը տնտեսական ընկերակցություններից, որոնց անդամակցել կարող են միայն առևտրային գրանցված սուբյեկտները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոոպերատիվի աշխատանքներին մասնակցությունը կոոպերատիվի անդամի հիմնական պարտականություններից է, ուս-

¹ St`u **Кекуатов К. В.** Кооперация и право. Сб. заключений юрисконсультанта Московского народного Банка / К. В. Кекуатов; Комитет о сельских судосберегательных и промышленных товариществах при Московском обществе сельского хозяйства. М.: Тип. Московского гор. дома трудолюбия и Работного дома, 1914, էջ 94:

² St`u **Тюкавкин-Плотников А. А.** Правовое положение производственного кооператива как субъекта предпринимательской деятельности. Иркутск, 2003, էջ 124:

³ St`u **Мананкова Р. П.** Правоотношение общей долевой собственности граждан по советскому законодательству / Р. П. Мананкова. Томск, Изд-во Томского ун-та, 1977, էջ 82-83:

⁴ St`u **Шершеневич Г. Ф.** Учебник торгового права (по изд. 1914 г.), М., 1994, էջ 144:

⁵ St`u, օրինակ Научно-практический комментарий к части первой Гражданского кодекса Российской Федерации для предпринимателей / Под общ. ред. **В. Д. Карповича.** 2-е изд., доп. и перераб. М., 1999, էջ 196 (авт. комментария - Е. А. Суханов):

տի կոոպերատիվին անդամակցելու ուժով անդամի և կոոպերատիվի միջև սկսվում են աշխատանքային հարաբերություններ: Որոշ հեղինակների կարծիքով՝ կոոպերատիվի և անդամի միջև աշխատանքային հարաբերություններ սկսելու համար բավարար է միայն անդամությունը կոոպերատիվին, և նրանց միջև աշխատանքային պայմանագիր չի կնքվում¹, ինչը, մեր կարծիքով՝ իրավացի է: Ըստ էության ՀՀ կոոպերատիվ օրենսդրության ուսումնասիրությամբ ևս հանգում ենք այն եզրակացության, որ մեր օրենսդիրը ևս անուղակիորեն որդեգրել է այս մոտեցումը, այն է՝ կոոպերատիվի անդամի հետ աշխատանքային պայմանագիր չի կնքվում, սակայն նրա հետ աշխատանքային հարաբերությունները ծագած են համարվում կոոպերատիվին անդամակցելու պահից: Այդպիսի եզրահանգման համար հիմք է ծառայել մասնավորապես «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը, որի համաձայն՝ կոոպերատիվի աշխատակից է համարվում այն ֆիզիկական անձը, որի հետ կոոպերատիվը կնքում է աշխատանքային պայմանագիր: Հետևաբար՝ Օրենքը տարանջատում է կոոպերատիվի անդամին կոոպերատիվի աշխատակցից, և այդ տարբերակման հիմքում դրված է աշխատանքային պայմանագիր կնքելու հանգամանքը, այնինչ կոոպերատիվի անդամի հետ՝ անդամության ուժով առաջացող աշխատանքային հարաբերությունների կարգավորումը Օրենքում տեղ չի գտել, ինչը անդամի համար հղի է մի շարք անբարենպաստ հետևանքներով, ինչպիսիք են օրինակ՝ աշխատավարձ ստանալու իրավունքը, առևտրային կոոպերատիվին անդամակցության տարիները աշխատանքային ստաժում հաշվարկելու իրավունքը և այլ խնդիրներ: Նմանատիպ խնդիրներից խուսափելու համար ստորև կանդորադառնանք կոոպերատիվի և անդամի միջև առաջացող աշխատանքային հարաբերությունների կարգավորման՝ միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցումներին՝ անելով համապատասխան առաջարկներ մեր օրենսդրությունում եղած բացերը լրացնելու նպատակով:

Նախևառաջ հարկ է նկատել, որ աշխատանքային մասնակցությունը կոոպերատիվի անդամի իրավունք-պարտականությունն է. այն իրավունք է, քանի որ թույլ է տալիս որոշել անդամի մասնաբաժինը կոոպերատիվ շահույթում ըստ մասնակցության չափի, և միաժամանակ պարտականություն է, քանի որ հնարավորություն է տալիս անդամին դուրս թողնել կոոպերատիվից այն դեպքում, երբ վերջինս չի մասնակցում կոոպերատիվի աշխատանքներին կամ իր պարտականությունները կատարում է ոչ պատշաճ²: Ինչպես արդեն նշեցինք, կոոպերատիվի աղանմի հիմնական պարտականություններից մեկը նրա մասնակցությունն է կոոպերատիվի աշխատանքներին, հետևաբար՝ որպեսզի այդ պարտականությունը լինի իրագործելի, պետք է ամրագրված լինի օրենքով: Կոոպերատիվի անդամի պարտականությունները սահմանվում են «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի 11-րդ 2-րդ մասի 2-րդ կետով, որը չի պարունակում ոչ մի նշում անդամի կողմից աշխատանքներին մասնակցելու պարտականության վերաբերյալ, փոխարենը նշված կետի «ա» ենթակետով սահմանված է, որ կոոպերատիվի անդամը պարտավոր է «մասնակցել կոոպերատիվ ներքին գործարքներին՝ սույն օրենքի և կանոնադրությամբ սահմանված դրույթների համաձայն»: Հարկ է նկատել, որ ներքին գործարքներին մասնակցությունը աշխատանքային մասնակցության դրսևորումներից է, սակայն այն բնորոշ է միայն սպառողական՝ ոչ առևտրային կոոպերատիվներին, այնինչ առևտրային կոոպերատիվներում աշխատանքային մասնակցությունը կարող է դրսևորվել, օրինակ՝ հողի մշակման, փաթեթավորման և տարաբնույթ այլ

¹ Տե՛ս <http://analitikadela.ru/subnneektyi-predprinimatelskoy-deyatelnosti/kollektivnyie-formy-predprinimatelstva/chlenstvo-v-kooperative.html>, 15. 02. 2018թ. :

² Տե՛ս նույն տեղում:

աշխատանքերում: Հավանաբար նմանատիպ թերի սահմանման պատճառը նաև այն է, որ Օրենքը առևտրային կոոպերատիվները չի տարանջատում սպառողական կոոպերատիվներից:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ առաջարկում ենք Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ կերպ.

«2) կոոպերատիվի անդամի պարտականություններն են՝

ա. Մասնակցել առևտրային կոոպերատիվների աշխատանքային գործունեությանը և սպառողական կոոպերատիվների ներքին գործարքներին՝ կոոպերատիվի կանոնադրությամբ և ընդհանուր ժողովի որոշումներով սահմանված կարգով»:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի ուսումնասիրությունը, կոոպերատիվի և անդամի միջև առաջացող աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են կոոպերատիվ օրենսդրությամբ: Այդպիսի մոտեցում է որդեգրված Ֆրանսիայում, իսկ Իսպանիայում կարգավորումը թողնված է աշխատանքային օրենսդրությանը, եթե կոոպերատիվ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ¹: ՌԴ «Արտադրական կոոպերատիվների մասին» օրենքը ևս մանրակրկիտ և բավականին ճշգրիտ կարգավորում է այդ հարաբերությունները՝ նշելով, որ կոոպերատիվի անդամի և կոոպերատիվի հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով և կոոպերատիվի կանոնադրությամբ, իսկ կոոպերատիվի և աշխատակցի հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային օրենսդրությամբ²: Հատկանշական է նաև այն փաստը, որ 2003 թվականին ԵՄ շրջանակներում ընդունվել է տրանսնացիոնալ կոոպերատիվներին վերաբերող կարգավորում (Regulation), իսկ այդպիսի կոոպերատիվների և նրա անդամների ու աշխատակիցների միջև առաջացող աշխատանքային հարաբերությունների կարգավորման համար ընդունվեց առանձին դիրեկտիվ³:

Ամփոփելով վերոգրյալը, հաշվի առնելով նաև իրավաբանական գրականության մեջ արտահայտված տեսակետերը՝ եզրահանգում ենք, որ կոոպերատիվի և անդամի միջև առաջացող աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են ոչ թե աշխատանքային, այլ կոոպերատիվների վերաբերյալ օրենսդրությամբ՝ 2 հիմնական շեշտադրումով.

- Աշխատանքային իրավունքի նորմերը տարածվում են կոոպերատիվի և անդամի այն իրավահարաբերությունների վրա, որոնք կոոպերատիվ օրենսդրությամբ կամ կոոպերատիվի ներքին իրավական ակտերով կարգավորված չեն,

- կոոպերատիվ օրենսդրությամբ նախատեսված աշխատանքային հարաբերությունները կարգավորող նորմերը չպետք է վատթարացնեն անդամի կարգավիճակը աշխատանքային օրենսդրության համեմատ. նման պահանջի չպահպանումը հանգեցնում է այդպիսի նորմերի անվավերության, և այդ հարաբերությունների վրա տարածվում են աշխատանքային իրավունքի նորմերը:

Մեր Աշխատանքային օրենսդիրքը նախատեսում է, որ աշխատանքային հարաբերությունները ծագում են բացառապես աշխատանքային պայմանագրի կամ անհատական իրավական ակտի հիման վրա (հոդված 14), ինչը, սակայն, չի արտացոլում կոոպերատիվի անդամի և կոոպերատիվի միջև առաջացող իրավահարաբե-

¹ St´u Study Group on European Cooperative Law: Draft Principles of European Cooperative Law, May-2015, էջ 23:

² St´u Федеральный закон от 08.05.1996 N 41-ФЗ (ред. от 30.11.2011) "О производственных кооперативах, հոդված 19 մաս 1-ին:

³ St´u Council Regulation (EC) No 1435/2003 of 22 July 2003 on the Statute for a European Cooperative Society(SCE), Council Directive 2003/72/EC of 22 July 2003 supplementing the Statute for a European Cooperative Society with regard to the involvement of employees:

րությունների էությունը: Ուստի հաշվի առնելով վերը թվարկված առանձնահատկությունները՝ առաջարկում ենք Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Առևտրային կոոպերատիվի և իր անդամի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են՝ հիմնադիր անդամների դեպքում՝ հիմնադրման (կոոպերատիվի գրանցման) պահից, իսկ մյուս դեպքերում՝ անդամին կոոպերատիվ ընդունելու վերաբերյալ ընդհանուր ժողովի որոշում կայացնելու պահից»:

Նշված փոփոխությամբ կոոպերատիվի անդամակցությունը կդիտվի որպես աշխատանքային հարաբերությունների ծագման ինքնուրույն հիմք, ինչը թույլ կտա կոոպերատիվի անդամին օգտվելու աշխատանքային օրենսդրությամբ՝ աշխատողների համար սահմանված երաշխիքներից, միաժամանակ լրացուցիչ խթան կհանդիսանա կոոպերատիվ շարժմանը նոր թափ հաղորդելու համար:

Սակայն հարկ է նկատել, որ, ինչպես արդարացիորեն նշում են որոշ հեղինակներ, անդամակցությունն ինքնին անդամին հնարավորությունն չի տալիս պատշաճ կատարելու իր աշխատանքային պարտականությունները, քանի որ դա անելու համար անհրաժեշտ է հստակ սահմանել աշխատանքային պարտականությունների բնույթը, կատարման վայրը, աշխատաժամանակը, վարձատրության չափը, որոնք, կարծում ենք, կարող են նախատեսվել նաև կանոնադրությամբ կամ անդամին կոոպերատիվ ընդունելու վերաբերյալ ընդհանուր ժողովի որոշմամբ:

Վերը նշվածը հաշվի առնելով և ցանկանալով ապահովել կոոպերատիվների անդամների կողմից իրենց պարտականությունների պատշաճ կատարումը, միաժամանակ նրանց կողմից աշխատանքային իրավունքների արդյունավետ իրացումը՝ առաջարկում ենք «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12.1 հոդվածով.

«12. 1 Անդամի և կոոպերատիվի աշխատանքային հարաբերությունների կարգավորումը

1. Կոոպերատիվի անդամի և առևտրային կոոպերատիվի միջև աշխատանքային հարաբերությունները սկսվում են կոոպերատիվին անդամակցելու պահից: Աշխատակցի և կոոպերատիվի միջև աշխատանքային հարաբերությունները սկսվում են աշխատանքային պայմանագրի կնքման պահից:

2. Անդամի և կոոպերատիվի աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով և կոոպերատիվ կանոնադրությամբ, ինչպես նաև ընդհանուր ժողովի որոշումներով (այդ թվում՝ անդամին կոոպերատիվ ընդունելու վերաբերյալ որոշմամբ):

3. Սույն օրենքով և կանոնադրությամբ չկարգավորված աշխատանքային հարաբերությունների նկատմամբ կիրառվում են ՀՀ Աշխատանքային օրենսգրքի նորմերը:

4. Եթե կոոպերատիվի՝ աշխատանքային հարաբերություններ կարգավորող ներքին իրավական ակտերով նախատեսված կարգավորումները վատթարացնում են անդամի իրավական վիճակը աշխատանքային օրենսդրության համեմատ, ապա կիրառվում են Աշխատանքային օրենսգրքի նորմերը:

5. Աշխատակցի և կոոպերատիվի աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով:

6. Կոոպերատիվի անդամի աշխատաժամանակի հաշվարկի, վարձատրության և կատարվող աշխատանքներին մասնակցելու կարգը սահմանվում է կոոպերատիվի կանոնադրությամբ և ընդհանուր ժողովի որոշումներով (այդ թվում՝ անդամին կոոպերատիվ ընդունելու վերաբերյալ որոշմամբ):

7. Իր աշխատանքային պարտականությունները անբարեխիղճ կատարելու համար անդամը կարող է ենթարկվել Աշխատանքային օրենսգրքով նախատեսված կարգապահական պատասխանատվության ընդհուպ կոոպերատիվից հեռացում:

8. Անդամին՝ աշխատանքային պարտականությունները անբարեխիղճ կատարելու հիմքով կոոպերատիվից հեռացնելու մասին որոշումը ընդունում է ընդհանուր ժողովը՝ անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

9. Կոոպերատիվին անդամակցելու ժամկետը հաշվարկվում է որպես անդամի աշխատանքային ստաժ:

10. Կոոպերատիվը պարտավոր է ապահովել աշխատանքի անվտանգ տեխնիկական, սանիտարական և այլ անհրաժեշտ աշխատանքային պայմաններ:

11. Կոոպերատիվի աշխատակիցների հետ կնքվում է կոլեկտիվ աշխատանքային պայմանագիր: Կոոպերատիվի աշխատակիցների թիվը չի կարող գերազանցել անդամների ընդհանուր թվի 30 %-ը: Նշված սահմանափակումը չի կիրառվում քաղաքացիական պայմանագրով աշխատանքներ կատարող անձանց և սեզոնային աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց նկատմամբ:

12. Սույն հոդվածով և կոոպերատիվի ներքին իրավական ակտերով չկարգավորված աշխատանքային հարաբերությունների նկատմամբ կիրառվում են Աշխատանքային օրենսգրքի նորմերը»:

Կոոպերատիվի անդամի կարգավիճակի հաջորդ առանձնահատկությունը այն է, որ կոոպերատիվի անդամները իրավահավասար են, որը լավագույնս դրսևորվում է «մեկ անդամ՝ մեկ ձայն» սկզբունքի կիրառմամբ, ինչը նշանակում է, որ կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ ընդհանուր ժողովում ունի մեկ ձայնի իրավունք՝ անկախ նրա տիրապետած փայի արժեքից:

Կոոպերատիվի անդամի իրավունքներից է նաև կոոպերատիվի կառավարմանը մասնակցելու իրավունքը, որը ենթադրում է կառավարման մարմիններում մասնակցելու իրավունքը, կոոպերատիվի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքը, կոոպերատիվի կառավարման մարմինների նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավունքը, որը, ի թիվս այլնի, կարող է դրսևորվել կոոպերատիվի ընդհանուր ժողովի արձանագրությունները, որոշումները պահանջելու և ստանալու, արտաքին աուդիտի իրականացում պահանջելու իրավունքների իրացմամբ (Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մաս «գ» և «ժ» կետեր): Իրավաբանական գրականության մեջ որպես կոոպերատիվի անդամի կարևոր իրավունք նշվում է նաև որոշումների բողոքարկման իրավունքը, որին, մեր կարծիքով, առավել բնութագրական է իրավունքների պաշտպանության, իրավունքների իրացման երաշխիքը: Կոոպերատիվի կառավարմանը մասնակցելու իրավունքը յուրաքանչյուր անդամ իրացնում է առաջին հերթին ընդհանուր ժողովի միջոցով, ընդ որում անդամը ունի ինչպես ընդհանուր ժողովի նիստերին մասնակցելու, այնպես էլ արտահերթ ընդհանուր ժողով նախաձեռնելու իրավունք: Սակայն հարկ է նկատել, որ արտահերթ ընդհանուր ժողով գումարելու համար անհրաժեշտ է առնվազն անդամների 1/3-ի նախաձեռնությունը (Օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ մաս), ինչը մեր կարծիքով բավականին բարձր շեմ է կոոպերատիվների համար, և ավելի ճիշտ կլիներ սահմանել 10 %-ի շեմ, ինչպես դա արվել է գերմանական օրենքում: Սակայն հարկ է ընդգծել նաև, որ նշված դրույթը բավականին հստակ և գործուն մեխանիզմներ է նախատեսում անդամների՝ արտահերթ ժողով գումարելու իրավունքն իրացնելու առումով՝ սահմանելով, որ եթե գործադիր մարմինը կամ դիտորդ խորհուրդը չի կատարում արտահերթ ժողովի գումարման համար անհրաժեշտ գործողություններ, ապա անդամները ստեղծում են ընդհանուր ժողովի նախաձեռնող խորհուրդ և ձեռնամուխ են լինում ընդհանուր ժողովի կազմակերպմանը, ինչը լրացուցիչ երաշ-

խիք է իրենց իրավունքների իրացումն ապահովելու համար: Կոոպերատիվի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքը լրացուցիչ երաշխիք է, որպեսզի անդամը հնարավորություն ունենա իրացնել կոոպերատիվի գործունեության նկատմամբ իր հսկողությունը:

Կոոպերատիվի անդամը կոոպերատիվի անդամությունից կարող է կամավոր դուրս գալ ցանկացած ժամանակ՝ գրավոր դիմում ներկայացնելով կոոպերատիվի գործադիր մարմնին՝ վարչությանը կամ նախագահին: Սակայն հաշվի առնելով այն փաստը, որ կոոպերատիվին անդամակցությունը անդամի և կոոպերատիվի միջև առաջացնում է աշխատանքային հարաբերություններ, ուստի կոոպերատիվ շահերի պաշտպանության նպատակով, կարծում ենք, կարելի է նախատեսել անդամի պարտականությունը ծանուցել կոոպերատիվին դուրս գալուց առնվազն մեկ ամիս առաջ՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ անդամի՝ կոոպերատիվից դուրս գալու ուժով կոոպերատիվի համար առաջանում են մի շարք պարտականություններ. օրինակ՝ կոոպերատիվի անդամի դուրս գալու դեպքում նրան պետք է վճարվի նրա փայի արժեքը, կամ տրվի համապատասխան գույք, ինչպես նաև կատարվեն օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ վճարներ: Կոոպերատիվից դուրս եկող անդամին փայի արժեքը վճարվում է, կամ այլ գույքը տրվում է ֆինանսական տարին ավարտվելուց և կոոպերատիվի հաշվապահական հաշվեկշիռը հաստատվելուց հետո՝ կանոնադրությամբ նախատեսված ժամկետում:

Հնարավոր են նաև դեպքեր, երբ անդամությունը դադարեցվի անդամի կամքից անկախ հանգամանքներով, ինչպիսիք են՝ կոոպերատիվից հեռացումը, կոոպերատիվի անդամ ֆիզիկական անձի մահը, կոոպերատիվի անդամ իրավաբանական անձի գործունեության դադարեցումը, կոոպերատիվի գործունեության դադարեցումը: Կոոպերատիվի անդամը կոոպերատիվի կանոնադրությամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև օրենքով և կոոպերատիվի կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերում կարող է ընդհանուր ժողովի որոշմամբ հեռացվել կոոպերատիվից: Կոոպերատիվից հեռացված անդամին վերադարձվում է իր փայը:

Կոոպերատիվի անդամի մահվան դեպքում օրենքով ժառանգ ճանաչված անձը կարող է դառնալ կոոպերատիվի անդամ, եթե այլ բան նախատեսված չէ կանոնադրությամբ: Մնացած բոլոր դեպքերում նրան է վերադարձվում կոոպերատիվի մահացած անդամի փայը, և կատարվում են օրենքով և կոոպերատիվի կանոնադրությամբ նախատեսված բոլոր վճարումները:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ ներկայումս գյուղատնտեսության առջև ծառայած խնդիրների լուծման լավագույն մոդելը կարող է լինել կոոպերատիվը, իսկ կոոպերատիվին անդամությունը կարող է դառնալ գյուղական համայնքի բնակիչների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման լավագույն միջոցը, և այդ ճանապարհին անդամների իրավական կարգավիճակի հստակ սահմանումը կարևոր նախադրյալ է, որպեսզի յուրաքանչյուրի մոտ հստակ պատկերացում լինի, թե ինչ պարտականություններ է ստանձնելու և ինչ իրավունքներ է ձեռք բերելու՝ անդամակցելով կոոպերատիվին:

ПРАВОВОЕ ПОЛОЖЕНИЕ ЧЛЕНА КООПЕРАТИВА

Արտուր Վարդանյան

Аспирант кафедры гражданской правы ЕГУ

В статье анализируется правовой статус члена кооператива. Отмечены все основные права и обязанности члена кооператива, была изучена международная практика правового статуса члена в Российской Федерации, в разных странах ЕС, а также в США. Были сделаны ряд предложений направлены на повышении конкретности прав и обязательств члена, а также на урегулировании рабочих отношений между членом и кооперативом.

ПРАВОВОЕ ПОЛОЖЕНИЕ ЧЛЕНА КООПЕРАТИВА

Արտուր Վարդանյան

Аспирант кафедры гражданского права ЕГУ

В статье анализируется правовой статус члена кооператива. Отмечены все основные права и обязанности члена кооператива, была изучена международная практика правового статуса члена кооператива в Российской Федерации, в странах ЕС, а также в США. Были сделаны предложения, направленные на повышение определенности прав и обязательств члена кооператива, а также на урегулирование рабочих отношений между членом кооператива и кооперативом.

LEGAL STATUS OF COOPERATIVE MEMBERS

Artur Vardanyan

Post-graduate student of the YSU Chair of Civil Law

The article analyzes the legal status of a cooperative member. All the essential rights and duties of members were mentioned, the practice of the Russian Federation, different countries of EU and also of the United States on their status was studied. A number of offers were made for defining rights and obligations of the cooperative member, and for regulation of labour relations between member and cooperative.

Բանալի բառեր – կոոպերատիվ, կոոպերատիվի անդամ, անդամի իրավական կարգավիճակը, անդամի աշխատանքային իրավունքները

Ключевые слова: кооператив, член кооператива, правовой статус члена кооператива, трудовые права членов кооператива

Key words: cooperative, cooperative member, legal stat of cooperative member, labor rights of a member

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԷՌԻԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կարեն Ավետիսյան

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր

Հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերով դատական վերահսկողության, այսինքն՝ վարչական գործի քննության և լուծման ընթացքում դատարանի գործողություններն իրենց ձևակերպումն են ստանում տարբեր իրավական արժևորում ունեցող ակտերում, որոնք ուղղված են դատավարական և նյութական հարաբերությունների կարգավորմանը և ըստ այդմ դրանց բովանդակությունը կազմող սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների հաստատմանը:

Վարչական դատարանը՝ որպես ազգային դատական իշխանության համակարգի բաղկացուցիչ օղակ (տես՝ ՀՀ Սահմանադրության 163-րդ հոդվածը), օժտված է արդարադատություն իրականացնելու իրավազրությանը և իր լիազորությունների շրջանակում ընդունում է կատարման համար պարտադիր բնույթի որոշումներ:

Դատական ակտերի դերակատարությունը հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման գործում իրավաբանական գրականության մեջ ուսումնասիրված թեմա է, սակայն, մեր կարծիքով, համակարգային հետազոտման դիտանկյունից առավել նպատակահարմար է խնդրո առարկայի վերլուծության հիմքում դնել դատական ակտերի դասակարգումը¹:

Վարչական դատարանների (վարչական դատարան, վերաքննիչ վարչական դատարան, վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ) կողմից լուծվող հարցերի վերաբերյալ կայացված ակտերն ունեն իշխանական (հրամայական, պարտադիր) բնույթ և օրենքով սահմանված դատավարական ձև:

Վարչական դատարանների որոշումները դատարանի (դատավորի) կողմից գրավոր ձևակերպված դատավարական ակտեր են, որոնցում արձանագրվում են հանրային իրավահարաբերություններից բխող վարչաիրավական հարցերի լուծման կապակցությամբ դատարանի (դատավորի) իշխանական դատողություններն ու եզրակացությունները:

Իրավաբանական գրականության մեջ հանգամանալից վերլուծված են դատական ակտերի էության, իրավական նշանակության հետ կապված հարցերը, սակայն այետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (այսուհետ՝ վարչական դատարան) ակտերի էության և իրավական նշանակությանը վերաբերող հարցերը լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն: Ընդ որում, այդպիսի պարզաբանման հիմքում այետք է ընկած լինի դատական ակտերի տեսակային բաժանումը, քանի որ դատական ակտերը, ըստ տեսակների, միմյանցից էականորեն տարբերվում են իրենց իրավական գործողության հատկանիշներով:

Պետք է նկատել, որ վարչական դատարանի ընդունած դատական ակտերն ուղղված են սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը՝ միաժամանակ լինելով արդարադատության իրականացման ակտեր: Բացի այդ, վարչական դատարանի դատական ակտերն ունեն հաստատողական բնույթ, քանի որ դրանով հաստատ-

¹ Մանրամասն տե՛ս **Гурово Т.В.** Источники российского права: Автореферат, Саратов 1998: Источники (формы) права: вопросы теории и истории. Материалы Всероссийской научной конференции. Сочи, 2012; **Марченко М.Н.** Источники права. М. 2005: Նույնի խնդրո *Проблемы общей теории государства и права (Право)*. Учебник, том 2, М., 2014 և այլն:

վում են իրավունքներ և պարտականություններ: Հետևապես այս տեսանկյունից կարելի է պնդել, որ դրանք նաև կարգավորիչ են, քանի որ ձևավորված իրավահարաբերությունները վիճելիից դարձնում են անվիճելի:

Այսպես, վարչական դատարանի կողմից ընդունվող դատական ակտերը սահմանված են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ վարչական դատավարության օրենսգիրք), որով, համաձայն օրենսդրի հատկորոշման, վարչական դատարանի ընդունած դատական ակտերը խմբավորվում են երկու խմբերում. առաջին խումբ ակտերը *միջանկյալ* դատական ակտերն են, իսկ երկրորդ խումբ ակտերը *գործն դատ էության լուծող* դատական ակտերն են:

Հաջորդիվ, վարչական դատարանի ընդունած դատական ակտերի հասկացությունը եզրագծող բնորոշումից հետևում է, որ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը նույնպես դատարանի (դատավորի) կողմից գրավոր ձևակերպված դատավարական ակտեր են: Բայցևայնպես, վարչական դատարանի դատական ակտերի հասկացության ձևակերպումը չպետք է սահմանափակել՝ դրանք միայն դատավարական ակտ-փաստաթուղթ համարելով կամ դատական ակտերի գրավոր ձևով ընդունվելու պահանջ-սկզբունքն առանցքային դարձնելով:

Մասնավորապես, վարչական դատարանի ընդունած դատական ակտերի բնույթի (կատարման համար պարտադիր են) հաշվառմամբ կարելի է փաստել, որ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը նաև անհատական ակտեր են, հետևապես դրանց նկատմամբ կիրառելի են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթները: Մասնավորապես, այս օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *անհատական իրավական ակտը* նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված *գրավոր* իրավական ակտն է, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց:

Համանման հայեցակարգ էր պարունակում նաև գործող վարչական դատավարության օրենսգիրքն ուժի մեջ մտնելու պահին (2014 թվականի հունվար) գործած «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 2018 թվականի ապրիլի 7-ից) 2-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ իրավական ակտը Հայաստանի Հանրապետության ժողովրդի, Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, ինչպես նաև իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների կամ հիմնարկների՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական *գրավոր* փաստաթուղթ է, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություններ, սահմանափակումներ կամ այլ կանոններ, և դրանից բխեցված՝ նույն հոդվածի 5-րդ մասը, որը հանգում էր հետևյալին. *անհատական ակտը* նույն հոդվածի առաջին մասում նշված մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունած իրավական այն ակտն է, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար, չի պարունակում իրավական նորմ և սահմանում է վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակի անհատապես նշված (նախատեսված) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ պետական կամ համայնքային հիմնարկների համար:

Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերով դատական վերահսկողության ընթացքում վարչական դատարանի ընդունած ոչ բոլոր միջանկյալ դատական ակտերն են ձևակերպվում գրավոր՝ չնայած այն իրողությանը, որ այդպիսի ակտերը նույնպես ընդունվում են որո-

շակի հարցերի լուծման կապակցությամբ, պարտադիր են դրանց հասցեատերերի համար, այսինքն՝ առաջացնում են փաստական հետևանքներ՝ միաժամանակ վերաբերելով միայն դրանում անհատապես նշված անձին կամ անձանց: Օրինակ, գրավոր չեն ձևակերպվում գործի քննությունը հետաձգելու (վարչական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդված) կամ գործի վարույթը կասեցնելու կամ գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ դատավարության մասնակցի միջնորդությունը մերժելու, վարչական դատավարությանը մասնակցող անձանց, ներկայացուցիչների և դատական նիստերին ներկա այլ անձանց նկատմամբ նախազգուշացման ձևով սանկցիա կիրառելու (վարչական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ մաս) մասին վարչական դատարանի որոշումները (միջանկյալ դատական ակտերը):

Վկայակոչվածից հետևում է, որ վարչական դատավարության օրենսգրքով վարչական դատարանի համար սահմանելով որոշակի դեպքերում բանավոր անհատական իրավական ակտ ընդունելու լիազորություն՝ օրենսդիրը որոշակիորեն շեղվել է անհատական իրավական ակտին ներկայացվող պահանջից: Բայցևայնպես, մեր համոզմամբ նշված իրողությունն ամենևին չի ստորադասեցնում վարչական դատարանի կողմից բանավոր ընդունված որոշումների նշանակությունը գրավոր դատական ակտերի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ բանավոր անհատական ակտերը նույնպես, ստանալով արձանագրային ձևակերպում, ունեն իրենց ներհատուկ իրավաբանական ուժը:

Նկատենք Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նույնպես օրենսդիրը որոշակի դեպքերի համար դատարանին օժտել է ոչ գրավոր անհատական իրավական ակտեր ընդունելու լիազորությամբ, և որոշ գիտնականներ գտնում են, որ նման մոտեցումը հետապնդում է դատավարությունն ավելորդ չձանրաբեռնելու նպատակ:

Մեր համոզմամբ նույնպես վարչական դատարանին ենթակա գործերի քննության ընթացքում վարչական դատարանին վերապահելով որոշակի հարցերով ոչ գրավոր անհատական իրավական ակտ ընդունելու իրավազորություն՝ օրենսդիրը հետապնդել է դատավարական գործընթացներն ավելորդ չձանրաբեռնելու նպատակ հաշվի առնելով, որ վարչական դատարանի կողմից ընդունվող ոչ գրավոր (բանավոր կամ արձանագրային) միջանկյալ դատական ակտերի անմիջական բողոքարկման ինստիտուտ նախատեսված չլինելու պայմաններում բացակայում է այդ ակտերն անվերապահորեն գրավոր ձևով ընդունելու (կամ կայացնելու) անհրաժեշտությունը:

Պետք է արձանագրել, որ որոշակի դեպքերում վարչական դատարանն ընդունում է նաև, փաստորեն, նորմատիվ բնույթի իրավական ակտեր: Մասնավորապես, վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ վարչական դատարանին ընդդատյա գործերի քննության արդյունքում վարչական դատարանն ընդունում է նեգատիվ բնույթի նորմատիվ ակտ՝ նշված մարմինների (դրանց պաշտոնատար անձանց) ընդունած նորմատիվ իրավական ակտը կամ դրա այս կամ այն դրույթն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող (բացի ՀՀ Սահմանադրությունում) նորմատիվ իրավական ակտերին հակասող ճանաչելու դեպքերում:

Չնայած վկայակոչված դատական ակտերը բառի ուղիղ իմաստով նորմատիվ ակտեր չեն, սակայն դրանք գործող իրավական նորմերի համակարգում իրենց գոյությունը փաստացի փոփոխություններ են մտնում: Վերացնում են ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին չհամապատասխանող նորմերը՝ դրանով փաստացի վերացնելով այն իրավունքներն ու պարտականությունները, որոնք սահմանված էին ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին չհամապատասխանող նորմատիվ իրավական ակ-

տով, և միաժամանակ դրանք համապարտադիր են, հետևապես այդ իմաստով իրենց իրավաբանական ուժով համահավասար են օրենքին:

Ամեն դեպքում պետք է արձանագրել, որ վարչական դատարանի ընդունած դատական ակտերը, լինելով նաև իրավակիրառ, քանի որ դրանց ընդունման հիմքում դրված են իրավական ակտերը, արդարադատության ակտեր են, որպիսի սկզբունքով էլ դրանք տարբերվում են այլ մարմինների կողմից կայացված ակտերից:

Անդրադառնալով վարչական դատարանի ընդունած (դատարանի կողմից կայացված) դատական ակտերի (միջանկյալ, գործն ըստ էության լուծող) իրավական նշանակությանը՝ պետք է նշել հետևյալը: Այսպես, վարչական դատարանի ընդունած միջանկյալ դատական ակտերը կարգավորում են գործի հարուցման և գործի ըստ էության լուծման միջակայքում ընկած խնդիրները՝ միաժամանակ որոշակի դեպքերում ազդարարելով ներկայացված հարցով հայցի հետագա՝ ըստ էության քննության անհնարինությունը: Մասնավորապես, հայցադիմումի ընդունումը մերժվում է վարչական դատարանի միջանկյալ դատական ակտով, որպիսի իրադրությունը ենթադրում է, որ այդ որոշումն ուժի մեջ մտնելու պայմաններում ներկայացված հայցով այլևս չի իրականացվելու գործի ըստ էության քննություն: Համանման իրողության է հանգեցնում նաև հայցադիմումը վերադարձնելու մասին վարչական դատարանի ընդունած որոշումը, եթե վերադարձված հայցադիմումը կրկին չի ներկայացվում դատարան:

Ստացվում է, որ մի դեպքում վարչական դատարանի ընդունած միջանկյալ դատական ակտերը կոչված են նպաստելու գործի ըստ էության քննությանը՝ արդարադատության իրականացման ուղեգծում օժանդակելով դրա փաստացի կայացմանը (օրինակ՝ հայցադիմումը վարույթ ընդունելու, փորձաքննություն նշանակելու, բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու, հայցի ապահովում կիրառելու, ապացույց պահանջելու, վկա ներգրավելու և այլն), մեկ այլ դեպքում՝ դրանց ընդունմամբ այլևս բացառվում է գործի հետագա քննության իրավական հնարավորությունը (նախորդիվ նկարագրված դեպքերում):

Ընդհանրապես, ցանկացած դատական ակտի ընդունումը հետապնդում է իրավական նպատակ, այսինքն՝ ուղղված է մոտակա կամ հեռակա խնդիրների կարգավորմանը: Այս տեսանկյունից հայցադիմումը վերադարձնելու կամ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին վարչական դատարանի որոշումը, փաստորեն, հետապնդում է մոտակա իրավական նպատակ, քանի որ բացառում է ոչ իրավաչափ վարույթի հարուցումը: Իսկ արդեն հայցադիմումը վարույթ ընդունելու մասին վարչական դատարանի դատական ակտը, որով, փաստորեն, թույլատրվում է իրավաչափ վարույթի հարուցում, հետապնդում է հեռակա նպատակ:

Միաժամանակ պետք է նշել, որ օրենսդիրը վարչական դատարանին վերապահել է նաև այնպիսի միջանկյալ դատական ակտ ընդունելու լիազորությամբ, որը, փաստորեն, որևէ նշանակություն չունի տվյալ գործի ըստ էության քննության համար: Մասնավորապես, եթե գործի քննության ընթացքում վարչական դատարանը պարզում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը թույլ է տվել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքների կոպիտ կամ պարբերական խախտումներ, ինչպես նաև << Սահմանադրության կամ օրենքի այլ էական խախտումներ, ապա վարչական դատարանը վճռի (այսինքն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի) հետ միաժամանակ կայացնում է լրացուցիչ որոշում (միջանկյալ դատական ակտ), որով պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի համապատասխան պաշտոնատար անձի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ վերադասի ուշադրությունն է հրավիրում դատական քննության ժամանակ ի հայտ եկած այն էական խախտումների վրա, որոնք թույլ են տրվել վարչական գործով մինչդեռ դատական վարույթի ընթացքում: Նման որոշում կարող է կայացվել նաև լիցենզավորված և արտոնագրված սուբյեկտների նկատմամբ, եթե

կոնկրետ գործով առկա ապացույցները տվել են վերջիններս («Վարչական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդված»): Նկատենք՝ վարչական դատարանի լրացուցիչ որոշումը հետապնդում է համապատասխան իրավասու մարմինների կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքների կոպիտ կամ պարբերական խախտումները բացառելու ուղղությամբ պատշաճ շրջահայացություն ձևավորելու նպատակ:

Հետևապես կարելի է պնդել, որ վարչական դատարանի կայացրած միջանկյալ դատական ակտերի իրավական նշանակությունը հանգում է երեք տարբեր կարգավորումների. մի դեպքում դրանք կոչված են օժանդակելու գործի ըստ էության քննության իրականացմանը, մեկ այլ դեպքում օբյեկտիվ իրականության մեջ դրանց առկայությունը բացառում է գործի հետագա քննության իրավական հնարավորությունը, իսկ երրորդ դեպքում դրանց իրավական նշանակությունը հանգում է ընդհանրապես ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքների կոպիտ կամ պարբերական խախտումները բացառելու ուղղությամբ համապատասխան մարմինների կողմից անհրաժեշտ վարքագիծ ձևավորելուն: Ըստ այդմ կարելի է ընդգծել, որ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերն ըստ տեսակների լինում են վարույթի պատշաճ և իրավաչափ իրականացումն ապահովող կամ կազմակերպական (թույլատրող), արգելող, զսպող:

Վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի իրավական նշանակությունը ևս որոշակիորեն հանգում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքների խախտումները վերացնելուն, ինչպես նաև այդ խախտումները բացառելու ուղղությամբ համապատասխան մարմինների կողմից անհրաժեշտ վարքագիծ ձևավորելուն: Ընդ որում, այս դեպքում դատական ակտի՝ հատկորոշված եզրահանգմամբ ընդունման հիմքում պետք է ընկած լինի բնական իրավունքի գերակայության սկզբունքը, որի պահպանումն առանցքային դերակատարություն է ստանում այդ ակտի իրավական նշանակության ձևավորման ուղեգծում՝ հաշվի առնելով, որ բնական իրավունքներն արտացոլող սկզբունքները պետք է ունենան, այսպես կոչված, գերիմպերատիվ նորմերի հատկանիշ, ինչը նշանակում է, որ իրավունքի ցանկացած դրական նորմ պետք է համապատասխանի բնական իրավունքի համընդհանուր սկզբունքներին, հակառակ դեպքում այդ նորմն իրավաբանորեն ուժ չպետք է ունենա և չպետք է իրավական հետևանքներ առաջացնի, և ըստ այդմ այդպիսի նորմը չպետք է դրվի գործն ըստ էության լուծող դատական ակտի ընդունման հիմքում¹:

Այլ կերպ ասած՝ դրական նորմերի մեկնաբանման հիմքում պետք է ընկած լինի անձի բնական իրավունքն արտացոլող սկզբունքը, որով և կարևորվում է գործն ըստ էության լուծող դատական ակտի իրավական նշանակությունը:

Ամփոփելով նախորդիվ ամրագրված ողջ դատողությունները՝ պետք է փաստել, որ վարչական դատարանի ակտերի էության ու իրավական նշանակության հիմքում պետք է դնել այդ ակտերի տեսակային նշանակությունը, քանի որ ունենալով խնդրային տարբեր ուղղվածություններ՝ այդ ակտերն իրենց գործառնությանն և ինստիտուցիոնալ դերակատարմամբ տարբերվում են միմյանցից: Հետևապես այն իրավական նշանակությունը, որը տրված է միջանկյալ դատական ակտերին, կիրառելի չէ գործն ըստ էության լուծող ակտերի նկատմամբ: Ուստի ճիշտ կլինի, որ առանձնացնենք այդ ակտերի էության ու նշանակության ընդհանուր և հատուկ բնութագրիչներ, այսինքն՝ բնութագրիչներ, որոնք վերաբերում են և՛ միջանկյալ, և՛ գործն ըստ էության լուծող դատական ակտերին, և բնութագրիչներ, որոնք վերաբերում են կա՛մ միջանկյալ, կա՛մ գործն ըստ էության լուծող դատական ակտերին:

¹ St'u Нешатаева Т. Н. Уроки судебной практики о правах человека: Европейский и российский опыт. М., Городец, 2007:

THE ESSENCE AND LEGAL SIGNIFICANCE OF JUDICIAL ACTS OF THE ADMINISTRATIVE COURT

Karen Avetisyan

*Judge of the Administrative Court
of Appeal of the Republic of Armenia*

This article is devoted to the identification of the essence and legal significance of judicial acts adopted by the administrative court in the direction of solving administrative and legal issues arising from public legal relations taking as a basis also the specific division of these acts (resolving the case on the merits and interim judicial acts).

The author, in particular, formulated the belief that, among other interim judicial acts issued by the administrative court, and, as a rule, the legal significance of judicial acts that resolve a case on the merits is reduced to identifying violations of the rights of individuals or legal entities and forming the necessary behavior of the relevant authorities to exclude these violations.

At the same time, within the framework of the article, the author emphasized that in certain cases, judicial acts of the administrative court, being individual legal acts, also have the character of a negative normative legal act.

In particular, emphasizing that judicial acts adopted by the administrative court (which entered into legal force) as a result of the proceedings to verify the legality of normative legal acts in cases subject to the administrative court, actually make changes to the system of existing legal norms the author expressed confidence that in this sense, the judicial acts indicated in their legal force are equal to the law.

As a result of the analysis carried out by the article, the author came to the conclusion that the essence and legal meaning of the acts of the administrative court should be based on the specific meaning of these acts stating that it would be correct to fix the general and special characteristics of the essence and meaning of judicial acts of the administrative court.

СУЩНОСТЬ И ПРАВОВОГО ЗНАЧЕНИЯ СУДЕБНЫХ АКТОВ АДМИНИСТРАТИВНОГО СУДА

Карен Аветисян

*Судья Апелляционного административного
суда Республики Армения*

Данная статья посвящена выявлению сущности и правового значения судебных актов, принимаемых Административным судом при разрешении административно-правовых споров, возникающих из публичных правоотношений, принимая за основу также специфическое деление этих актов (разрешение дела по существу и промежуточные судебные акты).

Автор, в частности, высказал точку зрения о том, правовое значение промежуточных судебных актов, принимаемых Административным судом, и, как

правило, судебных актов, разрешающих дело по существу, сводится к выявлению нарушений прав физических или юридических лиц и формированию необходимого поведения соответствующих органов для исключения этих нарушений.

Вместе с тем в рамках статьи автор подчеркнул, что в отдельных случаях судебные акты Административного суда, являясь индивидуальными правовыми актами, также имеют характер негативного нормативного правового акта.

В частности, подчеркнув, что судебные акты, принятые Административным судом (вступившие в законную силу) в результате производства по проверке законности нормативных правовых актов по делам, подлежащим Административному суду, фактически вносят изменения в систему действующих правовых норм, автор выразил уверенность, что в этом смысле указанные судебные акты по своей юридической силе приравниваются к закону.

В результате анализа, проведенного в статье, автор пришел к выводу, что сущность и правовое значение актов Административного суда должны основываться на конкретном значении этих актов, констатируя, что было бы правильным закрепить общие и специальные характеристики сущности и значения судебных актов Административного суда.

Բանալի բառեր – դատական ակտ, դատական ակտի բնույթ, դատական ակտի հրավական նշանակություն, դատական ակտի տեսակ, նեգատիվ նորմատիվ ակտ, դատական ակտի բնութագրիչ, միջանկյալ դատական ակտ, գործն ըստ էության լուծող դատական ակտ

Ключевые слова: судебный акт, сущность судебного акта, правовое значение судебного акта, вид судебного акта, негативный нормативный акт, характеристика судебного акта, промежуточный судебный акт, судебный акт, разрешающий дело по существу

Keywords: *judicial act, nature of judicial act, legal meaning of judicial act, type of judicial act, negative normative act, characteristics of judicial act, intermediate judicial act, judicial act resolving the case on the merits*

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆԻ ՂԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օքսանա Դիլբանդյան

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

Վարչական արդարադատությունը հանրային իշխանության մարմինների ապօրինի ակտերից ու գործողություններից անհատի իրավունքների պաշտպանության հիմնական ձևն է: Ելնելով հանրային իշխանության մարմինների ակտերի բնույթից՝ վարչական դատավարության օրենսդրությամբ պաշտպանության տարբերակված ձևեր են սահմանվել, որոնք միմյանցից էականորեն տարբերվում են ինչպես գործառույթային, այնպես էլ օբյեկտային, սուբյեկտային և ձևական նախադրյալներով: Վարչական արդարադատության գոյությունը իրավունքի գերակայության վրա հիմնված հասարակությանը ներկայացվող հիմնարար պահանջներից է, որը վկայում է պետությունում այն սկզբունքի գոյության մասին, համաձայն որի՝ պետությունը և դրա մարմինները պետք է գործեն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում¹:

Վարչատարածակային օրենսդրության նորմերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ անհատը պետք է լիարժեք հնարավորություն ունենա պաշտպանվելու հանրային իշխանության ինչպես անհատական, այնպես էլ նորմատիվ իրավական ակտերի բացասական ներգործությունից: Նորմատիվ իրավական ակտերի վիճարկումը պաշտպանության միջոց է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունվող՝ դիմողի իրավունքներին միջամտող ոչ իրավաչափ նորմատիվ իրավական ակտերից, որը հստակ նպատակ է հետապնդում չեզոքացնելու դրանց բացասական ազդեցությունը: Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը նման է անհատական զանգատի հիման վրա իրականացվող սահմանադրական արդարադատությանը, այն հիմնական, բայց ոչ միակ տարբերությամբ, որ եթե Սահմանադրական դատարանի կողմից նորմատիվ իրավական ակտերի գնահատման մասշտաբը սահմանադրական կարգավորումներն են, ապա վարչական դատավարության շրջանակներում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության գնահատումն իրականացվում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի հաշվառմամբ, բացի Սահմանադրությունից:

Ռուսաստանի Ղաշնության Գերագույն դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Նորմատիվ իրավական ակտերի, օրենսդրական պարզաբանումներ պարունակող և նորմատիվ հատկություններ պարունակող ակտերի իրավաչափության վերաբերյալ գործերով պրակտիկայի մասին» որոշման համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի, ինչպես նաև օրենսդրության պարզաբանումներ և նորմատիվ հատկություններ պարունակող ակտի (...) վիճարկումը քաղաքացիների և կազմա-

¹ St' u Handbook for Monitoring Administrative Justice, OSCE, FOLKE BERNADOTTE ACADEMY, September 2013, էջ 11:

կերպությունների իրավունքների և ազատությունների պաշտպանության անկախ միջոց է (...)¹:

Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարույթը վարչական դատարանում իրականացվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում նախատեսված նորմատիվ կանոններով, որոնք, իրավակարգավորման առանձնահատկություններից ելնելով, ամփոփված են օրենսգրքի՝ «Հատուկ վարույթներ» վերտառությունը կրող 5-րդ բաժնում²:

Այս համատեքստում հարկ ենք համարում ընդգծել այն հանգամանքը, որ հատուկ վարույթի կարգով քննվող գործերով կայացվող դատական ակտերը օժտված են տվյալ իրավահարաբերությունից բխող որոշակի առանձնահատկություններով, որոնք ունեն առանձնակի վերլուծության և քննարկման անհրաժեշտություն, քանի որ, ելնելով վիճարկման օբյեկտի բնույթից, դատարանի կողմից կայացվող դատական ակտի իրավական գործողության հատկանիշները ևս տարբերվում են: Այսպես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետևյալ գործերը՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ իրավական ակտերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1314 որոշման համաձայն՝ [ՀՀ վարչական դատավարության] օրենսգրքի ընդհանուր և հատուկ իրավակարգավորումներ նախատեսող նորմերի համակարգված վերլուծությունը վկայում է, որ հատուկ վարույթի շրջանակներում նախատեսված ընթացակարգերն օբյեկտիվորեն առանձնահատուկ են ըստ՝

- դատական վերահսկողության օբյեկտների (նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու, հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների և գործողությունների իրավաչափությունը վիճարկելու, ընտրական իրավունքի պաշտպանության, (...) ինչպես նաև դատավորների գնահատման հանձնաժողովի որոշումների վիճարկման վերաբերյալ գործեր), ... (...)

- գործն ըստ էության լուծող դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու և այդ ակտերից բխող իրավական հետևանքների և բողոքարկելիության (բողոքարկելի կամ բողոքարկման ոչ ենթակա) առանձնահատկության³:

Նորմատիվ իրավական ակտերն անվավեր չձանաչելու մասին դատարանի որոշման կատարման առանձնահատկությունները պայմանավորված են այդ դատական ակտերի բնույթով: Նորմատիվ իրավական ակտերն օրենքին հակասող ձանաչելու մասին որոշումն ունի երկակի բնույթ. այն համարվում է և՛ իրավակիրառ բնույթի ակտ, և՛ իրավաստեղծ նշանակության ակտ⁴: Ա. Լ. Բուրկովը նշել է, որ քննարկ-

¹ St`u Пленум Верховного суда Российской Федерации, Постановление о практике рассмотрения судами дел об оспаривании нормативных правовых актов и актов, содержащих разъяснения законодательства и обладающих нормативными свойствами, 25.12.2018, N 50:

² Ընդունվել է 05.12.2013 թ., ուժի մեջ է մտել 07.01.2014 թ.: St`u ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ.1186.1:

³ St`u Սահմանադրական դատարանի 11.10.2016 թվականի թիվ ՍԴՈ-1314 որոշումը:

⁴ St`u **Խանդանյան Ռ. Պ.**, Վարչական արդարադատությունը հետխորհրդային երկրներում. Կայացման և զարգացման հիմնախնդիրները, Երևան, 2012, էջ 154:

վող դատական ակտերի երկակի բնույթը դրսևորվում է նրանում, որ, բացի իրավունքի նորմերը կիրառելուց, դատարանը նաև իրավաստեղծ գործունեություն է իրականացնում՝ վերացնելով նորմատիվ ակտի վիճարկվող դրույթը: «Նետաբար՝ հանդիսանալով իրավունքի աղբյուր՝ դատական ակտն օժտված է նույնպիսի իրավաբանական ուժով, ինչ բոլոր մյուս նորմատիվ իրավական ակտերը»¹:

Իրավաստեղծ գործունեության ձև են համարվում ոչ միայն նոր իրավական ակտերի սահմանումը կամ փոփոխումը, այլև գործող իրավական նորմերի վերացումը: Այս տրամաբանությամբ էլ որոշ հեղինակներ վարչական մարմնի նորմատիվ իրավական ակտերն օրենքին հակասող և անվավեր ճանաչելու մասին դատարանի որոշումները համարում են իրավաստեղծ ակտեր, իսկ դրանց ընդունմանն ուղղված գործընթացը անվանում են «բացասական իրավաստեղծագործություն»²: Այս հայեցակարգի կողմնակիցները գտնում են, որ «բացասական իրավաստեղծագործության» սուբյեկտ են նաև վարչական դատարանները, որոնք օրենքով նախատեսված նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վերաբերյալ գործերով սահմանված հատուկ ընթացակարգով վիճարկվող նորմատիվ իրավական ակտերը հակասող են ճանաչում ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին:

Ենթ ևս կողմնակից ենք այն տեսակետին, որ վարչական դատարանները «բացասական իրավաստեղծագործության» սուբյեկտ են կամ, ինչպես տեսության մեջ նշվում է, «նեգատիվ օրենսդիր»³ են, իսկ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտերը՝ «բացասական իրավաստեղծագործության» արդյունք:

Մինևույն ժամանակ կարծում ենք, որ վարչային արդյունքում կայացվող գործն ըստ էության լուծող դատական ակտերն օժտված են նորմատիվ բնույթով: Այսպես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտ է Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտը, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար⁴: Նույն օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողության դադարեցումը այն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմինը կատարում է նույն տեսակի կամ բնույթի նորմատիվ իրավական ակտով: (...) Նշվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ վարչական դատարանը նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով, ի թիվս այլ բնույթի դատական ակտերի, ընդունում է նաև նորմատիվ որոշումներ, քանի որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա վիճարկվող դրույթն անվավեր ճանաչելու մասին գործն ըստ էության լուծող որոշումներն ունեն **նորմատիվ բնույթ**: Նշված դատական ակտերի նորմատիվության քննարկումն ուղղակիորեն պայմանավորված է նաև նորմատիվ

¹ St´u **Бурков А. Л.**, Акты судебного нормоконтроля как источник административного права, Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Тюмень, 2005, էջեր 134-135:

² St´u **Богданова Н. А.**, Конституционный суд РФ в системе Конституционного права, Вестник Конституционный суда РФ, 1997, N 3, էջ 64:

³ St´u **Tom Ginsburg & Nuno Garoupa**, "Building Reputation in Constitutional Courts: Political and Judicial Audiences," 28 Arizona Journal of International and Comparative Law 539 (2011), էջ 540: https://chicagounbound.uchicago.edu/cgi/viewcontent.cgi?article=2441&context=journal_articles

⁴ Ընդունվել է 21.03.2018 թ., ուժի մեջ է մտել 07.04.2018 թ.: St´u ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ.373:

իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերի իրավաբանական բնույթով:

Հարկ է նաև ընդգծել այն հանգամանքը, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը *նորմատիվ-իրավական բնույթով* ևս բավականաչափ նման են Սահմանադրական դատարանի որոշումներին: Այս կապակցությամբ անհրաժեշտ է ընդգծել այն փաստը, որ Սահմանադրական դատարանն իր կարգավիճակի շնորհիվ ունակ է ազդելու իրավական քաղաքականության զարգացման ուղղությունների վրա, ընդհուպ սահմանել այդ քաղաքականության իրականացման կառուցակարգերը¹: Կարծում ենք, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը ևս կարող են կանխորոշիչ նշանակություն ունենալ իրավակիրառ մարմինների գործունեության համար:

Հարկ է նշել, որ օրենսդիրը հստակ ամրագրել է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերի տեսակները: Նշված գործերով կայացվող գործն ըստ էության լուծող դատական ակտերի տեսակների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ դատարանն իրավասու է կայացնել հետևյալ երեք որոշումներից մեկը. 1) վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա վիճարկվող դրույթն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին համապատասխանող ճանաչելու մասին. 2) վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա վիճարկվող դրույթն անվավեր ճանաչելու մասին. 3) վիճարկվող՝ ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտը կամ դրա վիճարկվող դրույթը ոչ իրավաչափ ճանաչելու մասին:

Եթե նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերը համեմատենք Սահմանադրական դատարանի որոշումների հետ, ապա կտեսնենք, որ այս դատարանների կողմից կայացվող որոշումները որոշակիորեն տարբերվում են: Այս համատեքստում առանձնահատուկ ուշադրության է արժանի վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին Սահմանադրական դատարանի որոշումը: Ի տարբերություն Սահմանադրական դատարանի՝ վարչական դատարանը կարող է արձանագրել, որ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթը կամ համապատասխանում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին, կամ չի համապատասխանում դրան, սակայն այն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին որոշակի մեկնաբանությամբ համապատասխանող ճանաչելու մասին որոշում կայացնելու լիազորությամբ օժտված չէ: Այս կապակցության պետք է նշենք, որ գործնականում չեն բացառվում այն դեպքերը, երբ նորմատիվ իրավական ակտը սխալ կիրառում է ստանում իրավակիրառ մարմինների կողմից, և արատավոր պրակտիկան կրում է շարունակական բնույթ՝ հանգեցնելով անձի իրավունքների և օրինական շահերի խախտման: Այս պայմաններում վարչական դատարանը, նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը պարզելիս բացահայտելով նորմատիվ իրավական ակտի կամ դրա առանձին դրույթի համապատասխանությունը ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին, միևնույն ժամանակ նաև վարչական մարմինների կողմից նորմատիվ իրավական ակտի կամ դրա առանձին դրույթի սխալ մեկնաբանումը, զրկված է վիճարկվող նորմատիվ ակտի կամ դրա առանձին դրույթի մեկնաբանման հնարավորությունից:

¹ Տե՛ս **Ղամբարյան Ա.**, «Ն սահմանադրական դատարանի դերը դատական քաղաքականության ձևավորման ոլորտում», http://ysu.am/files/01A_Ghambaryan.pdf

Այս կապակցությամբ հարկ է նաև ընդգծել, որ ինչքան էլ պաշտպանության ենթակա շահը կրում է անձնական բնույթ, ակնհայտ է, որ նորմատիվ իրավական ակտի ընդունումը շրջափում է անորոշ շրջանակի անձանց շահերը, քանի որ կարգավորում է անորոշ շրջանակի անձանց միջև առաջացող հասարակական հարաբերությունները: Հետևաբար նորմատիվ իրավական ակտի վիճարկման վերաբերյալ գործերով, մասնավոր շահից բացի, պաշտպանության ենթակա են նաև հանրային շահերը: Հանրային շահերի պաշտպանությունից ելնելով՝ ակնհայտ է, որ նորմատիվ ակտի առանձին դրույթների սխալ մեկնաբանմամբ վարչական ակտերի ընդունման պրակտիկայի արմատավորումը նաև անորոշ շրջանակի անձանց իրավունքների խախտման վտանգ է պարունակում, ուստի նորմատիվ ակտի իրավաչափությունը ստուգելիս դրա վիճարկվող, սակայն իրավաչափ դրույթի ճիշտ կիրառման պայմանների սահմանումը պետք է համարել հիմնավորված¹:

Վերոշարադրյալը ևս վկայում է այն մասին, որ վարչական դատարանը նույնպես պետք է օժտված լինի վիճարկվող նորմատիվ ակտը կամ դրա վիճարկվող դրույթն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին վարչական դատարանի մեկնաբանությամբ համապատասխանող ճանաչելու մասին որոշման կայացման լիազորությամբ՝ ուղղորդելով իրավակիրառ մարմիններին դրսևորելու իր կողմից տրված մեկնաբանությանը համապատասխանող վարքագիծ:

Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերի բնույթը և առանձնահատկությունները բացահայտելու համար նաև անհրաժեշտ է պարզել այդ որոշումների ազդեցությունը (հետևանքը), որը կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝

- ըստ անձանց՝ «*ratione personae*».
- ըստ ժամանակի՝ «*ratione temporis*».
- ըստ առարկայական հետևանքների՝ «*ratione materiae*»²:

1. Որոշումների ազդեցությունն ըստ անձանց («*ratione personae*») դասակարգման չափանիշն այն անձանց շրջանակն է, որոնց համար պարտադիր է կայացված դատական ակտը: Գործող օրենսդրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ օրենսդիրն այս տեսակի գործերով կայացվող գործն ըստ էության լուծող որոշումների ազդեցության տեսանկյունից տարբերվող կարգավորումներ է նախատեսել՝ որպես տարբերակման չափանիշ ընդունելով դատական ակտի տեսակը, այսինքն՝ գործի ելքը: Այսպես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի դատական ակտերը պաշտոնական հրապարակման պահից Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում պարտադիր են բոլորի համար: Նշված նորմից անմիջականորեն բխում է, որ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի դատական ակտերը բոլորի համար պարտադիր են («*erga omnes effect*»), այլ կերպ ասած՝

¹ Տե՛ս Սարոյան Պ., Նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին ՀՀ վարչական դատարանի դատական ակտի նշանակությունը վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման համար, Եր., 2015, էջ 62:

² Տե՛ս Study on individual access to constitutional justice, adopted by Venice Commission at its 85th Plenary Session, Strasbourg, 27 January 2011, CDL-AD(2010)039rev., էջեր 42-53, [https://www.venice.coe.int/WebForms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)039rev-e](https://www.venice.coe.int/WebForms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)039rev-e): Իհարկե, այս դասակարգումը նշված փաստաթղթում կիրառվել է սահմանադրական դատարանի որոշումների ազդեցությունը բացահայտելու նպատակով, սակայն կարծում ենք, որ այն կիրառելի է նաև նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերի ազդեցությունը պարզելու համար:

տվյալ դեպքում բոլորի համար պարտադիր է վիճարկվող ակտի անվավերությունը: Այս որոշումների համապարտադիր բնույթը տրամաբանական է, քանի որ եթե նորմատիվ իրավական ակտը անվավեր է ճանաչվում, այն կորցնում է իր իրավաբանական ուժը՝ դուրս գալով իրավական համակարգից:

Միաժամանակ օրենսդիրն այլ կարգավորում է նախատեսել անձանց համար այն դատական ակտերի պարտադիրության հարցի կապակցությամբ, որոնցով վիճարկվող իրավական նորմը ճանաչվում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին համապատասխանող: Մասնավորապես՝ «<< վարչական դատավարության օրենսգիրքը չի սահմանել, թե ում համար են պարտադիր վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա վիճարկվող դրույթն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին համապատասխանող ճանաչելու մասին որոշումները: Այդ հարցին պատասխանում է «<< դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը, որի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են դրանց հասցեատերերի համար: Այսինքն՝ ըստ գործող օրենսդրական կարգավորումների, եթե դատարանը գտել է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտը համապատասխանում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին, ապա այդ դատական ակտը պարտադիր է լինելու միայն դատավարության մասնակիցների համար (*«inter partes effect»*):

Վերոգրյալի կապակցությամբ հարկ ենք համարում ընդգծել, որ օրենսդիրը վիճարկվող իրավական նորմն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին համապատասխանող ճանաչելու վերաբերյալ վարչական դատարանի որոշումը պարտադիր է համարում միայն դրա հասցեատերերի համար, որպիսի պայմաններում անհրաժեշտ է առաջին հերթին բացահայտել այդ դատական ակտի հասցեատերերի շրջանակը: Կարծում ենք, որ վիճարկվող իրավական նորմն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին համապատասխանող ճանաչելու վերաբերյալ վարչական դատարանի որոշման հասցեատերերն են գործին մասնակցող անձինք՝ կողմերը և երրորդ անձինք: Նման պայմաններում «<< դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը, որի 13-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով վիճարկվող իրավական նորմն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին համապատասխանող ճանաչելու վերաբերյալ վարչական դատարանի որոշումը պարտադիր է միայն դրա հասցեատերերի՝ գործին մասնակցող անձանց համար: Մինչդեռ կարծում ենք, որ մեր իրավական համարկարգում այս հարցի կապակցությամբ առկա է սխալ միտում, քանի որ նման կարգավորման պարագայում պարտադիրությունը բնորոշվում է որպես դատական ակտի անհատական գործողության հատկանիշ՝ ուղղված որոշակի շրջանակի անձանց, այնինչ դատական ակտը պարտադիր է բոլորի համար, այսինքն՝ դատական ակտի հեղինակությունը հարգելու, դրա իրավաչափությունը կասկածի տակ չդնելու պարտականությունը կրում են բոլորը և ոչ թե միայն այդ դատական ակտի հասցեատերերը: Այլ խնդիր է դատական ակտի կատարման պարտադիրությունը, որի պահանջն ուղղված է միայն դատական ակտի հասցեատերերին: Հետևաբար՝ առաջարկում ենք դատական ակտի պարտադիրությունը դիտարկել որպես անձանց անորոշ շրջանակին ուղղված իրավական գործողության հատկանիշ, իսկ դատական ակտի կատարման պարտադիրությունը՝ որպես դատական ակտի անհատական գործողության հատկանիշ, քանի որ այն ուղղված է անձանց որոշակի շրջանակի:

Միաժամանակ, պետք է առանձնահատուկ ընդգծել այն հանգամանքը, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատական ակտերի իրավական և հանրային նշանակությունը չափազանց բարձր է՝ պայմանավորված դատական վերահսկողության օբյեկտով (անորոշ թվով անձանց համար պարտադիր վարքագծի կանոններ սահմանող դրույթներ պարունակող՝ նորմատիվ իրավական ակտ), որպիսի հանգամանքը հաշվի առնելով՝ օ-

րենսդիրը սահմանել է այդ գործերի քննությունը կոլեգիալ՝ հինգ դատավորի կազմով: Քննարկվող գործերի հանրային բարձր նշանակության մասին է վկայում նաև այն հանամանքը, որ ի տարբերության վարչական դատավարության կարգով քննվող այլ գործերի, որոնց դեպքում հայցվորի (դիմողի) կողմից հայցից (դիմումից) հրաժարվելը գործի վարույթը կարճելու հիմք է, նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով նույնիսկ դիմողի կողմից դիմումից հրաժարվելու դեպքում անգամ դատարանն իրավասու է գործի վարույթը չկարճել, եթե գործի քննությունը բխում է հանրության և պետության շահերից («Վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 6-րդ մաս): Վերոգրյալի հաշվառմամբ հիմնավորված չենք համարում օրենսդրի որդեգրած այն մոտեցումը, որ վիճարկվող իրավական նորմն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին համապատասխանող ճանաչելու վերաբերյալ վարչական դատարանի որոշումը դատական ակտը պարտադիր է միայն դրա հասցեատերերի համար: Մեր կարծիքով՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործերով կայացվող գործն ըստ էության լուծող դատական ակտերը պետք է պարտադիր լինեն բոլորի համար, և այդ պարտադիրությունը չպետք է պայմանավորված լինի գործի ելքից, այսինքն՝ այն հանգամանքից, թե դատարանն ինչ եզրահանգման է գալիս վիճարկվող նորմատիվ իրավական ակտի՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին համապատասխանելու հարցի կապակցությամբ:

Միևնույն ժամանակ, իհարկե, չենք բացառում դիմողի կամ այլ անձի կողմից նույն նորմատիվ իրավական ակտի վիճարկումն այլ հիմքերով, սակայն նման պայմաններում կարծում ենք, միևնույն նորմատիվ իրավական ակտի իրավաչափության վիճարկման համար պետք է նախատեսվեն առավել բարդացված ընթացակարգեր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական դատարանն արդեն իսկ գտել է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտը համապատասխանում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին, ընդ որում, նաև դիմումում չնշված այլ՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին, բացի Սահմանադրությունից: Նման պայմաններում նշված վարույթի գործերով կայացվող դատական ակտերի կարևորությունը հստակ կընդգծվի և ավելի բարձր իրավական արժեք կունենա:

2. Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերի՝ ըստ ժամանակի (*«ratione temporis»*) ազդեցության կամ հետևանքի առանձնահատկությունն այն է, որ հենց գործն ըստ էության լուծող դատական ակտով է սահմանվում, թե նորմատիվ իրավական ակտը երբ է ուժը կորցնելու, ըստ այդմ՝ 1. նորմատիվ իրավական ակտը ուժը կարող է կորցնել այն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի դատական ակտի պաշտոնական հրապարակման պահից (*«ex nunc»*), 2. այն կարող է անվավեր ճանաչվել այդ ակտի ուժի մեջ մտնելու պահից (*«ex tunc»*), եթե նման որոշում չընդունելը կարող է ծանր հետևանքներ առաջացնել հանրության կամ պետության համար և 3. վարչական դատարանը կարող է հետաձգել իր կողմից անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի իրավաբանական ուժը կորցնելու ժամկետը, եթե համարում է, որ վարչական դատարանի որոշման ուժի մեջ մտնելու պահին այդ ակտի ուժը կորցնելն անխուսափելիորեն կառաջացնի իրավական կարգավորման այնպիսի բացեր, որոնք կխաթարեն այդ ակտի վերացմամբ տվյալ պահին հաստատվելիք իրավական անվտանգությունը:

3. Նշված գործերով կայացվող դատական ակտերի առարկայական հետևանքները (*«ratione materiae»*) կարող ենք դասակարգել երկու տեսակի՝ անհատական և ընդհանուր հետևանքներ: Անհատական հետևանքների էությունն այն է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա վիճարկվող դրույթն անվավեր ճանաչելու մասին որոշումը հիմք է վարչական ակտերի և դատական ակտերի՝ նոր հանգամանքի հիմքով վերանայման համար: Իսկ ընդհանուր բնույթի

հետևանքն այն է, որ իրավասու մարմինները պետք է առաջնորդվեն դատական ակտով և նորմատիվ իրավական ակտերում կատարեն համապատասխան փոփոխություններ: Անդրադարձ կատարելով նորմատիվ իրավական ակտերի կատարմանը՝ հարկ է նշել, որ այս ակտերի առանձնահատկությունն այն է, որ դատական ակտերի ընդհանուր կատարումը իրավաբանորեն չի վերահսկվում՝ ի տարբերություն այլ դատական ակտերի, որոնք կանոնի չկատարելու դեպքում ենթակա են հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Այսինքն՝ եթե վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա վիճարկվող դրույթն անվավեր ճանաչելու մասին որոշման պահանջները չկատարվեն, ապա դրանց կատարման իրավական մեխանիզմները բացակայում են:

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք՝

ա) վարչական դատարանին վերապահել վիճարկվող նորմատիվ ակտը կամ դրա վիճարկվող դրույթն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին՝ վարչական դատարանի մեկնաբանությամբ համապատասխանող ճանաչելու մասին որոշում կայացնելու լիազորություն,

բ) նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի կողմից կայացվող գործն ըստ էության լուծող դատական ակտերին օժտել պարտադիրության հատկանիշով՝ այն չպայմանավորելով գործի ելքով, այսինքն՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա վիճարկվող դրույթի՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին համապատասխանելու հարցի վերաբերյալ դատարանի եզրահանգմամբ:

ПРИРОДА И ОСОБЕННОСТИ СУДЕБНЫХ АКТОВ АДМИНИСТРАТИВНОГО СУДА ПО ДЕЛАМ ОБ ОСПАРИВАНИИ ЗАКОННОСТИ НОРМАТИВНЫХ ПРАВОВЫХ АКТОВ

Оксана Дилбандян

Аспирант кафедры гражданского процесса ЕГУ

Статья посвящена природе и особенностям судебных актов Административного суда РА по делам об оспаривании законности нормативных актов. В результате исследования выявлена как правоприменительная, так и правотворческая природа судебных актов административного суда по делам об оспаривании нормативных правовых актов, а также нормативная природа судебного акта о признании нормативного правового акта недействительным. Кроме того, рассматривается ряд вопросов, связанных с особенностями судебных актов по делам об оспаривании законности нормативных правовых актов, и делаются соответствующие выводы.

THE NATURE AND FEATURES OF JUDICIAL ACTS OF THE ADMINISTRATIVE COURT IN CASES OF CHALLENGING THE LEGALITY OF NORMATIVE LEGAL ACTS

Oksana Dilbandyan

Post-Graduate Student of the YSU Chair of Civil Procedure

The article is devoted to the nature and features of judicial acts of the Administrative Court of the RA in cases of challenging the legality of normative legal acts. As a result of the research, the lawmaking nature of the judicial acts of the Administrative court of the RA on cases challenging the normative legal acts, as well as the normative nature of the judicial act on invalidating the normative legal act is revealed. Furthermore, several issues related to the peculiarities of judicial acts in cases of challenging the lawfulness of normative legal acts are considered and respective conclusions are made.

Բանալի բառեր – նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկում, նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը, նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտ, վարչական դատավարություն
Ключевые слова: оспаривание законности нормативных правовых актов, судебные акты Административного суда об оспаривании законности нормативных правовых актов, судебный акт о признании нормативного правового акта недействительным, административное судопроизводство

Key words: *challenging the lawfulness of normative legal acts, judicial acts of administrative court on challenging the lawfulness of normative legal acts, judicial act on invalidating the normative legal act, administrative proceedings*

ՓՈՒՆԱԿ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՀՀ-ՈՒՄ

Նաիրա Արտաշեսյան

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

Փոխնակ մայրության ինստիտուտի կիրառման առումով ոչ միայն չեն ձևավորվել միասնական դիրքորոշումներ, այլև շատ հակասական տեսակետներ կան իրավական գրականության մեջ: Բժշկական տեսանկյունից փոխնակ մայրությունը համարվում է անպտղությունը հաղթահարելու ամենաարդյունավետ տարբերակներից մեկը: Դրա հետ մեկտեղ՝ այն վերարտադրողական տեխնոլոգիաների՝ իրավական և էթիկայի տեսանկյունից ամենավիճելի հարցն է: Կողմնակիցները կարծում են, որ փոխնակ մայրությունը հնարավորություն է տալիս հուսահատության շեմին կանգնած մարդկանց ունենալ սեփական երեխա: Հակադիր կարծիք ունեցողները համարում են, որ անտեսվում է այն կապը, որը ստեղծվում է մոր և երեխայի միջև հղիության ընթացքում:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը տվել է փոխնակ մայրության հասկացության սահմանումը. «**Պեստացիոն կրողը (փոխնակ մայրը) այն կինն է, որի մոտ հղիությունը սկսվել է երրորդ կողմին պատկանող ծվաբջջի և սպերմատոզոիդի բեղմնավորման միջոցով: Այդ կինը կրում է երեխային այն պայմանով կամ նախնական համաձայնությամբ, որ ծնված երեխայի ծնողներն են համարվելու այն անձինք, որոնց դոնորական սաղմը օգտագործվել է տվյալ բեղմնավորման համար**»:

Փոխնակ մայրությունը վերարտադրողական միջոց համարելու հարցը տարբեր երկրներում լուծվում է տարբեր կերպ: Որոշ պետություններ փոխնակ մայրությունը ճանաչում են որպես անօրինական գործունեություն, մյուսներն էլ օրենքով սահմանել են այն որպես վերարտադրողական հնարավորություն՝ հասանելի բոլորին: Հարկ է նշել, որ արտասահմանյան երկրների մեծամասնությունը փոխնակ մայրությունը արգելում կամ սահմանափակում է: Սա հաստատում է այն փաստը, որ 2005 թ. դեկտեմբերի 16-ին տեղի ունեցած Եվրոպական խորհրդի կոմիտեի՝ սոցիալական խնդիրների շրջանակներում փոխնակ մայրության բանաձևի հաստատումը մերժվեց խորհրդի անդամների մեծամասնության կողմից¹:

Փոխնակ մոր իրավական հարաբերությունների տեսակետից կարելի է առանձնացնել երկրների 3 տեսակ.

1. Երկրներ, որտեղ փոխնակ մայրությունը թույլատրվում է օրենքով (Անգլիա, ԱՄՆ, Կորեա, Ուկրաինա, Ղազախստան և այլն),

2. Երկրներ, որտեղ փոխնակ մայրությունն արգելված է օրենքով (Հոլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Սկանդինավյան երկրներ),

3. Երկրներ, որոնք չեն արգելում, սակայն որևէ կերպ չեն կանոնակարգում փոխնակ մայրության հարցը (Լատինական Ամերիկա, Ասիա, Բելգիա, Հունաստան, Իսպանիա, Ֆինլանդիա)²:

¹ По материалам Постановления Европейского суда по правам человека от 10 апреля 2007 г. по делу № 6339/05 // КонсультантПлюс: справочная правовая система / разработ. НПО «Вычисл. математика и информатика». - М.: КонсультантПлюс, 1997 - 2013. - Режим доступа: <http://www.consultant.ru>. - 02.04.2013:

² St' u **Козловская, А. Э.**, Правовые аспекты суррогатного материнства / А. Э. Козловская // Гражданское право., 2006. , № 2, էջ 27:

ՀՀ-ն դասվում է այն երկրների շարքին, որտեղ օրենքով թույլատրվում է փոխնակ մայրությունը, սակայն տարանջատում չկա փոխնակ մայրության տեսակների մասին (ավանդական և գեստացիոն), որոնք գրեթե բոլոր երկրներում, որտեղ թույլատրվում է փոխնակ մայրությունը, տարանջված են: Փոխնակ մայրության վերաբերյալ հիմնական իրավական ակտը 2002 թ.-ին ընդունված «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքն է (այսուհետ նաև՝ Օրենք), որով կարգավորվում են փոխնակ մայրությանը վերաբերող հարցերը և փոխնակ մայրերին ներկայացվող պահանջները:

Օրենքի 2-րդ հոդվածի 8-րդ կետը սահմանում է փոխնակ մոր հասկացությունը. «8) *փոխնակ (սուրոգատ) մայր՝ դոնորական սաղմը իր արգանդում կրած կին, որից ծնված երեխան չի կրում նրա գենոտիպը...*»: Նույն օրենքի 15-րդ հոդվածի համաձայն. «1. Փոխնակ մայր լինելու իրավունք ունեն նախկինում *առնվազն մեկ անգամ ծննդաբերած 20-35 տարեկան այն կանայք, ովքեր սահմանված կարգով ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության, որի արդյունքում չեն հայտնաբերվել փոխնակ մայր լինելու հակացուցումներ:*

2. Փոխնակ մայր լինելու իրավունք ունեն նաև վերարտադրողական տարիքի (նախկինում առնվազն մեկ անգամ ծննդաբերած 20 տարեկանից սկսած) այն կանայք, ովքեր ցանկանում են կրել հարազատների կողմից տրամադրված սաղմով հղիությունը, ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության, որի արդյունքում չեն հայտնաբերվել փոխնակ մայր լինելու հակացուցումներ:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող կինը կարող է փոխնակ մայր *լինել ամուսնու համաձայնությամբ*»: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձանց և փոխնակ մոր միջև փոխհարաբերությունները կարգավորվում են *գրավոր պայմանագրերով, որոնք ենթակա են նոտարական վավերացման*»:

Օրենքը սահմանում է փոխնակ մորը վերաբերող մի շարք պահանջներ, մասնավորապես՝ տարիքի վերին և ներքին շեմ, առողջական վիճակ: Այս շարքում, սակայն, սահմանված չէ երեխային հանձնելու փոխնակ մոր հոգեբանական պատրաստվածության խնդիրը: Նախագծի հեղինակները այս հարցի մասին նշել են, որ որպես փոխնակ մայր հանդես եկող կինը առնվազն մեկ անգամ արդեն իսկ պետք է ծննդաբերած լինի, ինչը հնարավորություն կստեղծի ապագա փոխնակ մորը գնահատելու երեխային հանձնելու հոգեբանական իր պատրաստվածությունը: Կարծում ենք, որ վերոնշյալ կարգավորումը փոխնակ մոր հոգեբանական պատրաստվածության խնդիրը բոլորովին չի լուծում. քանի որ օրենքը սահմանում է, որ փոխնակ մայր լինելու իրավունք ունեն նախկինում առնվազն մեկ անգամ ծննդաբերած կանայք: Սա մի՞թե նշանակում է, որ անձը հաղթահարում է հոգեբանական պատրաստվածության խնդիրը և հետո երեխային կենսաբանական ծնողներին հանձնելու տեսանկյունից: Կարծում ենք, որ ոչ: Սա, ըստ էության, հղիության և ծննդաբերության հոգեբանական պատրաստվածության խնդիրն է լուծում:

Օրենքը սահմանում է պայմանագրի կնքման պարտադիր իմպերատիվ պահանջ, այն է՝ գրավոր ձևակերպում և նոտարական վավերացում: Օրենքի ձևակերպումից կարելի է ենթադրել, որ օրենքով սահմանված կարգով ամուսնության մեջ գտնվող կնոջ համար իմպերատիվ պահանջ է նաև ամուսնու համաձայնությունը (ենթադրվում է՝ գրավոր): Սակայն այստեղ անհասկանալի է մնում նաև այն հարցը, թե ինչ տեսակի պայմանագիր է կնքվում կողմերի միջև, կամ ընդհանրապես՝ ովքեր են պայմանագրի կողմերը: Օրենքը չի պատասխանում այն հարցին, թե ում միջև է կնքվում փոխնակ մայրության պայմանագիրը. պատվիրատու ծնողների՞ և փոխնակ մոր, թե՞ նաև այն բժշկական հաստատության, որը մատուցում է բշկական

ծառայությունները, պայմանագիրը եռակողմ է, թե՛ կնքվում են առանձին պայմանագրեր: Նաև չկա մանրամասն իրավական կարգավորում կողմերի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Փոխնակ մայրության պայմանագրի վերաբերյալ շատ հարցեր դուրս են մնում իրավական կարգավորումից: Չնայած այն հանգամանքին, որ փոխնակ մոր և նրան դիմած անձերի համաձայնության էությունը ակնհայտ է, նրանց փոխհարաբերությունների բնույթը չի բացահայտվում: Ոչ մի տեղ չի պարզաբանվում փոխնակ մայրության պայմանագրի իրավական նկարագրությունը, դրա հիմնական պայմանների, կողմերի իրավական կարգավիճակի և նրանց նկատմամբ ներկայացված պահանջների վերաբերյալ որևէ վստահություն չկա: Որոշ գիտնականներ, օրինակ՝ Օ.Յու. Կոսովան, կարծում են, որ վերոհիշյալ մայրության պայմանագիրը պետք է դասակարգվի որպես իրենից արժեք չներկայացնող գործարք, քանի որ այն խախտում է բարոյականության և օրենքի սկզբունքներ¹: Այլ գիտնականներ, օրինակ՝ Ժուկովը, պնդում է, որ փոխնակ մայրության պայմանագիրը չի կարող վերագրվել քաղաքացիաիրավական պայմանագրերի թվին: Հետևաբար՝ փոխնակ մայրության պայմանագրերի վերաբերյալ քաղաքացիական օրենսդրության կիրառումը անհնար է, քանի որ երեխայի փոխանցումը փոխնակ մոր կողմից չի կարող պայմանագրի առարկա լինել. և երեխան չի կարող դառնալ գործարքի առարկա²:

Եթե կողմերը կնքեն առուվաճառքի պայմանագիր, հարց է առաջանում, թե որն է հատուցելի գործարքի առարկան՝ երեխա՞ն, թե՛ սաղմը: Այստեղից էլ մեկ այլ հարց է առաջանում՝ սաղմը, պտուղը կամ ձևավորվող էակը կարո՞ղ է գործարքի առարկա դառնալ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ առուվաճառքի առարկան գույքն է, ապրանքը: Փաստորեն ստացվում է, եթե կողմերը կնքում են առուվաճառքի պայմանագիր, ապա ձևավորվող երեխան, պտուղը կամ սաղմը դիտարկվում է որպես ապրանք: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 133-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումից բխում է, որ քաղաքացիական իրավունքների օբյեկտների տեսակները, որոնց շրջանառության մեջ գտնվելը չի թույլատրվում (շրջանառությունից հանված օբյեկտներ), պետք է ուղղակի նշված լինեն օրենքում: Սաղմի՝ շրջանառությունից հանված լինելու մասին որևէ նշում չկա, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով սաղմը կարող է լինել շրջանառության մեջ գտնվող քաղաքացիական իրավունքի օբյեկտ: Այսինքն՝ եթե գործարքի առարկա դիտարկենք սաղմը՝ որպես ապրանք, գույք, ապա հարցը լիովին կարելի է դիտարկել քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ սույն դեպքում լիովին անտեսվում են ապագա երեխայի շահերը, քանի որ դրանք որևէ կերպ չեն շոշափվում:

Ամփոփելով այս առնչությամբ մեր դիտարկումները՝ առաջարկում ենք հարցի լուծման հետևյալ տարբերակները.

1. *Առաջնահերթ պետք է հստակ սահմանվի, թե ինչ պայանագիր է կնքվում այս պարագայում, կարծում ենք, որ պետք է կնքվի փոխնակ մայրության պայմանագիր՝ որպես պայմանագրի առանձին տեսակ, և այս դեպքում քաղաքացիական օրենսգրքի որևէ պայմանագրի դրույթները կիրառելի չեն նշված հարաբերությունների նկատմամբ:*

2. *Կարծում ենք, որ փոխնակ մոր միջոցով երեխա կարող են ունենալ բացառապես այն անուսնական գույզերը, որոնք ունեն ժառանգական որևէ խնդիր, որը*

¹ Տե՛ս Օ.Յու. Կոսովա, Фактические браки и семейное право, էջ 23

² Տե՛ս Жуков Б.Н., О некоторых вопросах установления отцовства в добровольном порядке, не урегулированных действующим законодательством // Семейное право. 2004. № 2.:

կարող է անցել երեխային, կամ այնպիսի հիվանդություն, որը անհնարին է դարձնում հղիությունը (արգանդի բացակայություն, սիրտ-անոթային խնդիրներ և այլն), և որը պետք է հավաստվի համապատասխան բժշկական փաստաթղթերով: Հակառակ պարագայում հնարավոր են դեպքեր, երբ փոխնակ մոր միջոցով երեխա ունենալը դառնա ինքնանպատակ որոշ գույգերի մոտ, օրինակ՝ ծննդաբերական ցավերից խուսափելու նպատակով:

3. Նաև օրենսդրորեն պետք է հստակեցվի այն նորմը, համաձայն որի՝ օրենքով սահմանված կարգով ամուսնության մեջ գտնվող կինը կարող է փոխնակ մայր լինել ամուսնու համաձայնությամբ: Կարծում ենք՝ պիտի սահմանվի ամուսնու գրավոր համաձայնությամբ, որը նույնպես պետք է վավերացվի նոտարի կողմից:

4. Քանի որ փոխնակ մայրության պայմանագիրը բավականին ռիսկային է, և պետությունը պիտի պաշտպանի առավելապես նոր ծնվող երեխայի շահերը, հետևաբար անհրաժեշտություն է առաջանում փոխնակ մայրության պայմանագրի կնքման նկատմամբ վերահսկողություն իրականացնել՝ ի դեմս խնամակալության և հոգաբարձության խորհրդի՝ սահմանելով պայմանագրի կնքման համար նախնական համաձայնության պարտադիր կարգ:

НЕКОТОРИЕ ПРОБЛЕМЫ В СФЕРЕ ИНСТИТУТА ПРИМЕНЕНИЯ СУРРОГАТНОГО МАТЕРИНСТВА В РА

Наира Арташесян

Аспирант кафедры гражданского процесса ЕГУ

В статье рассмотрены вопросы правового регулирования проблем института суррогатного материнства. В настоящее время заключается большое число контрактов о суррогатном материнстве, не имея представления об их правовой сути и последствиях. На практике в контракте о суррогатном материнстве никто из сторон не защищен в юридическом плане. Не ясно, должен ли подписывать контракт соответствующее медицинское учреждение? Существует ли государственный орган, который контролирует подписание этих контрактов? На данном этапе никто не несет ответственность за подписание этих контрактов, что является актуальной проблемой.

Этим и некоторым другим вопросам посвящена данная статья, в которой анализируется применяемое национальное законодательство, а также законодательство зарубежных стран.

SOME PROBLEMS CONCERNING THE IMPLEMENTATION OF THE SURROGATE MATERNITY IN THE REPUBLIC OF ARMENIA

Naira Artashesyan

Post-Graduate Student at the YSU Chair of Civil Procedure

In this paper we have presented the deficiencies and problems of the legal regulation of the maternity institution. Today, many contracts of surrogate maternity are concluded in practice without the understanding of its legal significance and consequences. The law has a very broad definition about this important issue, since practically no part of the contract of maternity is legally protected. Generally, the question is whether the medical establishment should treat biological parents with whom it has contracted, or should there be any limitations in the case, whether there is any state body that oversees the signing of these contracts? Today, no one is responsible for the conclusion of these contracts, which is an urgent problem as this area is too risky, and first of all the state should think about protection of interests of the newly born child because very often the child can become a buying and selling subject, which is inadmissible from the moral viewpoint.

We have tried to answer all the questions in the context of this scientific article from the legal point of view by analyzing the domestic and international legislations.

Բանալի բառեր – փոխնակություն, փոխնակ մայրության պայմանագիր, վերարտադրողական իրավունք, սաղմ, երեխայի իրավունքներ, գենետիկական դոնոր

Ключевые слова: суррогатство, контракт суррогатного материнства, репродуктивное право, эмбрион, право детей, генетический донор

Key words: surrogate, maternity treaty, reproductive rights, embryo, child rights, genetic donor

ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆ ՈՐՊԵՍ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ- ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑ

Գևորգ Վիրաբյան

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դասախոս

Իրավաբանական գրականության ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրելու, որ մինչ օրս իրավական կանխավարկածների ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգի մշակման կարևորագույն հարցերից մեկի, այն է՝ կանխավարկածի էության շուրջ առկա են տարատեսակ մոտեցումներ¹: Սույն հոդվածի շրջանակներում մեր խնդիրն է կանխավարկածը դիտարկել երկու մակարդակներում՝ գոյաբանական և իմացաբանական, որն ունի տեսագործական կարևոր նշանակություն և ուղղված է կանխավարկածի՝ որպես փիլիսոփայական-իմացաբանական միջոցի էության բացահայտմանը:

Իրավունքում կանխավարկածի փիլիսոփայական բնույթի ուսումնասիրությունը բխում է տվյալ ոլորտում իրականացված գիտական հետազոտությունների մակարդակից: Ընդ որում կանխավարկածի էության հետազոտությունը պետք է իրականացնել գիտական ճանաչողության հիմնահարցերի ժամանակակից մեկնաբանման տեսանկյունից, որն ունակ կլինի բացահայտելու և վեր հանելու օբյեկտիվ օրինաչափությունները, հասկանալու վերջիններիս էությունը և այդ ամենի հենքի վրա իրավական կանխավարկածների վերաբերյալ ձեռք բերելու օբյեկտիվ առումով նոր ճշմարիտ գիտելիքներ, որոնք կլինեն ինչպես օգտակար, այնպես էլ պիտանի:

Դեռևս հռոմեական իրավունքից հայտնի «կանխավարկած» եզրույթը կիրառվել է տարբեր առումներով: Մասնավորապես, Ֆ.Ս. Դիդինսկին, վերլուծելով հռոմեական իրավունքի աղբյուրները, արձանագրել է, որ «կանխավարկած» ասելով հասկանում ենք «յուրացում», «նախապատվություն»²: ժամանակի ընթացքում ի հայտ են եկել կանխավարկածի այսպես կոչված հատուկ հասկացություններ, ինչպիսիք են, օրինակ՝ կանխավարկածը հավանական նախադրյալների վրա հիմնված ենթադրություն է³ կա՛մ հավանականության վրա հիմնված ենթադրություն է⁴, ենթադրություն, որը ճշմարիտ է այնքան ժամանակ, քանի դեռ վերջինիս ճշմարտացիությունը չի հերքվել⁵, կա՛մ ենթադրություն է, որն իրավաբանական փաստը համարում է արժանահավատ, քանի դեռ հակառակը չի ապացուցվել⁶, կա՛մ ապացուցված փաստերի հիման վրա այլ փաստերի, դրույթների կամ իրավունքի սուբյեկտի առկայության մասին կատարվող հետևություն է⁷:

¹ Տե՛ս **Баранов В.М., Першин В.Б., Першина И.В.**, Методологические предпосылки формирования теории правовых презумпций // Методологические проблемы юридической техники. Юридическая техника. 2008, № 2, էջ 23:

² Տե՛ս **Дыдынский Ф.М.**, Латинско-русский словарь к источникам римского права. Изд. тип. К. Ковалевского, Варшава, 1896, էջ 354, **Дворецкий И.Х., Корольков Д.Н.**, Латинско-русский словарь. М.: Изд. Госиздат, 1949, էջ էջ 697:

³ Տե՛ս Толковый словарь русского языка. Под ред. Д.Н. Ушакова. Т III. М.: Изд. Гос. ин-т «Сов. энцикл.», 1939, էջ 735:

⁴ Տե՛ս **Հայրապետյան Ա. Պ.**, Օտար բառերի բառարան (2-րդ վերամշակված հրատարակություն). Եր., 2011, էջ 451:

⁵ Տե՛ս **Борисов А.Б.**, Большой юридический словарь. М.: Изд. Книжный мир, 2010, էջ 576:

⁶ Տե՛ս Словарь иностранных слов. 16-е изд., М.: Изд. Русский язык, 1988, էջ 406:

⁷ Տե՛ս Юридический словарь. 2-е изд. Т 2 / под ред. П.И. Кудрявцева. М., Изд. Наука, 1956, էջ 222:

Եթե ասվածին ավելացնենք այն իրողությունը, որ «կանխավարկած» եզրույթը կիրառվում է նաև լեզվաբանության¹, կենսաբանության² և այլ գիտությունների շրջանակներում³, ապա կարող ենք արձանագրել, որ կանխավարկածների շուրջ հետազոտությունների իրականացումը միանգամայն օրինաչափ է «որպես փիլիսոփայական-ինացաբանական միջոցի» տեսանկյունից: Այժմ առավել առարկայա-կան:

Մեզ համար մեկնակետ է այն, որ գոյաբանական առումով կանխավարկածը ձևավորվում է շրջապատող աշխարհի երևույթների, փաստերի, գործընթացների, իրադարձությունների, գործողությունների⁴, վերջիններիս ու նրանց միջև առկա օրինաչափությունների նկատմամբ սուբյեկտի համոզմունքների, հավատքի, պատկերացումների, գաղափարների հիման վրա և պայմանավորված է այդ առարկաները, վերջիններիս ու նրանց միջև առկա օրինաչափությունները տեսնելու անհրաժեշտությամբ, ինչը թույլ է տալիս պնդելու, որ արդեն ճանաչողական գործունեության մեջ կանխավարկածը կատարում է իմացաբանական դեր: Մասնավորապես, եթե առաջնորդվում ենք այն գաղափարով, որ ավանդույթների առաջացման հիմքում ընկած փորձի կարծրատիպը մարդկային մտածողության համար ունեցել և ունի վճռորոշ նշանակություն⁵, իսկ մարդկային գիտակցությանը բնորոշ աշխարհընկալման սիմվոլիզմը պայմանավորված է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առարկաների կամ նրանց օրինաչափությունների դրսևորումը տեսնելու ցանկությամբ⁶, ապա կարող ենք արձանագրել, որ աշխարհընկալման հիմքում ընկած համոզմունքների, հավատքի, պատկերացումների, գաղափարների համակարգը մի կողմից ձևավորում, իսկ մյուս կողմից արդեն արտացոլվում է ձևավորած իմացաբանական միջոցներով, որոնք ժամանակի ընթացքում ներկայացվում են նաև իրավական հասկացությունների կամ կատեգորիաների տեսքով և ծանրակշիռ նշանակություն են ունենում հասարակական հարաբերությունների համար: Աշխարհընկալման շրջանակներում, այն է՝ իմացաբանական մակարդակում այդ համակարգի մարմնավորման և արտացոլման միջոցներից մեկն էլ վերջինիս (համակարգի) հիման վրա ձևավորված կանխավարկածն է՝ որպես կանխադրույթ, որի օգնությամբ հնարավոր է դառնում շրջապատող իրականության մեջ տեսնելու և մտածելու առարկաների, վերջիններիս ու նրանց միջև առկա օրինաչափությունների մասին: Այլ կերպ ասած՝ իմացաբանական առումով կանխավարկածն աշխարհընկալման ձևավորման և դրսևորման համար ունենում է չափազանց կարևոր նշանակություն: Ի՞նչ է սա ենթադրում:

¹ Տե՛ս օրինակ **Падучева А.С.**, Высказывание и его соотнесенность с действительностью: предпочтительные аспекты семантики местоимений. 5-е изд, испр. М.: Изд. ЛКИ, 2010, էջ 296, **Серопян А.С.**, Презумпция православной семантики в интерпретации текстов русской словесности // Вестник Московского государственного областного университета. Сер. Русская филология. 2010, № 5, էջ 81-84:

² Տե՛ս օրինակ **Павлинов И.Я.**, О значении презумпций в филогенетике: по поводу статьи Ю.А. Песенко «Филогенетические презумпции ...», 2005 г. Журн. общ. биологии. Т. 66, № 2, էջ 436-411:

³ Տե՛ս օրինակ **Смирнова Н.М.**, Кантианские презумпции феноменологического конструктивизма. «Эпистемология & философия науки». 2008 Т. XVI, № 2, էջ 33-49:

⁴ Առաջարկում ենք այսուհետ բոլորը՝ պայմանականորեն անվանել «առարկաներ»:

⁵ Տե՛ս **Байбурин А.К.**, Ритуал в системе знаковых средств культуры // Этнознаковые функции культуры. М.: Изд. Наука, 1991, էջ 23:

⁶ Մոդերնիստական ուղղություն 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի արվեստի ու գրականության մեջ, որն իր գեղարվեստական սկզբունքն էր համարում սիմվոլների, խորհրդանշանների միջոցով առարկաների ու երևույթների անձանաչելի էության պատկերումը: Տե՛ս **Հայրապետյան Ա.Պ.**, Օտար բառերի բառարան, 2011, էջ 510:

Աշխարհայացքն ամբողջություն է, որում ներառվում են մարդկանց հիմնական կենսական մոտեցումները, համոզմունքները, հավատքը, գաղափարները, գործունեության և ճանաչողության սկզբունքները, արժեքային կողմնորոշիչները¹: Վերջիններս հոգևոր-պրակտիկ գործունեության ընթացքում ձևավորվում են սուբյեկտիվ փորձի և օբյեկտիվ առումով սոցիալ-պատմական գործոնների ազդեցության ներքո: Հետևաբար, աշխարհայացքի ձևավորումը ոչ թե պարզապես աշխարհի մեխանիկական ընկալման արդյունք է, այլ այնպիսի ամբողջություն, որին իր բանականությամբ, զգացմունքներով, կամքով, ունակություններով և փորձով մասնակցում է մարդը: Հավատքը, երազանքները, հույսը, գաղափարները, անցյալի ու ապագայի նկատմամբ պատկերացումներն աշխարհի ընկալումն են, ճշմարտության, բարության և գեղեցկության տեսանկյունից աշխարհի վերափոխումն են²: Աշխարհայացքը չի կարող բխել աշխարհի և մարդկության գոյության համակարգային արժեքների վերաբերյալ որոշակի հավանական դատողություններ արձանագրող պարզունակ գիտելիքների համադրումից: Վերջինիս ակունքներն ավելի խորն են: Աշխարհայացքի բովանդակությունն են կազմում հոգևոր և մտավոր կառուցվածքները, որոնք կարելի է դիտարկել որպես աշխարհի վերաբերյալ արժանահավատ պատկերացումների դրսևորումներ: Վերջինիս (աշխարհայացքի) որպես առօրյա-գործնական և հոգևոր-ճանաչողական գործունեությունը տարբերակող միասնության ձևավորումը տեղի է ունենում անձի կողմից շրջապատող իրականության ընկալման միջոցով: Իսկ այդ ընկալումն ինքնին ենթադրում է ինչ-որ իմացաբանական միջոցի առկայության անհրաժեշտություն:

Օրինակ՝ Օ.Ֆ. Սմագնովան նշում է, որ միջը կենսական է հենց այն պատճառով, որ այն հասցեագրված է անհատականությանը, նրա կամքին և զգացմունքին, կյանքի ձևին և մտածողության ոճին (*մոդելին - ընդ. մերն է*)³: Եությունն այն է, որ գիտակցության կրողը մարդն է, որը բնորոշ է պատմական բոլոր ժամանակներին: Մարդու համար մեկնության տեսքով ճանաչումն անհնար է, եթե վերջինս իրեն չի հակադրում շրջապատող աշխարհին⁴: Ճանաչողությունը, ըստ էության, մեկուսացված չի կարող լինել առօրյա գործունեությունից. այս կամ այն երևույթի վերաբերյալ գիտելիքը չի կարող ձեռք բերվել անուղղակի կերպով: Երևույթի վերաբերյալ գիտելիքն իր ամբողջության մեջ հնարավոր է ձեռք բերել ոչ թե ուշադրությունը օբյեկտի (երևույթ), այլ վերջինիս գործառնությունների վրա սևեռելու միջոցով⁵:

Վ. Տ. Չոնովը կարծում է, որ անձի աշխարհայացքի բովանդակությունը ոչ թե գիտելիքն է որպես այդպիսին, այլ համոզմունքները՝ վերջիններս բնութագրելով որպես [...] կանխադրույթներ⁶: «Համոզմունքը,- գրում է հեղինակը,- հոգեբանական կանխադրույթի հատուկ տեսակ է, որն արձանագրում է գիտակցության որոշակի առարկաներ, որոնք ունեն ներքին կարգավորիչ սկզբունքների և անձի ինքնորոշման ու ինքնակենսագործման կողմնորոշիչների բնույթ»⁷:

Ինչ խոսք, համոզմունքները, պատկերացումները, հավատքը, գաղափարներն աշխարհի էության, մարդկային գոյության իմաստի և նպատակի վերաբերյալ

¹ Ст'у Большая советская энциклопедия / гл. ред. А.М. Прохоров. Т. 16. М.: Изд. Советская энциклопедия, 1974, էջ 320:

² Ст'у **Зонов В.Т.**, Знание и убеждение в структуре мировоззрения личности // Природа мировоззрения

и практические аспекты его формирования. Томск: Изд. ТГУ, 1990, էջ 19:

³ Ст'у **Смазнова О.Ф.**, Личность и миф (о субъекте мифической речи) // Вопросы философии. 2008, № 6, էջ 60:

⁴ Ст'у **Лосева И.Н.**, Миф и религия в отношении к рациональному познанию // Вопросы философии. 1992, № 7, էջ 64:

⁵ Ст'у **Лосева И.Н.**, նշված աշխատությունը, էջ 69:

⁶ Ст'у **Зонов В.Т.**, նշված աշխատությունը, էջ 21:

⁷ Ст'у նույն տեղում, էջ 22:

դրույթների համակարգ են, աշխարհի վերաբերյալ իմացաբանական վերաբերմունք արտահայտող անհատի որոշակի ելակետային կարգավիճակ: Վերջիններս ձևավորվում են ինչպես նպատակաուղղված ճանաչողական գործունեության միջոցով, այնպես էլ ինքնաբերաբար՝ ի հաշիվ անհատի կամքի ու գիտակցության, և հնարավորություն են տալիս մարդուն ձևավորելու աշխարհայացք և ընկալելու շրջապատող իրականությունը: Սակայն երբեմն շրջապատող իրականությունն անմիջականորեն տեսնելու և ընկալելու անհնարինությունը և միևնույն ժամանակ այդ իրականության մեջ գոյություն ունեցող առարկանները և վերջիններիս օրինաչափությունները տեսնելու (ճանաչելու) անհրաժեշտությունը պայմանավորում են կանխադրույթների գոյությունը, որոնք ձևավորվում են այդ համակարգում առկա դրույթների հիման վրա: Սակայն պետք է նկատի ունենալ, որ կանխադրույթների հիմքում ընկած գիտական գիտելիքներին նախորդում են առարկաների, վերջիններիս ու նրանց միջև առկա օրինաչափությունների վերաբերյալ մարդկանց համար առավել կարևոր և անհրաժեշտ գիտելիքները¹, որոնք իրենց բնույթով ապրիորի են:

Այստեղից կարող ենք հետևություն անել, որ աշխարհայացքը, որը հիմնված է սուբյեկտի հանգումներին, հավատքի, պատկերացումների, գաղափարների համակարգի կամ ավելի ճիշտ՝ դրույթների համակարգի վրա, դրսևորվում է նաև կանխադրույթների միջոցով: Ճանաչողությունը, որին բնութագրական է ճշմարտության բարդ և ոչ միանշանակ ընկալումը, մի կողմից կարծես չի պահանջում վերջնական ճշմարտության սահմանում, սակայն մյուս կողմից էլ վերջինիս համար անհրաժեշտ են որոշակի կանխադրույթներ, որոնք արտահայտում և պայմանավորում են շրջապատող աշխարհի առարկաների նկատմամբ վերաբերմունքը: Վերջիններիս վերաբերյալ այդ կերպ վերաբերմունքն իմացաբանական առումով արտահայտվում է կանխավարկածների՝ անհրաժեշտ ճշմարտության «փոխարինիչների»² կամ որ նույն է՝ կանխադրույթների միջոցով: Ընդ որում հարկ է նշել, որ շրջապատող իրականության ընկալման այս միջոցի (կանխավարկածի) որակական հատկանիշներից մեկն արդյունավետությունն է և կապը մարդկային գործունեության հետ:

Ստաժողության պատմական տիպերի³ վերլուծությունը թույլ է տալիս արձանագրելու, որ կանխավարկածը ներառում է ոչ միայն դեակրիպտիվ, այլ նաև պերֆորմատիվ տարրեր: Կանխավարկածը նկարագրում է ինչ-որ իրականություն, որը (իրականությունը) կրում է պայմանական բնույթ և կիրառվում է որպես ճշմարտություն, քանի դեռ հակառակը չի ապացուցվում: Ընդ որում «պայմանական բնույթ» ձևակերպմանը պետք է մոտենալ այն առումով, թե ինչպես ենք տեսնում կամ ցանկանում տեսնել աշխարհը կամ ինչին ենք առավել հակված: Այլ խոսքով ասած՝ պերֆորմատիվ գիտելիքը վկայում է իրադրության պայմանական ճշմարիտ լինելու, որը կարող է հերքվել, և միևնույն ժամանակ հայեցակարգային կարգավիճակ ունենալու մասին, որը սուբյեկտների համար առաջացնում է որոշակի հետևանքներ⁴: Ճանաչողության համար կարևորը կանխադրույթների միջոցով առարկաները

¹ Տե՛ս **Аронов Р.А., Баксанский О.Е.**, Происхождение знания: истоки и основы // Вопросы философии. 2008, № 4, էջ 103:

² Տե՛ս **Гусева С.В.**, Место и роль презумпций в структуре юридического знания: философский анализ: дисс. канд. филос. наук. Саратов, 2009, էջ 58:

³ Ստաժողության փիլիսոփայական տիպերի մասին տե՛ս օրինակ **Зыков Д.В.**, Виды юридического мышления: методологическое и теоретико-правовое обоснование: дисс. канд. юрид. наук. Волгоград, 2015, էջ 14-64:

⁴ Տե՛ս **Остин Дж.Л.**, Слово как действие // Новое в зарубежной лингвистике: Вып. 17. Теория речевых актов. Сборник / Общ. ред. Б.Ю. Городецкого. М.: Изд. Прогресс, 1986, էջ 22-129, **Остин Дж.Л.**, Перформативы - констативы // Философия языка / Ред. сост. Дж. Серл. М., 2004, էջ 23-34, **Серль Дж.Р.**, Что такое речевой акт? // Новое в зарубежной лингвистике: Вып. 17. Теория речевых актов. Сборник / Общ. ред. Б.Ю. Городецкого. М.: Изд. Прогресс, 1986, էջ 151-169:

տեսնելու անհրաժեշտությունն է: Կանխավարկածների համակարգը նաև աշխարհայացքի տարատեսակների ձևավորման կարևորագույն աղբյուր կարող է լինել:

Կանխավարկածները մարդուն տալիս են շրջապատող իրականության մեջ գոյություն ունեցող առարկաների հետ մարդկային գործողությունների համահարաբերակցության հնարավորություն: Վերջիններս մարդկությանն ուղեկցել են պատմության ողջ ընթացքում, որոնց ակունքները կարելի է տեսնել սովորույթներում և ավանդույթներում: Մարդու գիտակցության մեջ որոշ առարկաներ անխուսափելիորեն համահարաբերակցվում են մյուսների, երբեմն նաև՝ տարասեռ առարկաների հետ, որոնց միջև ձևավորվում է որոշակի կապ, և որը կրում է կա՛մ պատճառահետևանքային, կա՛մ համադրական բնույթ¹: Այս ամենով պայմանավորված՝ մարդկային գիտակցության մեջ առաջանում է երևույթների որոշակի օրենքներին ստորադասելու կանխադրույթը: Մարդը շրջապատող իրականության կամ ավելի ճիշտ՝ այդ իրականության մեջ գոյություն ունեցող առարկաների վերաբերյալ իր պատկերացումները, գաղափարներն ու համոզմունքներն արտահայտում է կանխավարկածների համակարգի միջոցով: Այս համակարգի օգնությամբ, ըստ էության, մարդը ձգտում է հասկանալ «մատերիայի» և «գաղափարի» փոխհարաբերակցությունը՝ նպատակ ունենալով «աշխարհը» ստորադասել իրեն և իր շահին²: Ընդ որում հարկ է ընդգծել այն հանգամանքը, որ այդ համակարգի կարևորագույն հատկանիշը վերջինիս *պրագմատիկությունն է*³: Այլ խոսքով՝ մարդու և աշխարհի միջև առաջացող տարատեսակ փոխհարաբերությունները դրսևորվում են «օբյեկտ-սուբյեկտ-նպատակ-միջոց-արդյունք» բանաձևով⁴:

Մարդկային գիտակցությունը ենթադրում է, որ իր այս կամ այն գործողությունները կնպաստեն, որ իրականության մեջ ձեռք բերվեն որոշակի արդյունքներ՝ ելնելով այն նպատակներից և գաղափարներից, որոնք մարդը դնում է իր առջև: Նույնիսկ այն պարագայում, երբ գաղափարի և նպատակի միջև ենթադրվող տրամաբանական կապն ինչ-որ մի պահ «անհետանում» է, միևնույնն է, այս կամ այն գործողության անհրաժեշտությունը շարունակվում է գոյություն ունենալ: Այդ դեպքում արդեն կանխավարկածն այս կամ այն իրավիճակում պայմանավորում է այդ գաղափարը տեսնելու հնարավորությունը:

Ասվածի շրջանակներում հարկ ենք համարում ուշադրություն դարձնել մեկ կարևոր հանգամանքի վրա ևս: Աշխարհայացքը, որը հանդես է գալիս համոզմունքների, պատկերացումների, գաղափարների տեսքով, որոնք միասին վերցրած դրսևորվում են նաև կանխավարկածների միջոցով, ներառում է նաև արդարության և ողջախոսության վերաբերյալ պատկերացումներ: Եթե ժամանակային առումով հետ գնանք, ապա կարող ենք փաստել, որ օրինակ՝ անտիկ գիտակցությանը բնու-

¹ Տե՛ս **Гусева С.В.**, նշված աշխատությունը, էջ 60:

² Տե՛ս **Кураев А.В.**, О вере и знании - без антиномий // Вопросы философии. 1992, № 7, էջ 45:

³ Օրինակ՝ Ա.Կ. Բայբուրինը դիցաբանական աշխարհայացքի շրջանակներում մոտավորապես նույն կերպ է մեկնաբանում ծեսերի առաջացումը, որը հետագայում վերածվում է բացարձակ գիտելիքի: Տե՛ս **Байбурин А.К.**, Ритуал в системе знаковых средств культуры // Этнознаковые функции культуры. М.: Изд. Наука, 1991, էջ 31

⁴ Հարկ է նշել, որ օրինակ՝ Վ.Ջ. Պանֆիլովի կարծիքով այդ բանաձևը հետևյալն է՝ «առարկա-հատկություն-հարաբերություն»: Այս մոտեցման թերությունն այն է, որ բանաձևից դուրս են մնում «մարդը» և «միջոցը», որով մարդը կարող է ձանաչել ինչպես առարկան (օբյեկտը), այնպես էլ վերջինիս հատկանիշները: Այլ կերպ ասած՝ մտածողության բացակայության դեպքում չի կարող խոսք լինել առարկան ձանաչելու մասին: Բացի այդ, բացակայում է «առարկայից» վերջինիս «հատկանիշը» առանձնացնելու անհրաժեշտությունը, քանի որ մարդը «միջոցով» ձանաչում է ոչ թե առարկան որպես այդպիսին, այլ վերջինիս հատկանիշը: Տե՛ս **Панфилов В.З.**, Язык, мышление, культура // Вопросы языкознания. 1975, № 1, էջ 6:

թագրական էր այն սկզբունքների որոնումը, որոնց վրա հիմնվում էին «գեղեցիկը» և «պատշաճը»¹: Այսինքն՝ որոնված այս կամ այն սկզբունքի գոյությունն ստեղծում էր համոզմունք այս կամ այն իրավիճակում գեղեցիկի կամ պատշաճի առկայության մասին:

Մի կողմ թողնելով անտիկ փիլիսոփայության հիմնահարցերը՝ պետք է ընդամենն արձանագրել, որ իմացաբանական այս միջոցն արդիական է նաև ժամանակակից հասարակության համար, որն իր արտացոլումն է գտնում անհատի վարքագծում, հասարակական տարբեր ինստիտուտներում (պետություն, իրավունք և այլն): Մարդն իր գործունեության մեջ նպատակաուղղված է ստեղծելու և զարգացնելու այնպիսի գաղափարներ, որոնք հնարավորություն կտան ղեկավարվելու այս կամ այն իրավիճակներում: Այլ խոսքով ասած՝ գաղափարները, համոզմունքներն ու պատկերացումները, որոնք դրսևորվում են կանխավարկածների միջոցով, ըստ էության մարդկային կենսագործունեության հիմքերն են, և որ կանխավարկածը հանդես է գալիս որպես մարդու կողմից աշխարհն ընկալելու միջոց: Իրոք, մարդու կողմից շրջապատող իրականությունը ճանաչելու ձգտումը լավագույնս դրսևորվում է «կանխավարկած» կատեգորիայի միջոցով. օրինակ՝ «արդարը» կամ «ողջախոհը» տեսնելու ցանկության ձգտումն է, որ ստեղծում է այդպիսի կանխադրույթներ:

Իմացաբանական գործընթացում, այդ թվում նաև մտածողության մոդել ձևավորելիս կանխավարկածի համընդհանուր նշանակությունը պայմանավորված է այն դերով, որը կատարել և կատարում է մարդու կյանքում. առարկայի ճանաչումը տեղի է ունենում իմացաբանական, արժեքաբանական այն դրույթների ազդեցության ներքո, որոնք կապված են կանխատեսվող գիտելիք հետ:

Ավելին, եթե առաջնորդվում ենք այն գաղափարով, որ կանխավարկածի հիմքը նաև առարկաների օրինաչափությունների վերաբերյալ մեր պատկերացումները, համոզմունքներն ու գաղափարներն են, ապա ստացվում է, որ այս կամ այն իրավիճակում այս կամ օրինաչափությունը տեսնելու, այդ թվում նաև կենսագործումն ապահովելու համար անհրաժեշտ է միջոց՝ կանխավարկած, որն իր հիմքում արդեն իսկ կրում է այդ օրինաչափությունը, այդ օրինաչափության վերաբերյալ մարդկային մտածողության մեջ ձևավորված արժանահավատ գիտելիքը:

Այսպիսով, փիլիսոփայական-իմացաբանական առումով կանխավարկած ասելով պետք է հասկանալ շրջապատող առարկաների, վերջիններիս ու նրանց միջև առկա օրինաչափությունների մասին համոզմունքների, հավատքի, պատկերացումների, գաղափարների համակարգի հիման վրա ձևավորված կանխադրույթի հանդիսացող միջոց, որը թույլ է տալիս տեսնելու և մտածելու առարկաների, վերջիններիս ու նրանց միջև առկա օրինաչափությունների գոյության կամ բացակայության մասին այնքան ժամանակ, քանի դեռ այն չի հերքվել:

Խնդրին այս կերպ մոտենալու դեպքում արդեն մտորելու տեղիք է տալիս լայն տարածում ստացած այն մոտեցումը, ըստ որի «կանխավարկած» հասկացությունը տրամաբանական-փիլիսոփայական առումով ածանցվում է «հավանական ենթադրություն» հասկացությունից²: Մասնավորապես նշվում է, որ ընդհանուր տրամաբանական ենթադրությունն ինդուկտիվ մտահանգման ինքնուրույն տեսակ է (մասնավորից դեպի ընդհանուր), որը թույլ է տալիս առանց այլ ապացույցներին ապավինե-

¹ St`u **Гвардини Р.**, Конец нового времени. Средние века: ощущение бытия и картина мира // Вопросы философии. 1990, № 4, էջ 128:

² St`u օրինակ **Пронина М.П.**, Презумпции в современном российском праве: дисс. канд. юрид. наук. Нижний Новгород, 2010, էջ 14, **Шахкелдов Ф.Г.**, Концептуальные аспекты презумпции невиновности в уголовном процессе: генезис и тенденции совершенствования: дисс. докт. юрид. наук. Майкоп, 2006, էջ 24, **Горячев И.Н.**, Презумпция знания закона и принцип несущественности юридической ошибки в уголовном праве России: дисс. канд. юрид. наук. Ярославль, 2006, էջ 32:

լու՝ գոյություն ունեցող փաստի (կամ մի քանի փաստերի) հիման վրա կատարել հավանական ենթադրություն այլ փաստի գոյության կամ բացակայության մասին, որը հետևանք ու պատճառ է առաջինի, և որի (մտահանգման) հիմքը դիտարկումն է:

Ինչ-որ տեղ և ինչ-որ առումով ընդհանուր տրամաբանական ենթադրությունը, գուցե, կազմում է հիպոթեզի կամ վարկածի հիմքը, որոնք տրամաբանական առումով ենթադրության տարատեսակներ են և կիրառվում են ճանաչողության մեջ: Սակայն նույնը չենք կարող ասել կանխավարկածի դեպքում: Խնդիրն այն է, որ կանխավարկածն օբյեկտիվ իրականության մեջ առկա և միջնորդավորված ձևով ընկալված օրինաչափության կրողն է, որն իրականության մեջ արտացոլվում է մարդկային մտածողության (դատողության, մտահանգման) տեսքով: Սակայն սա ամենևին էլ չի նշանակում, որ կանխավարկածը վերածվում է ենթադրության կամ դատողության/մտահանգման, այն էլ հավանական. կանխավարկածի հիմքը օրինաչափությունն է, որը թույլ է տալիս մեկ այլ իրավիճակում ևս մտածելու (պնդելու) վերջինիս հիմքում ընկած օրինաչափության առկայության մասին այնքան ժամանակ, քանի դեռ չի հերքվել: Հարկ է նաև նշել, որ հերքման մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ հերքվում է ոչ թե օրինաչափությունը, այլ տվյալ իրավիճակում այդ կերպ մտածելու հնարավորությունը:

Հետևաբար, կանխավարկածը, օրինակ՝ հիպոթեզից տարբերվում է իր իմացաբանական դերով, որի նպատակն է կանխորոշելու սուբյեկտի վերաբերմունքը շրջապատող աշխարհի առարկաների նկատմամբ: Այսինքն՝ կանխավարկածի էությունն այն է, որ վերջինս ոչ թե հավանական ենթադրություն է, այլ օրինաչափության մասին արժանահավատ գիտելիքի փոխարինման միջոց, որը գործունեության մեջ արտահայտվում է մարդկային մտածողության միջոցով. օրինաչափության վերաբերյալ գիտելիքները մարդկային մտածողությանը թույլ են տալիս կառուցելու դատողություններ/մտահանգումներ: Այլ կերպ ասած՝ առանց օրինաչափությունը պատկերացնելու, որի կրողներից մեկը կանխավարկածն է, մարդկային մտածողությունը չի կարող կառուցել դատողություններ: Պարզ է, որ եթե գիտելիքն առկա է, և այն կարող է կիրառվել որոշում կայացնելիս, ապա վերջինիս համար բացակայում է կանխավարկածի անհրաժեշտությունը¹: Մինչդեռ գիտելիքի բացակայության դեպքում կանխավարկածը որպես իմացաբանական միջոց կիրառելով լրացնում ենք այն արժանահավատ գիտելիքը, որը տվյալ իրավիճակում բացակայում է:

Եզրահանգում: Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք ստորև արձանագրել հետևյալի մասին:

➤ Կանխավարկածը դիտարկելով որպես փիլիսոփայական-իմացաբանական միջոց՝ արձանագրեցինք, որ գոյաբանական առումով կանխավարկածը ձևավորվում է շրջապատող աշխարհի առարկաների, վերջիններիս ու նրանց միջև առկա օրինաչափությունների նկատմամբ սուբյեկտի համոզմունքների, հավատքի, պատկերացումների, գաղափարների հիման վրա և պայմանավորված է այդ առարկաները, վերջիններիս ու նրանց միջև առկա օրինաչափությունները տեսնելու անհրաժեշտությամբ:

➤ Կանխավարկածը դիտարկելով աշխարհայացքի և աշխարհընկալման շրջանակներում՝ արձանագրեցինք, որ իմացաբանական մակարդակում համոզմունքների, հավատքի, պատկերացումների, գաղափարների մարմնավորման և արտացոլման միջոցներից մեկը վերջիններիս (համակարգի) հիման վրա ձևավորված կանխավարկածն է՝ որպես կանխադրույթ: Իմացաբանական առումով կան-

¹ St' u Баранов В.М., Першин В.Б., Першина И.В., Методологические предпосылки формирования теории правовых презумпций // Методологическое проблемы юридической техники. Юридическая техника. 2008, № 2, էջ 20:

խավարկածն աշխարհայացքի և աշխարհընկալման ձևավորման ու դրսևորման միջոցներից մեկն է:

➤ Կանխավարկածը դիտարկելով որպես փիլիսոփայական-իմացաբանական միջոց՝ արձանագրեցինք, որ վերջինս ներառում է դեսկրիպտիվ և պերֆորմատիվ տարրեր: Կանխավարկածը նկարագրում է ինչ-որ իրականություն, որը (իրականությունը) կրում է պայմանական բնույթ և կիրառվում է որպես ճշմարտություն, քանի դեռ հակառակը չի ապացուցվում: Ընդ որում «պայմանական բնույթ» ձևակերպմանը պետք է մոտենալ այն առումով, թե ինչպես ենք տեսնում կամ ցանկանում տեսնել աշխարհը կամ ինչին ենք առավել հակված: Պերֆորմատիվ գիտելիքը վկայում է իրադրության պայմանական ճշմարիտ լինելու, որը կարող է հերքվել և միևնույն ժամանակ հայեցակարգային կարգավիճակ ունենալու մասին, որը սուբյեկտների համար առաջացնում է որոշակի հետևանքներ: Կանխավարկածների ուրակական հատկանիշը առարկաները, վերջիններիս ու նրանց միջև առկա օրինաչափությունները տեսնելու արդյունավետությունն ու պրագմատիկությունն է:

➤ Փիլիսոփայական-իմացաբանական առումով կանխավարկած ասելով պետք է հասկանալ շրջապատող առարկաների, վերջիններիս ու նրանց միջև առկա օրինաչափությունների մասին համոզմունքների, հավատքի, պատկերացումների, գաղափարների համակարգի հիման վրա ձևավորված կանխադրույթ հանդիսացող միջոց, որը թույլ է տալիս տեսնելու և մտածելու առարկաների, վերջիններիս ու նրանց միջև առկա օրինաչափությունների գոյության կամ բացակայության մասին այնքան ժամանակ, քանի դեռ այն չի հերքվել:

ПРЕЗУМПЦИЯ КАК ФИЛОСОФСКО-ГНОСЕОЛОГИЧЕСКОЕ СРЕДСТВО

Геворг Вирабян

Преподаватель кафедры теории и истории государства и права ЕГУ

Изучение юридической литературы показывает, что существуют разные подходы к сущности презумпции, являющейся одним из важнейших проблем при разработке концепции общей теории интегрирования отраслевых подходов к правовым презумпциям. В рамках данной статьи автор попытался найти пути преодоления указанной проблемы. С этой целью презумпция в работе рассматривалась на двух уровнях: онтологическом и гносеологическом. В частности, на онтологическом уровне автор обсуждал вопрос о том, как формируется презумпция, и какова ее сущность, а на гносеологическом уровне - какова ее роль. В итоге, было предложено понятие презумпции как философско-гносеологического средства, на основе которого следует провести исследование сущности правовой презумпции и выработку общего понятия.

PRESUMPTION AS A PHILOSOPHICAL AND GNOSEOLOGICAL MEASURE

Gevorg Virabyan

Lecturer of the YSU Chair of Theory and History of State and Law

The study of legal literature shows that there are different approaches to the essence of the presumption, which is one of the most important problems in the development of the concept of a general theory of integration of sectoral approaches to legal presumptions. Within the framework of this article, the author tried to find ways to overcome this problem. For this purpose, the presumption in the work was considered at two levels: ontological and gnoseological. In particular, at the ontological level, the author discussed the question of how a presumption is formed and what it represents (the essence), and at the gnoseological level, what role it plays. As a result, the concept of a presumption was given as a philosophical and epistemological means, on the basis of which a study of the essence of legal presumption and the development of a general concept should be carried out.

Բանալի բառեր - կանխավարկած, ենթադրություն, հավանական դատողություն, մտահանգում, փիլիսոփայական-ինացաբանական միջոց, գոյաբանական և ինացաբանական մակարդակներ, աշխարհայացք, աշխարհընկալում, ճանաչողություն, համոզմունք, կանխադրույթ, ինդուկտիվ մտահանգում, դեսկրիպտիվ և պերֆորմատիվ տարրեր

Ключевые слова: презумпция, предположение, вероятное суждение, умозаключение, философско-гносеологическое средство, онтологические и гносеологические уровни, мировоззрение, миропонимание, познание, убеждение, постулат, индуктивное умозаключение, дескриптивные и перформативные элементы

Key words: presumption, assumption, probable judgment, conclusion, philosophical-gnoseological measure, philosophical and gnoseological levels, outlook, world view, cognition, conviction, postulate, inductive conclusion, descriptive and performative elements

ԴԱՏԱԽԱՋԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արսեն Մարտիրոսյան

*ՀՀ հատուկ քննչական ծառայությունում
մինչդատական վարույթի օրինականության
նկատմամբ հսկողության վարչության պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 194-րդ հոդվածի համաձայն՝ «Գործի բարդության կամ նրա ծավալի մեծ լինելու դեպքում նախաքննության կատարումը կարող է հանձնարարվել մի քանի քննիչի, որի մասին նշվում է գործի հարուցման վերաբերյալ որոշման մեջ, կամ կայացվում է առանձին որոշում: Այդ մասին իրավունք ունի որոշում կայացնել քննչական բաժնի պետը: Որոշման մեջ պետք է նշվեն բոլոր քննիչները, որոնց հանձնարարվում է նախաքննության կատարումը, այդ թվում՝ խմբի ղեկավար քննիչը, որը գործն ընդունում է իր վարույթ և ղեկավարում է մյուս քննիչների գործողությունները: Կասկածյալը, մեղադրյալը, տուժողը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը և նրանց ներկայացուցիչները պետք է ծանոթացվեն քննիչների խմբի կողմից քննությունը կատարելու մասին որոշմանը, և նրանց պարզաբանվում է ցանկացած քննիչին բացարկ հայտնելու նրանց իրավունքը»:

Դրա հետ մեկտեղ քրեադատավարական օրենքը որևէ դրույթ չի պարունակում գործով դատավարական ղեկավարումը և մեղադրանքի պաշտպանությունը դատախազական խմբի կողմից իրականացնելու վերաբերյալ: Սակայն 2017 թվականի նոյեմբերի 17-ին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքը¹ նախատեսում է դատախազության լիազորությունների իրականացումը դատախազական խմբի կողմից: Այսպես՝ այդ օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վերադաս դատախազը կոնկրետ վարույթով դատախազության լիազորությունների իրականացումը կարող է հանձնարարել մի քանի դատախազների և նշանակել դատախազական խմբի ղեկավար: Դատախազական խմբի ղեկավարը կազմակերպում և համակարգում է դատախազական խմբի աշխատանքը: Սույն նորմի բովանդակությունից դժվար չէ նկատել, որ օրենսդիրը, ըստ էության, սահմանափակվել է միայն դատախազության լիազորությունների իրականացումը դատախազական խմբի կողմից իրականացնելու իրավական հիմք նախատեսելով՝ առանց կանոնակարգելու դատախազական խումբ ստեղծելու հիմքերը, դատախազական խմբի դատախազների և ղեկավարի լիազորությունների շրջանակը: Ընդ որում, նշված հարցերի վերաբերյալ համապատասխան իրավական կարգավորումների բացակայությունը գործնականում հանգեցնում է որոշակի խնդիրների:

¹ Տե՛ս <https://www.arlis.am/>

Սույն հոդվածի շրջանակներում քննարկման առարկա կդառնան դատախազական խումբ ստեղծելու իրավական հիմքերը, դատախազական խմբի ղեկավարի և դատախազների լիազորությունները, ինչպես նաև դատախազական խմբին վերաբերող որոշ այլ հարցեր:

1. Դատախազական խումբ ստեղծելու հիմքերը: Ինչպես վերը նշվեց «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասը չի սահմանում դատախազական խումբ ստեղծելու կոնկրետ հիմքեր՝ այն ստեղծելու բացառիկ իրավասությունը վերապահելով վերադաս դատախազին: Այսինքն՝ վերադաս դատախազն իրավասու է դատախազական խումբ ստեղծել ցանկացած դեպքում, երբ անհրաժեշտ կհամարի:

Մինչդեռ քննչական խմբի պարագայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 194-րդ հոդվածը սահմանում է, որ այն կարող է ստեղծվել գործի բարդության կամ նրա ծավալի մեծ լինելու դեպքում: Այսինքն՝ քննչական խումբ կարող է ստեղծվել, երբ՝

- ա) քննվող քրեական գործը բարդություն է ներկայացնում,
- բ) քննվող քրեական գործը ունի մեծ ծավալ:

Բացի այդ, տեսական գրականության մեջ առաջարկվում է նախաքննության կատարումը քննչական խմբին հանձնարարելու օրենսդրական հիմք նախատեսել նաև այն դեպքում, երբ հանցագործությունը ստանում է սոցիալական կամ հասարակական բնույթ¹: Ընդ որում, քրեական գործին հասարակական բնույթ կարող են հաղորդել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ հանցավոր գործունեության արդյունքում տուժողների մեծաքանակ լինելը, առանձնապես խոշոր չափերի վնասի առկայությունը և այլն:²

Նախատեսելով քննչական խումբ ստեղծելու հիմքերը՝ օրենսդիրը չի բացահայտում «գործի բարդություն» և «գործի մեծ ծավալ» հասկացությունների բովանդակությունը՝ դրանց գնահատումը թողնելով իրավակիրառողին:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ «գործի բարդություն» հասկացությունը արտացոլում է հանցագործության ներքին «որակական», իսկ «գործի մեծ ծավալը»՝ արտաքին, քանակական կողմը³: Բարդ գնահատվում են այն բազմադրվագ քրեական գործերը, որոնցով առաջ են քաշվում մի քանի վարկածներ և դրանք միաժամանակ ենթակա են ստուգման⁴:

Քրեական գործի բարդությունը և մեծ ծավալը առաջին հերթին կախված են 1) կարատված հանցագործության ծավալով և (կամ) դրա դրվագներով, 2) սուբյեկտների քանակով, 3) հանցավոր գործունեության վայրով (օրինակ, եթե այն կատարվել է մի քանի համայնքներում, մարզերում, պետություններում)⁵:

ՀՀ դատախազության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է օրենսգիրքը լրացնել նոր՝ «Մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և դատավարական ղեկավարման իրականացումը դատախազական խմբի կողմից» վերտառությամբ 54. 1-րդ հոդվածով՝ սահմանելով. «1. Գործի բարդության կամ նրա

¹ Տե՛ս *М. Хамгоков* Производство предварительного следствия следственной группой. Автореф. дис. ... канд. юрид. наук. Краснодар, 2009, էջ 15:

² Տե՛ս *М. Шамсутдинов* Производство предварительного следствия следственной группой (Процессуальные, управленческие и тактико-психологические аспекты): Дис. ... канд. юрид. наук: Казань, էջ 71:

³ Տե՛ս *М. Хамгоков*, նշված աշխատությունը, էջ 14:

⁴ Տե՛ս Досудебное производство в уголовном процессе: *Б.Я. Гаврилов* и др. – М.: ЮНИТИДАНА, 2015, էջ 107:

⁵ Տե՛ս *М. Шамсутдинов*, նշված աշխատությունը, էջ 69:

ծավալի մեծ լինելով պայմանավորված՝ վերադաս դատախազի հանձնարարականով կարող է ստեղծվել դատախազական խումբ: Հանձնարարականի մեջ պետք է նշվեն բոլոր դատախազները, որոնց հանձնարարվում է մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և դատավարական ղեկավարման իրականացումը, այդ թվում՝ խմբի ղեկավար դատախազը»:

Ինչպես տեսանելի է մեջբերված հոդվածի բովանդակությունից, ինչպես քննչական խմբի, այնպես էլ դատախազական խմբի պարագայում առաջարկվում է որպես դրա ստեղծման հիմք նախատեսել քննվող քրեական գործի բարդությունը կամ դրա ծավալների մեծ լինելը: Կարծում ենք, որ օրենսդրորեն ինչպես քննչական խմբի, այնպես էլ դատախազական խմբի ստեղծման հիմք պետք է սահմանվի նաև քննվող քրեական գործի հասարակական հնչեղությունը:

Միաժամանակ, դատախազական խումբ ստեղծելու հետ կապված իրավաչափ հարց է առաջանում, թե արդյո՞ք վերադաս դատախազը պետք է իրավասու լինի գործով դատավարական ղեկավարումը դատախազական խմբին հանձնարարել միայն այն դեպքում, երբ նախաքննության ընթացքում ստեղծված է քննչական խումբ, թե՞ անկախ այդ խմբի գոյությունից:

Այս կապակցությամբ Նախագծի սկզբնական տարբերակում նախատեսված էր, որ գործի բարդության կամ նրա ծավալի մեծ լինելով պայմանավորված՝ **քննությունը քննչական խմբի կողմից իրականացվելու դեպքում** վերադաս դատախազի հանձնարարականով կարող է ստեղծվել դատախազական խումբ:

Փաստերոն, ըստ Նախագծի սկզբնական կարգավորման տրամաբանության, դատախազական խումբ կարող է ստեղծվել միայն այն դեպքում, երբ նախաքննության կատարումը հանձնարարված է քննչական խմբին: Կարծում ենք, որ գործով դատախազական խմբի ստեղծումը չպետք է պայմանավորել արդեն իսկ ստեղծված քննչական խմբի գոյությամբ: Այլ կերպ՝ վերադաս դատախազը պետք է համապատասխան հիմքերի առկայության դեպքում լիազորված լինի գործով դատավարական ղեկավարումը և հսկողությունը դատախազական խմբին հանձնարարել անկախ այն հանգամանքից, թե այդ գործով նախաքննությունը քննչական խմբի կողմից իրականացվում է, թե ոչ: Ավելի պարզ՝ վերադաս դատախազի՝ դատախազական խումբ ստեղծելու լիազորությունը չպետք է պայմանավորված լինի նախաքննության ընթացքում ստեղծված քննչական խմբի գոյությամբ:

Այսպիսով՝ վերոգրյալի հիման վրա կարելի է եզրահանգել, որ դատախազական խումբ կարող է ստեղծվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

1. քննվող քրեական գործը բարդություն է ներկայացնում,
2. քննվող քրեական գործը ունի մեծ ծավալ,
3. քննվող քրեական գործը ունի հասարակական հնչեղություն¹:

Միաժամանակ հարկ է փաստել, որ դատախազական խումբ կարող է ստեղծվել անկախ քննչական խմբի առկայությունից:

2. Դատախազական խմբի դատախազների և ղեկավարի լիազորությունները:

Ինչպես արդեն նշվեց, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը սահմանափակվել է միայն ամրագրելով, որ դատախազության լիազորությունների իրականացումը մի քանի դատախազների հանձնարարելու պարագայում դատախազական խմբի ղեկավարը կազմակերպում և համակարգում է դատախազական խմբի աշխատանքը: Համեմատության համար նշենք, որ քննչական խմբի դեպքում օրենսդիրը առածին իրավական կարգավորման է ենթարկել քննչական խմբի ղեկավարի լիազորությունները: Ընդ որում, ելնելով այդ լիազորությունների բնույթից՝ մասնագիտական գրականության մեջ դրանք դասակարգվում են բացառիկի և ոչ բացառիկի:

¹ Կարծում ենք, որ նշվածը նույնպես պետք է Նախագծով նախատեսվի որպես դատախազական խմբի ստեղծման հիմք:

Քննչական խմբի ղեկավարի բացառիկ լիազորությունները օրենքով վերապահված են միայն քննչական խմբի ղեկավարին: Վերջինիս բացառիկ լիազորություններն են՝

1. գործերը միացնելու կամ անջատելու մասին որոշում ընդունելը,
2. անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում ընդունելը,
3. գործով վարույթը կասեցնելու կամ վերսկսելու մասին որոշումներ ընդունելը,

4. նախաքննության ժամկետը երկարացնելու մասին որոշում ընդունելը,
5. կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և դրանց ժամկետը երկարացնելու միջնորդություններ հարուցելու մասին որոշումներ ընդունելը,

6. գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ վերսկսելու մասին որոշումներ ընդունելը,

7. մեղադրական եզրակացություն կազմելը կամ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու հարցը քննելու համար գործը դատարան ուղարկելու մասին որոշում ընդունելը:

Քննչական խմբի ղեկավարի ոչ բացառիկ լիազորություններն են՝ մասնակցել այլ քննիչների կողմից կատարվող քննչական գործողություններին և գործով անձամբ կատարել քննչական գործողություններ և կայացնել որոշումներ¹:

Դատախազական խմբի դատախազների և ղեկավարի լիազորությունների վերաբերյալ հստակ կանոնակարգումների բացակայությունը գործնականում հանգեցնում է մի շարք խնդիրների: Մասնավորապես՝ գործնականում հաճախ ստեղծվում են իրավիճակներ, երբ անձին առաջադրված մեղադրանքի հիմնավորվածության, արարքի իրավաբանական որակման, մեղադրական եզրակացությամբ ստացված քրեական գործը հաստատելու և դատարան ուղարկելու, դատարանում մեղադրանքի պաշտպանության հետ կապված դատախազական խմբի դատախազի (դատախազների) և ղեկավարի դիրքորոշումները տարբեր են լինում: Օրինակ՝ դատախազական խմբի դատախազը (դատախազները), ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 273-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ ուսումնասիրելով քրեական գործի նյութերը, գտնում են, որ այն ենթակա է հաստատման և պետք է ուղարկվի դատարան, մինչդեռ խմբի ղեկավարը գտնում է, որ մեղադրական եզրակացությունը չպետք է հաստատվի և գործը վերադարձվի քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու, կամ գործով վարույթը ենթակա է կարճման, և քրեական հետապնդումը՝ դադարեցման:

Վերը նշված հանգամանքով պայմանավորված՝ դատախազության կողմից նշակված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծով առաջարկվում է կանոնակարգել նաև դատախազական խմբի ղեկավարի և անդամների լիազորությունները: Մասնավորապես՝ Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել նոր՝ 54. 2-րդ հոդված «Դատախազական խմբի ղեկավարի և անդամների լիազորությունները»՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Դատախազական խմբի ղեկավարը կազմակերպում է դատախազական խմբի աշխատանքը, ղեկավարում և համակարգում է մյուս դատախազների գործողությունները:

2. Դատախազական խմբի անդամն իրականացնում է սույն օրենսգրքի 53-րդ և 54-րդ հոդվածով սահմանված լիազորությունները դատախազական խմբի ղեկավարի կողմից սահմանված շրջանակներում:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն «մինչդատական վարույթ»: Մաս 2/ Գիտ. խմբ.՝ Ա. Դամբարյան, Եր., Տիգրան Մեծ, 2017, էջ 116

3. Սույն օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 10-րդ, 14-րդ, 15-րդ կետերով, 3-րդ մասի 6-րդ, 9-րդ, 11-րդ կետերով, 54-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և 197-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված լիազորությունները իրականացվում են բացառապես դատախազական խմբի ղեկավարի կողմից:

4. Դատախազական խմբի ղեկավարը և անդամն իրականացնում են նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններ»:

Նախագծի մեջբերված հոդվածի բովանդակությունից տեսանելի է, որ որպես դատախազական խմբի ղեկավարի բացառիկ լիազորություններ սահմանված են.

1. լուծել հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին, ստորադաս դատախազին հայտնված բացարկի, ինչպես նաև վերջիններիս ինքնաբացարկի հարցերը,

2. հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին հեռացնել տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցելուց, եթե գործի քննության ընթացքում նրանք թույլ են տվել օրենքի խախտում,

3. հաստատել մեղադրական եզրակացությունը, իսկ այն անձանց նկատմամբ քրեական գործերով, որոնք քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարել են անմեղաունակ վիճակում կամ անմեղաունակ են դարձել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարելուց հետո՝ եզրափակիչ որոշումը,

4. գործն ուղարկել դատարան՝ ըստ էության քննելու համար,

5. հրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց, կարճել քրեական գործով վարույթը կամ դադարեցնել քրեական հետապնդումը,

6. դիմել դատարան՝ սույն օրենսգրքով նախատեսված միջնորդություններով,

7. անհրաժեշտությունը վերանալու դեպքում վերացնել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակումները,

8. հրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց,

9. նախաքննության ժամկետը քննիչի պատճառաբանված միջնորդության հիման վրա երկարեցնել՝ միջնորդությունը լրիվ կամ մասնակիորեն բավարարելու վերաբերյալ որոշում կայացնելով:

Այսպիսով, Նախագծով հստակ կանոնակարգման է ենթարկվել դատախազական խմբի դատախազների և ղեկավարի լիազորությունների շրջանակը՝ ընդ որում սահմանելով դատախազական խմբի ղեկավարի բացառիկ լիազորությունները:

3. Դատախազական խմբին վերաբերող որոշ այլ հարցեր: << քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծով կարգավորված չէ դատավարության մասնակիցներին դատախազական խումբ ստեղծելու մասին վերադաս դատախազի հանձնարարականին ծանոթացնելու և դատախազական խմբի դատախազներին բացարկ հայտնելու հետ կապված հարցերը, ինչը, մեր կարծիքով, չի կարող ընդունելի համարվել: Կարծում ենք՝ ինչպես քննչական խմբի, այնպես էլ դատախազական խմբի պարագայում անհրաժեշտ է իրավական կանոնակարգման ենթարկել նաև դատավարության համապատասխան մասնակիցներին դատախազական խումբ ստեղծելու մասին հանձնարարականին ծանոթացնելու, դատախազական խմբի դատախազներին բացարկ հայտնելու ընթացակարգերը:

Այդ նպատակով առաջարկվում է սահմանել, որ դատախազական խումբ կազմելու մասին հանձնարարականը անհապաղ ուղարկվում է կոնկրետ քրեական գործով վարույթն իրականացնող քննիչին, որը 24 ժամկա ընթացքում կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին և նրանց ներկայացուցիչներին ծանոթացնում է մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և դատավարական ղեկավարման իրա-

կանացունը դատախազական խմբին հանձնարարելու մասին վերադաս դատախազի հանձնարարականին, և նրանց պարզաբանվում է խմբի ցանկացած դատախազի բացարկ հայտնելու իրենց իրավունքը, որի արդյուքներով կազմված արձանագրությունը անհապաղ ուղարկում է դատախազական խմբի ղեկավարին:

Հարկ է նշել նաև, որ հսկողության իրականացումը դատախազական խմբին հանձնարարելու դեպքում չի բացառվում նաև հետագայում դատախազական խումբի կազմը փոփոխության ենթարկել (օրինակ՝ խմբի դատախազը աշխատանքից ազատվել է, գտնվում է արձակուրդի մեջ և այլն): Ինչպես գործող «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, այնպես էլ Նախագիծը որևէ դրույթ չեն բովանդակում դատախազական խմբի կազմը փոփոխելու վերաբերյալ:

Կարծում ենք, որ այս առումով անհրաժեշտ է սահմանել, որ ինչպես դատախազական խմբի ստեղծումը, այնպես էլ դրա կազմի փոփոխությունը իրականացվում են վերադաս դատախազի հանձնարարականի հիման վրա:

Այսպիսով, վերոգրյալ վերլուծության հիման վրա կարելի է եզրահանգել, որ դատախազական խմբին առնչվող մեր կողմից առաջարկվող լուծումները հնարավորություն կտան նախ կանոնակարգելու այն հարցերը, որոնք չի նախատեսել օրենսդիրը, և բացի այդ՝ բացառելու գործնականում դատախազական խմբի ստեղծման պարագայում ի հայտ եկող խնդիրները և առավել արդյունավետ դարձնելու բարդ, բազմադրվագ, հասարակական հնչեղություն ունեցող գործերով դատախազական հսկողության արդյունավետությունը ու դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանությունը:

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ОСУЩЕСТВЛЕНИЯ НАДЗОРА ЗА ЗАКОННОСТЬЮ ДОСУДЕБНОГО ПРОИЗВОДСТВА И ЗАЩИТЫ ОБВИНЕНИЯ В СУДЕ ПРОКУРОРСКОЙ ГРУППОЙ В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РА

Арсен Мартиросян

*Начальник Управления по надзору
за законностью досудебного производства
Специальной следственной службы РА,
кандидат юридических наук, доцент*

Статья посвящена основным вопросам надзора за законностью досудебного производства прокурорской группой и защиты обвинения в суде.

В рамках статьи автор обсуждает вопросы правовых оснований создания прокурорской группы, а также вопросы, связанные с полномочиями членов прокурорской группы и руководителя. В результате проведенного исследования автор предлагает подчинить основания для создания прокурорской группы правовому регулированию, установив, что как таковые они могут заключаться в сложности расследуемого уголовного дела, большом объеме дела или общественной публичности.

В то же время автор предлагает подчинить полномочия прокурорской группы и ее членов уголовно-процессуальному регулированию, а также предусмотреть механизмы ознакомления соответствующих участников судебного процесса с поручением вышестоящего прокурора о ее создании, а также изменения состава группы в случае ее создания.

В результате исследования автор вносит четкие предложения, которые направлены, в первую очередь, на совершенствование уголовно-процессуального законодательства, решение проблем, возникающих на практике, кроме того, повышение эффективности прокурорского надзора и защиту прав участников судопроизводства.

MAIN ISSUES OF SUPERVISION OVER THE LEGALITY OF PRE-TRIAL PROCEEDINGS AND CHARGE DEFENSE IN COURT BY THE PROSECUTORIAL GROUP IN THE RA CRIMINAL PROCEDURE

Arsen Martirosyan

*Head of the Department of Supervision over Legality of Pre-trial Proceedings of the RA SIS,
Candidate of Legal Sciences, Associate Professor*

The article is devoted to main issues of supervision over the legality of pre-trial proceedings and charge defense in court by the prosecutorial group in the RA Criminal Procedure.

Within the framework of the article the author discusses the legal grounds for the establishment of the prosecutorial group, as well as issues related to the powers of the members and the head of the prosecutorial group. In the course of the study, the author proposes to subject the grounds for establishing the prosecutorial group to legal regulation, stating that as such can be the complexity of the investigated criminal case, the large volume of the case or the public resonance.

At the same time, the author proposes to subject to criminal procedure regulation the powers of the prosecutorial group and the powers of the members of the group, as well as in the case of the establishment of the prosecutorial group, to envisage the mechanisms for introducing the relevant participants of the trial to the superior prosecutor's instruction regarding the establishment of the group, submitting recusal for each prosecutor of the group as well as for changing the group composition.

As a result of the study the author makes clear offers, which are aimed, first, at improving the criminal procedure law, solving the problems that occur in practice, also at increasing the efficiency of the prosecutorial supervision and protection of the rights of trial participants.

Բանալի բառեր – մինչդատական վարույթ, քննչական խումբ, դատախազական խումբ, գործի բարդություն, գործի մեծ ծավալ, վերադաս դատախազ, դատախազական խմբի ղեկավար, դատախազական խմբի անդամներ, հանձնարարություն

Ключевые слова: досудебное производство, следственная группа, прокурорская группа, сложность дела, большой объем дела, вышестоящий прокурор, руководитель прокурорской группы, члены прокурорской группы, поручение

Key words: pre-trial proceedings, investigation group, prosecutorial group, complexity of the case, large volume of the case, superior prosecutor, head of the prosecutorial group, members of the prosecutorial group, instruction

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՕԺԱՆՂԱԿՈՂԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՕԺԱՆՂԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Սևակ Պողոսյան

*Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ,
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ*

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Օժանդակող է համարվում այն անձը, ով հանցագործությանն օժանդակել է խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները»:

Հանցագործությանն օժանդակելու նշված եղանակներն ու միջոցները սպառիչ են, ինչը ենթադրում է, որ օրենքում չնշված եղանակներով կամ միջոցներով օժանդակություն հնարավոր չէ: Իրավակիրառ պրակտիկայում, սակայն, օժանդակությանը երբեմն տրվում է լայն մեկնաբանություն. որպես օժանդակություն են որակվում նաև անձի այն արարքները, որոնք ուղղակիորեն նախատեսված չեն ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասով: Մասնավորապես, օժանդակություն են որակվում այնպիսի դեպքերը, երբ անձը կատարում է որևէ հանցատեսակի օբյեկտիվ կողմը: Օրինակ՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքում:

Սրա հետ կապված՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով «իրացում» եզրույթի քրեաիրավական բովանդակությունը, արձանագրել է, որ. «(...) իրացման նպատակը և իրացումը բացակայում են, եթե թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերը միջնորդի կողմից ձեռք են բերվել հետևյալ չորս պայմանների միաժամանակյա առկայությամբ.

- ա) սպառողի խնդրանքով և դրամական միջոցներով,
- բ) սպառողի անձնական գործածմանը համապատասխան քանակով,
- գ) առանց դրանց նկատմամբ տնօրինման իրավունքի,
- դ) միջնորդի դիտավորությունն ընդգրկում է ոչ թե իրացումը, այլ ձեռքբերմանն աջակցելը:

Ընդ որում, կախված այն հանգամանքից, թե կոնկրետ ո՞ր դերակատարի՝ իրացնողի¹, թե՞ ձեռք բերողի շահերից ելնելով է գործում միջնորդը, նրա գործողությունները պետք է որակվեն որպես իրացման կամ ձեռքբերման հանցակցություն՝ օժանդակության ձևով»¹:

«Հանցագործությունների որակման հիմնախնդիրները» աշխատության հեղինակները հիմնավորապես քննադատել են այս դիրքորոշումը՝ հետևյալ պատճառաբանություններով. պետք է նկատել, որ թմրամիջոցների առուվաճառքի հանցավոր գործարքի միջնորդությունը որպես օժանդակություն գնահատելը չի բխում քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի ձևակերպումից, քանի որ հանցագործության առարկան (տվյալ դեպքում՝ թմրամիջոցը) այլ անձի փոխանցելը, հանձնելը կամ

¹ Տե՛ս Ա. Ալյանյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 23.12.2010 թ. թիվ ԵԵԴ/0125/01/09 որոշումը:

տրամադրելը որպես օժանդակության եղանակ ուղղակիորեն նախատեսված չէ սույն հոդվածով (հոդվածում խոսվում է միայն *միջոցներ, գործիքներ* տրամադրելու մասին): Բացի այդ, եթե նույնիսկ դիտենք, որ նկարագրված դեպքերում գործ ունենք հանցագործության առարկան նախապես խոստացված ձեռքբերման՝ որպես օժանդակության եղանակի հետ (թեև օժանդակության տվյալ եղանակն ունի բոլորովին այլ քրեաիրավական բովանդակություն), միևնույնն է, սպառողին թմրամիջոց փոխանցած անձի արարքը որակելիս չի կարող հղում կատարվել ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածին, քանզի տվյալ անձի արարքը պարունակում է համապատասխան հանցագործությունների (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 266 կամ 268) օբյեկտիվ կողմի այս կամ այն դրսևորումը (փոխադրելը, առաքելը, պահելը): Իսկ այն դեպքում, երբ անձը մասնակցում է հանցագործության օբյեկտիվ կողմի կամ դրա մասի կատարմանը, նրա արարքը որակելիս ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածին հղում չի կատարվում (հոդված 39-ի 2-րդ մաս)¹:

Հանցագործության օբյեկտիվ կողմը կատարելու դեպքում անձի արարքը որպես օժանդակություն է որակվում նաև այն դեպքերում, երբ նա, չհանդիսանալով հատուկ սուբյեկտ, իրականացնում է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը հատուկ սուբյեկտի դրդմամբ:

Իհարկե, գործող օրենսդրության պայմաններում այդպիսի դեպքերը օժանդակություն որակելը խնդրահարույց է, բայց կարծում ենք, որ ըստ էության դա ճիշտ է: Ուստի կարծում ենք, որ իրականում առկա է օրենսդրական բաց, և այդ հարցը պետք է օրենսդրորեն կարգավորվի:

Օժանդակություն են որակվում նաև այն դեպքերը, երբ անձը օգնում է կատարողին հասնելու դեպքի վայր: Դա գնահատվում է որպես խոչընդոտ վերացնել նույնիսկ այն դեպքերում, երբ ակնհայտ է, որ դեպքի վայր հասնելը կատարողի համար որևէ դժվարություն չէր ներկայացնում: Մասնավորապես, սպնության օժանդակություն է համարվել այն անձի արարքը, որը, իմանալով կատարողի և տուժողի միջև եղած լարված հարաբերությունների և կատարողի մոտ զենքի առկայության մասին, իր ավտոմեքենայով օգնել է վերջինիս փնտրելու և գտնելու ապագա զոհին՝ հասնելու դեպքի վայր²:

Օժանդակություն է որակվում նաև այն անձի արարքը, որը նախապես խոստանում է չհայտնել նախապատրաստվող հանցագործության մասին: Գործող օրենսդրության պայմաններում սա խնդրահարույց է նույնիսկ այն դեպքում, երբ խոստում տվողը պարտավոր էր կանխել հանցագործությունը: Մեր կարծիքով՝ նույնիսկ այդ դեպքում գործող օրենսդրության պայմաններում օժանդակությունը բացակայում է, և օժանդակության որևէ եղանակ չկա: Եթե նույնիսկ փորձենք դա համարել խոչընդոտի վերացում, ապա պետք է նշենք, որ օժանդակություն է խոչընդոտը վերացնելը և ոչ թե դրա խոստումը: Չնայած պետք է նշել, որ տեսության մեջ կարծիք է արտահայտվել, որ այն դեպքերում, երբ չհայտնելու խոստում է տալիս հանցագործությունները կանխելու պարտականություն ունեցողը, ապա դա օժանդակություն է³:

Կարծում ենք, որ հիմնավոր է քրեական իրավունքի տեսության մեջ արտահայտված այն կարծիքը, որ օժանդակողի օրենսդրական բնորոշման մեջ ճիշտ չէ օժանդակության եղանակների սպառիչ ցանկ տալը: Օժանդակություն համարվող գործունեությունը բազմաթիվ դրսևորումներ կարող է ունենալ, և օրենսդրորեն թվարկել օժանդակության բոլոր եղանակները հնարավոր չէ և անհրաժեշտ չէ: Օժանդակություն կարող է համարվել յուրաքանչյուր արարք, որով անձը նպատում է,

¹ Տե՛ս Առաքելյան Ս. Վ., Մկրտչյան Պ. Վ., Հանցագործությունների որակման հիմնախնդիրները, Եր., 2020, էջ 322-323:

² Տե՛ս գործ N ԵՂ/0359/01/18:

³ Տե՛ս Уголовное право России. Учебник для вузов. В 2-х томах. Т. 1. Общая часть. М., 1998, էջ 246:

օգնում է հանցանքի կատարմանը, եթե, իհարկե, այն բավարարում է հանցակցության հատկանիշներին: Ուստի առաջարկվում է օժանդակող համարել յուրաքանչյուր անձի, ով որևէ ձևով օգնում է հանցանքի կատարմանը¹:

Հարկ ենք համարում նշել, որ օժանդակությունը ցույց է տրվում ոչ միայն կատարողին, այլև մյուս հանցակիցներին (դրդիչին, օժանդակողին): Կարծում ենք, որ նման դեպքերում անձի արարքը պետք է որակել որպես համապատասխան հանցակցի արարք: Այսինքն՝ օժանդակողին օժանդակողը օժանդակող է, դրդիչին օժանդակողը՝ դրդիչ, կազմակերպիչի ինստիտուտը պետք է առանձնացնել:

Քննարկենք մեկ այլ խնդիր, որ առաջանում է օժանդակություն իրականացրած անձի արարքը որակելիս: Իրավակիրառ պրակտիկայում հանդիպել ենք այսպիսի որակման: Անձն ընդգրկվել է կազմակերպված խմբի մեջ և երեք ամիս անընդմեջ ձեռք է բերել ու իրացրել է կազմակերպված խմբի հափշտակած ոսկյա ծուլակտորները²: Այդ անձի արարքը որակվել է որպես կազմակերպված խմբի կողմից առանձնապես խոշոր չափերով հափշտակության օժանդակություն՝ հղում կատարելով 38-րդ հոդվածի վրա: Այսպիսի որակումը բխում է օրենքից, քանի որ, ինչպես գիտենք, ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կազմակերպված խումբ, հանցավոր համագործակցություն ստեղծած կամ դրանք ղեկավարած անձը ենթակա է պատասխանատվության սույն օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված դեպքերում՝ կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ ղեկավարելու համար, ինչպես նաև դրանց կողմից կատարված բոլոր հանցանքների համար, եթե դրանք ընդգրկվել են նրա դիտավորությամբ: Հանցավոր համագործակցության մեջ մտնող մյուս անձինք պատասխանատվություն են կրում այդ կազմակերպությանը մասնակցելու և այն հանցանքների համար, որոնց նախապատրաստությանը կամ կատարմանն իրենք մասնակցել են: Սույն հոդվածում թվարկված անձանց պատասխանատվությունը վրա է հասնում առանց սույն օրենսգրքի 38-րդ հոդվածին հղում կատարելու:

Ինչպես տեսնում ենք, խոսքը միայն հանցավոր համագործակցության մեջ մտնող մյուս անձանց մասին է: Օրենքի ձևակերպումից բխում է, որ կազմակերպված խմբին մասնակցող այլ անձի արարքը որակելիս պետք է հղում կատարել հոդված 38-ին: Այս տեսակետից վերը նկարագրված որակումը ճիշտ է: Բայց կարծում ենք, որ նման դեպքերում էլ արարքը որակելիս գործող օրենքի և առկա մեկնաբանությունների պայմաններում ճիշտ կլիներ հոդված 38-ի վրա հղում չկատարել, քանի որ, մեր կարծիքով, հանցավոր համագործակցության և կազմակերպված խմբի մասնակիցների միջև էական տարբերություն չկա. նրանք բոլորն էլ ենթադրաբար բնութագրվում են կայուն հակասոցիալական դիրքորոշմամբ: Այդ տեսակետն է արտահայտել նաև ՌԴ Գերագույն դատարանի պլենումը, որի համաձայն՝ կատարող կամ համակատարող է նաև կազմակերպված խմբի այն անդամը, որը խմբի կազմում օժանդակողի գործառույթներ է իրականացնում³, և փաստորեն Ընդհանուր մասի համապատասխան հոդվածին հղում պետք է: Պետք է նշել, որ ՌԴ Գերագույն դատարանի պլենումի այս դիրքորոշումը քննադատության է արժանացել⁴:

Մեր կարծիքով ևս, երկու դեպքում էլ հղումը 38-րդ հոդվածի համապատասխան մասին անհրաժեշտ է՝ տվյալ կազմակերպության յուրաքանչյուր անդամի գործառույթները պարզելու, քրեական պատասխանատվության ու պատժի անհատակա-

¹ St' u **Рыжков Р. С.** Уголовная ответственность соучастников преступления. автореф. дисс. на соиск. учен. степени док. юрид. наук. М., 2003, էջ 9:

² St' u գործ N ԱՎԴ1/ 0042/01/17

³ St' u Бюллетень Верховного Суда РФ, 1995, N9, էջ 14:

⁴ St' u **Иванов Н.Г.** Постановление Пленума Верховного Суда РФ «О судебной практике по делам об убийстве (ст. 105 УК РФ)». Критический взгляд // Уголовное право. – 2000. – № 2. – էջ 21–26:

նացման համար: Վերջին հաշվով այն անձը, որը կատարողի գործառույթներ չի կատարել, չի կարող կատարող համարվել, և նրա արարքը որակելիս անհրաժեշտ է հղում կատարել Ընդհանուր մասի համապատասխան հոդվածին:

ПОНЯТИЕ ПОСОБНИЧЕСТВА СОВЕРШЕНИЮ ПРЕСТУПЛЕНИЯ, ВИДЫ ПОСОБНИЧЕСТВА

Севак Погосян

Заместитель прокурора административных районов Эребуни и Нубарашен г. Еревана, соискатель кафедры уголовного права ЕГУ

В статье обсуждается квалификация действий пособника, их исчерпывающий перечень и другие проблемные вопросы. На основании исследования автор приходит к выводу, что нет необходимости приводить исчерпывающий перечень действий пособника, предлагает ссылаться на соответствующую статью Общей части при описании действий лица, которое является членом организованной группы или преступного сообщества и совершил преступление в составе преступной группы.

THE CONCEPT OF THE CRIME FACILITATOR, TYPES OF ASSISTANCE

Sevak Poghosyan

Deputy Prosecutor of Erebuni and Nubarashen Administrative Districts of Yerevan, Applicant of the YSU Chair of Criminal Law

The article discusses the issues of qualifying the actions of the facilitator, defining their exhaustive list by law, as well as other problematic issues. Based on the research, the author concludes that there is no need to provide an exhaustive list of the actions of the facilitator, suggests referring to the relevant article of the General Part when qualifying the action of a person who is even just a member of an organized group or criminal cooperation and has committed the crime being a part of them.

Բանալի բառեր – *օժանդակող, կատարող, կազմակերպված խումբ, հանցավոր համագործակցություն, նախապես խոստանալ, պարտակել*

Ключевые слова: *пособник, исполнитель, организованная группа, преступное сообщество, предварительный сговор, укрывательство преступлений*

Key words: *facilitator; perpetrator; organized group; criminal cooperation; promise in advance; cover up*

ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ ՊԱՏԺԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱՋԱՏԵԼԻՍ

Արփինե Սարգսյան

*ՀՀ արդարադատության նախարարության
հակակոռուպցիոն և քրեակատարողական
քաղաքականության մշակման վարչության պետ,
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը դիտվում է որպես խրախուսանքի միջոց, որից օգտվելու համար դատապարտյալը պատժի կրման ընթացքում պետք է դրսևորի պատշաճ վարքագիծ, և նրա մոտ նոր հանցագործություն կատարելու հավանականությունը ցածր լինի: Այդուհանդերձ, այս երկու չափանիշների բավարարումը անհրաժեշտ է, բայց ոչ բավարար. պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքում սահմանվում է նաև փորձաշրջան, որի ընթացքում անձը պետք է ձգտի դրսևորել օրինապահ վարքագիծ: Իսկ եթե փորձաշրջանի ընթացքում անձը չի կատարում իր վրա դրված պարտականությունները, վրա են հասնում համապատասխան հետևանքներ:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ ՔՕ) 76-րդ հոդվածի 6-րդ մասն ամրագրում է այն դեպքերը, երբ փորձաշրջանի ընթացքում դատարանը պետք է դիտարկի պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը վերացնելու հարցը: Նշված մասի համաձայն՝ եթե փորձաշրջանի ընթացքում դատապարտյալը՝

1) չարամտորեն խուսափում է պայմանական վաղաժամկետ ազատելիս դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց, ապա դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, որոշում է կայացնում պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին.

2) կատարում է անզգույշ հանցանք, ապա պայմանական վաղաժամկետ ազատումը պահպանելու կամ վերացնելու հարցը լուծում է դատարանը.

3) կատարում է դիտավորյալ հանցանք, ապա դատարանը նրա նկատմամբ պատիժ է նշանակում ՀՀ ՔՕ 67-րդ հոդվածով նախատեսված կանոններով: Նույն կանոններով պատիժ է նշանակվում, եթե կատարվել է անզգույշ հանցանք, և դատարանը վերացնում է պայմանական վաղաժամկետ ազատումը:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու վերոնշյալ հիմքերը սպառիչ են, ինչն էլ նշանակում է, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը, նշված հիմքերից բացի, որևէ այլ հիմքով վերացվել չի կարող:

Վկայակոչված քրեաիրավական դրույթի վերլուծությունը թույլ է տալիս նաև առանձնացնել դատարանի կողմից պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու երկու եղանակ՝ **պարտադիր և հայեցողական**: Սույն աշխատանքի շրջանակներում վերլուծության կենթարկվեն նշված երկու եղանակների հիմնախնդիրները:

Այսպես, դատարանը **պարտադիր** վերացնում է պայմանական վաղաժամկետ ազատումը, եթե փորձաշրջանի ընթացքում՝

1) դատապարտյալը չարամտորեն խուսափել է դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց, կամ

2) դատապարտյալը կատարել է դիտավորյալ հանցանք:

Առաջին դեպքում դատարանի կողմից պետք է հաստատված համարվի երկու հանգամանք՝

1) դատապարտյալը պետք է խուսափած լինի **դատարանի կողմից իր վրա դրված պարտականության** կատարումից,

2) պարտականությունը կատարելուց խուսափելը պետք է լինի **չարամտորեն**:

ՀՀ ՔՕ 76-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի վրա կարող է դնել ՀՀ ՔՕ 70-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականությունները, ինչպես նաև տուժողին պատճառված իրական վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պարտականություն, եթե դատապարտյալը դեռևս չի հատուցել կամ այլ կերպ չի հարթել այդպիսի վնասը: ՀՀ ՔՕ 70-րդ հոդվածի 5-րդ մասն իր հերթին ամրագրում է, որ «Պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս դատարանը դատապարտյալի վրա կարող է դնել որոշակի պարտականություններ՝ չփոխել մշտական բնակության վայրը, բուժման կուրս անցնել ավիոհամուլությունից, թմրամոլությունից, վեներական հիվանդությունից կամ թունամոլությունից, նյութական օգնություն ցույց տալ ընտանիքին: Ղատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա, դատապարտյալի վրա կարող է դնել նաև նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ կամ փոխարինել դրանք»:

Վկայակոչված դրույթից բխում է, որ օրենսդիրը, թեև ոչ սպառիչ, բայց սահմանել է այն պարտականությունների ցանկը, որոնք կարող են փորձաշրջանի ընթացքում դրվել դատապարտյալի վրա:

Այս համատեքստում հարկ է նկատել, որ փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի՝ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայություն) գործունեությունը կարգավորող մայր օրենքի՝ «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ Պրոբացիայի ծառայությունն իր մոտ հաշվառված **պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման նպատակով մշակում և իրականացնում է համապատասխան աշխատանքի և սոցիալական ապահովությանը, մշակութային, կրթական, մասնագիտական վերապատրաստմանը և վերաորակավորմանը, սպորտային, առողջապահական, հոգեբանական, վարքաբանական, զբաղվածությանն ուղղված միջոցառումներ և ծրագրեր**: Պրոբացիայի յուրաքանչյուր շահառուի վերաբերյալ **ռիսկերի և պահանջմունքների գնահատման հիման վրա կազմվում է վերասոցիալականացման միջոցառումների առանձին ծրագիր**՝ հաշվի առնելով պրոբացիայի շահառուի անձի առանձնահատկությունները:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին **դատական ակտի հիման վրա և դրա շրջանակում**, ինչպես նաև **պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և պահանջմունքների գնահատման հիման վրա վերահսկողության պլանում պրոբացիայի ծառայողը սահմանում է պրոբացիայի շահառուի վերահսկողության ենթակա գործողությունները և դրանց կատարման ժամկետները, իրավունքներն ու պարտականությունները, դրանք խախտելու համար օրենքով նախատեսված պատասխանատվությունը**, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերասոցիալականացմանն ուղղված անհատական ծրագիրը:

Բերված դրույթի վերլուծությունից հետևում է, որ դատարանի սահմանած պարտականություններից գատ՝ պրոբացիայի ծառայողը դատապարտյալի (այս դեպքում՝ պրոբացիայի շահառուի) ռիսկերի և կարիքների գնահատման հիման վրա կարող է «բացահայտել» այնպիսի խնդիրներ, որոնց լուծման նպատակով անձի վրա պետք է դրվեն որոշակի պարտականություններ: Չնայած դրան՝ եթե այդ «բացահայտումները» դրված չեն դատական ակտի հիմքում, և դրանց հիման վրա դատական ակտով սահմանված չէ որևէ պարտականություն, ապա ցանկացած այլ

գործողության կատարումը կամ անգործությունը, որը չի ենթադրում դատարանի կողմից դրված պարտականության խախտում, փաստացի մնալու է անհետևանք:

Գործնականում նման իրավիճակները բացառելու նպատակով, կարծում ենք նախևառաջ անհրաժեշտ է առավել արդյունավետ օգտագործել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում ՀՀ ՔՕ 76-րդ հոդվածի 1.1-րդ և 1.2-րդ մասերով նախատեսված հանգամանքների գնահատման վերաբերյալ Պրոբացիայի ծառայության կողմից զեկույց ներկայացնելու գործառնությունը:

Այսպես, ՀՀ ՔՕ 76-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ ՔԿՕ) 115-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումներից բխում է, որ Պրոբացիայի ծառայությունը գնահատում է ՀՀ ՔՕ 76-րդ հոդվածի 1.1-րդ և 1.2-րդ մասերով նախատեսված հանգամանքները, որոնք վերաբերում են դատապարտյալի պատշաճ վարքագծին և նրա կողմից նոր հանցագործություն կատարելուն, և ներկայացնում զեկույց: Այսինքն՝ Պրոբացիայի ծառայությունը գնահատման է ենթարկում նշված մասերով նախատեսված բոլոր հանգամանքները և դրանց վերաբերյալ ներկայացնում համապարփակ տեղեկատվություն: Սա հնարավորություն է տալիս Պրոբացիայի ծառայությանը ճանաչել իր հավանական շահառուին, գնահատել նրա ռիսկերն ու կարիքները, ինչը հետագայում կօգնի փորձաշրջանն առավել արդյունավետ կազմակերպելու և կանխատեսելի դարձնելու հարցում: Այդուհանդերձ, Պրոբացիայի ծառայությունը **զեկույցում չի հանգում հետևության այն մասին, թե իր վերահսկողության տակ հայտնվելու դեպքում անձի վրա ինչպիսի պարտականություններ պետք է դրվեն**, որոնց իրականացմամբ Պրոբացիայի ծառայությունը կկարողանա հետևողականորեն կենսագործել իր առաքելությունը և անձին վերադարձնել հասարակություն: Ասվածի հիմքում ընկած է երկու կարևոր հիմնախնդիր.

1) օրենքի մակարդակով **Պրոբացիայի ծառայությունը հնարավորություն չունի իր զեկույցը դարձնել առավել խորհրդատվական, այլ ոչ զուտ գնահատողական**.

2) **Պրոբացիայի ծառայությունը չունի համապատասխան գործիքակազմ խորը գնահատելու դատապարտյալի ռիսկերն ու կարիքները և ըստ այդմ հանգելու այնպիսի հետևության, որն առնվազն 70% ճշգրտությամբ կկանխատեսի դատապարտյալի կրկնահանցագործության ռիսկը:**

Առաջին հիմնախնդիրը հնարավոր է լուծել ՀՀ ՔՕ-ում և ՀՀ ՔԿՕ-ում համապատասխան լրացումներ կատարելու միջոցով, որոնց ուժով Պրոբացիայի ծառայությունն իր զեկույցում դատարանին խորհրդատվություն կտրամադրի այն մասին, թե հասարակության պայմաններում հայտնվելու դեպքում անձի վրա ինչպիսի պայմաններ / պարտականություններ պետք է դրվեն:

Երկրորդ հիմնախնդրի առնչությամբ նշենք, որ մի շարք երկրներ դատապարտյալի վարքագիծն ու նրա կրկնահանցագործության ռիսկը գնահատելու համար օգտագործում են թղթային կամ էլեկտրոնային գործիքներ¹: Վերջիններս բաղ-

¹ Օրինակ Մեծ Բրիտանիայում գործում են Offender Assessment System (OASys) և Offender Group Reconviction Scale (OGRS) գործիքները, Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ Կարևոր գործոնների միավոր (Salient Factor Score (SFS) սանդղակ-գործիքը: Դրանց հիմքում դրված են ստատիկ և դինամիկ մի շարք գործոններ: Ստատիկ միջամտության չենթարկվող գործոնների մեջ են մտնում դատապարտյալի տարիքը հանցագործությունը կատարելիս, նախկինում դատված լինելը, թմրամոլությունը, փոքր հասակում ունեցած բարդությունները, սեռը և ծագումը (էթնիկ պատկանելությունը): Դինամիկ՝ ազդեցության ենթարկվող գործոններն իրենց հերթին կարող են լինել դատապարտյալի շրջապատին և կլինիկական վիճակին առնչվող տվյալներ: Շրջապատին առնչվող տվյալներից են սոցիալական կապերի թույլ աջակցությունը կամ դրանց բացակայությունը, կրթության ոչ բավարար մակարդակը և այլն: Իսկ կլինիկական տվյալների մեջ կարող են ներառվել զանազան ազդակները վերահսկելու ունակության պակասը, կատաղությունն ու թշնամանքը կամ բուժման նկատմամբ բացասական վերաբերմունքը (ավելի մանրամասն տե՛ս **Nicola Padfield, Van van Zyl Smit, Frieder Dünkel**, "Release from Prison", William Publishing, 2010, էջ 310):

կացած են մի շարք հարցերից, որոնք գնահատողին օգնում են ճիշտ կազմակերպել դատապարտյալի հետ անցկացվող հարցազրույցը, որպեսզի ստացվեն դատապարտյալի վարքագծի և նրա վերաբերմունքի վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ: Ընդ որում՝ հարկ է նշել, որ ստացված տվյալները համալրվում են նաև քրեակատարողական հիմնարկում դատապարտյալի վերաբերյալ կազմված անձնական գործում առկա տվյալներով, որոնք իրենց ամբողջության մեջ դառնում են դատապարտյալի վերասոցիալականացման աստիճանի և կրկնահանցագործության ռիսկի ցուցիչները: Արդյունքում՝ դատապարտյալը դասակարգվում է ռիսկային որևէ խմբում՝ ցածր, միջին կամ բարձր: Այս համատեքստում նշենք, որ ներկայումս Պրոբացիայի ծառայությունում ևս գործարկվել է պրոբացիայի շահառուների ռիսկերի և կարիքների գնահատման համար մշակված գործիքը: Այդուհանդերձ, դեռևս վաղ է այս գործիքի արդյունավետության մասին խոսելը, քանի որ այն միայն վերջերս է գործարկվել և ծառայում է որպես պրոբացիայի շահառուի վերասոցիալականացման գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու միջոց:

Որքան էլ գործնականում և տեսականորեն նման գործիքի օգտագործումն ավելի նախընտրելի լինի, քան անկախ մասնագետի կողմից ներկայացված եզրակացությունը¹, պետք է փաստել, որ այն տեխնիկական միջոց է, որն ամբողջ ճշգրտությամբ գործել չի կարող: Այս առումով էդ. Լատեսսան և Բ. Լովինսը այնդուրեք են, որ չնայած խնդրո առարկա գործիքը կրճատում է դատապարտյալի ապագա հավանական վարքագծի վերաբերյալ առկա անորոշությունը, այնուամենայնիվ այն կարող է սխալների պատճառ դառնալ, ուստի գնահատման արդյունքում տրված եզրակացությունը պետք է լինի բացառապես խորհրդատվական, այլ ոչ պարտադիր բնույթի: Անգամ մեծ ծավալի տեղեկատվության և վերլուծական առաջադեմ մեթոդների կիրառմամբ գործածվող գործիքներն ունակ են միայն 70% ճշգրտությամբ կանխատեսել կրկնահանցագործության ռիսկը, եթե գնահատումն իրականացվել է վերապատրաստված անձնակազմի կողմից²:

Ռիսկերի և կարիքների գործիքի մասին խոսելիս չենք կարող չանդրադառնալ այն հարցին, թե երբ է պետք գործածել այն: Միջազգային փորձի ուսումնասիրությունները թույլ են տալիս առանձնացնել դրանց կիրառման տարբեր ժամկետներ՝ պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց 3 ամիս առաջ, 6 ամիս առաջ և այլն: Կարծում ենք՝ հայ օրենսդրի կողմից սահմանված 80-օրյա ժամկետը բավարար է դատապարտյալի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու և գնահատողական բնույթի եզրահանգումների համար:

Այդուհանդերձ, հարկ է նկատել, որ անգամ վկայակոչված երկու հիմնախնդիրների լուծումը չի կարող ապահովել ցանկալի արդյունքը: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ անգամ եթե Պրոբացիայի ծառայությունը խորը գնահատման ենթարկի դատապարտյալի ռիսկերն ու կարիքները և դրա հիման վրա դատարանին ներկայացնի պարտականությունների «ցանկ», որը դատապարտյալը պետք է պարտավորվի կատարել փորձաշրջանի ընթացքում, դատարանը կարող է պարզապես անձի վրա որևէ պարտականություն չդնել, քանի որ պարտականություն սահմանելը դատարանի հայեցողությունն է և ոչ թե պարտականությունը: Պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ **դեպքերի ճնշող մեծամասնությամբ դատարանները պատժից պայմանական վաղաժամկետ ազատելիս դատական ակտով անձի նկատմամբ չեն սահմանում վերասոցիալականացմանը նպաստող որևէ պարտականություն կամ բավարարվում են միայն մշտական բնակությանը վայրը չփոխելու պարտա-**

¹ Տե՛ս օրինակ **Eileen Sullivan and Ronnie Green**, “States Predict Inmates’ Future Crimes with Secretive Surveys,” Associated Press, February 24, 2015:

² Ավելի մանրամասն տե՛ս **Edward J. Latessa and Brian Lovins**, “The Role of Offender Risk Assessment: a Policy Maker Guide,” Victims and Offenders, vol. 5, 2010, էջ 212:

կանությամբ¹ և, միաժամանակ, անձի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դնում Պրոբացիայի ծառայության վրա. 2020 թվականի հունվար ամսվա դրությամբ Պրոբացիայի ծառայությունում առկա է դատարանի՝ դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին 147 որոշում, որոնցից ընդամենը 22-ով է սահմանվել անձի վերասոցիալականացմանը նպաստող միջոցառումներին մասնակցելու պարտականություն²: Արդյունքում ունենում ենք հետևյալ պատկերը. մի կողմից՝ անձի վրա դատական ակտով, ըստ էության, դրված չէ նրա վերասոցիալականացմանը նպաստող որևէ պարտականություն, ուստի նա պարտավոր չէ կատարել այնպիսի գործողություններ, որոնք դուրս են դատական ակտի շրջանակներից, մյուս կողմից՝ այդպիսի պայմաններում իմաստագրվում են Պրոբացիայի ծառայության դերն ու նշանակությունը դատապարտյալի վերասոցիալականացման գործում, քանի որ դատարանի կողմից փորձաշրջանի ընթացքում որևէ պարտականություն չսահմանելու կամ պարտականությունների անհրաժեշտ և պիտանի ցանկ չսահմանելու դեպքում Պրոբացիայի ծառայության կողմից դատապարտյալի վերասոցիալականացման նպատակով գործադրվող բոլոր ջանքերն ի չիք կդառնան:

Կարծում ենք՝ փորձաշրջանի ընթացքում դատարանը պետք է պարտադիր կերպով անձի վրա դնի այնպիսի պարտականություններ, որոնք կնպաստեն անձի վերասոցիալականացման գործընթացը հաջողությամբ ավարտելուն. չէ՞ որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում պատժի նպատակների ապահովումը դեռևս շարունակվում է:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու համար դատապարտյալի նկատմամբ սահմանված պարտականության կատարումից խուսափելը պետք է լինի չարամտորեն: Հատկանշական է, որ օրենսդիրը ո՛չ ՀՀ ՔՕ 70-րդ, ո՛չ ՀՀ ՔՕ 76-րդ հոդվածների շրջանակներում չի բացահայտում այն դեպքերը, երբ պարտականությունը կատարելուց խուսափելը պետք է դիտարկվի չարամիտ կոնկրետ դեպքում կոնկրետ պարտականությունը կատարելուց խուսափելու գործընթացում չարամտության հատկանիշի հաստատումը թողնելով դատարանի հայեցողությանը: Այդպիսով՝ առկա կարգավորումը խնդրահարույց է իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից. վերջինս ենթադրում է իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների, այն է՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի³: Նման պայմաններում հարց է ծագում. կարո՞ղ ենք արդյոք չարամտություն արձանագրել այն դեպքերում, երբ անձը խուսափել է ներկայանալ իր վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին՝ Պրոբացիայի ծառայություն, և ներկայացնել տուժողին պատճառաբանված վնասը հատուցած լինելը հավաստող փաստաթուղթը, և դա այն դեպքում, երբ իրականում անձը կատարել է դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունը և հատուցել է տուժողին պատճառված վնասը: Մեկ այլ օրինակ. դիցուք անձը պետք է վճարի տուժողին պատճառված

¹ Տե՛ս, օրինակ՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2019 թվականի մարտի 29-ի ԿԴ3/0008/12/19 գործով որոշումը, Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հուլիսի 4-ի ԿԴ2/0019/12/19 գործով որոշումը:

² Տե՛ս, օրինակ՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ ԵԴ/0028/12/19 գործով որոշումը:

³ ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (օրինակ՝ ՍԴՈ-630, ՍԴՈ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որ համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսելի իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:

վնասը, բայց մերժում է Պրոբացիայի ծառայության կողմից ներկայացված աշխատանքի առաջարկը: Բերված և նման այլ օրինակներում չարամտության հատկանիշը արձանագրելու համար **անհրաժեշտ է օրենքի մակարդակով սահմանել այնպիսի ուղենիշներ, որոնք կվկայեն պարտականությունը կատարելուց խուսափելու մեջ չարամտության հատկանիշի առկայության մասին:**

Տեսական գրականության մեջ առկա է ընդհանրական մոտեցում, համաձայն որի պարտականությունը չարամտորեն չկատարելը ենթադրում է դատապարտյալի կողմից պարտականությունը տևական ժամանակ չկատարելը:

Խ. Սիդը և Բ. Տեբարը վկայում են, որ իսպանական դատական համակարգում¹ պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելը դիտվում է որպես վերջին միջոց (last resort): Պարտականության չկատարման հիմքով վաղաժամկետ ազատումը կարող է վերացվել, եթե խախտումը չարամիտ է, այսինքն՝ անձի վարքագիծը թույլ է տալիս պնդել, որ առկա է հստակ կամք պարտականությունը չկատարելու համար²:

Ա.Ա. Գորշենինը, հիմնվելով Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումի 2009 թվականի ապրիլի 21-ի «Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու դատական արակտիկայի վերաբերյալ» N 8 որոշման³ վրա, այն համոզմանն է, որ «չարամտորեն խուսափում» կարելի է դիտարկել այն դեպքերը, երբ անձն իր վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը վերացնելու մասին գրավոր նախազգուշացումն ստանալուց հետո կրկին չի կատարում իր վրա դրված պարտականությունը⁴: Նշված մոտեցումը կիսում է նաև Ա.Ա. Ռիբակովը⁵:

Մենք ևս համակարծիք ենք նշված մոտեցմանը, քանի որ իր վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը վերացնելու մասին գրավոր նախազգուշացումից հետո դատական ակտով սահմանված պարտականությունը չկատարելը արդեն իսկ ենթադրում է անձի մոտ դիտավորության առկայություն:

Միաժամանակ, պարտականությունը կատարելուց չարամտորեն խուսափելու ցանկացած դեպք արդյո՞ք պետք է հանդիսանա պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու անվերապահ հիմք: Գտնում ենք, որ համաչափության սկզբունքի երաշխավորման տեսանկյունից անձի համար առավել ընդունելի է կոնկրետ իրավիճակում նոր պարտականությունների սահմանումը կամ փորձաշրջանի ժամկետի երկարացումը: Այլ կերպ՝ պարտականությունը կատարելուց չարամտորեն խուսափելու յուրաքանչյուր դեպք պետք է առանձին քննարկման առարկա դառնա, որի շրջանակներում դատարանը կգնահատի պարտականության կատա-

¹ Տե՛ս, օրինակ՝ Decision from the Audiencia Provincial Sevilla (sección 4ª). Auto 4 marzo 2004. Jur 2004/126268.

² Ավելի մանրամասն տե՛ս **José Cid & Beatriz Tébar** // Revoking early conditional release measures in Spain // European Journal of Probation, 4 (1): 112-124, 2012, by SAGE Publishing (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://dx.doi.org/10.1177/206622031200400110> (27.01.20)).

³ Տե՛ս **Постановление Пленума Верховного Суда РФ** от 21 апреля 2009 г. № 8 "О судебной практике условно-досрочного освобождения от отбывания наказания, замены неотбытой части наказания более мягким видом наказания".

⁴ Տե՛ս **Горшенин А. А.** Современные тенденции реализации норм об условно-досрочном освобождении от отбывания наказания // Альманах современной науки и образования, № 12 (31) 2009, ч. 2, էջ 36:

⁵ Տե՛ս **Рыбаков А. А.** Некоторые вопросы определения злостности нарушения условий досрочного освобождения от отбывания наказания (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://cyberleninka.ru/article/n/nekotorye-voprosy-opredeleniya-zlostnosti-narusheniya-usloviy-dosrochnogo-osvobozhdeniya-ot-otbyvaniya-nakazaniya> (27.01.20)).

րունից խուսափելու պատճառները (այդ թվում՝ անձի մոտ իր վրա դրված պարտականությունը կատարելու իրական հնարավորության առկայության կամ բացակայության հանգամանքը), տևողությունը և գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Հատկանշական է, որ առաջարկվող մոտեցումը համահունչ է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված թիվ Rec (2003) 22 հանձնարարականին¹:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու պարտադիր հիմքերից **երկրորդն** այն է, որ անձը պետք է կատարի դիտավորյալ հանցանք: Ընդհանուր առմամբ ընդունելի և արդարացված համարելով օրենսդրի մոտեցումը, համայն որի՝ փորձաշրջանի ընթացքում նոր հանցանքի կատարումը պետք է հանգեցնի փորձաշրջանի դադարեցման՝ այդուհանդերձ հարց է ծագում. **արդյո՞ք դիտավորյալ հանցանք կատարելու փաստը պետք է հաստատվի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով, որպեսզի դատարանը վերացնի պայմանական վաղաժամկետ ազատումը, թե՞ բավարար է անգամ վարույթն իրականացնող մարմնի ենթադրությունն այն մասին, որ անձը կատարել է դիտավորյալ հանցանք:** Անդրադառնալով բարձրացված հարցի վերաբերյալ տեսական գրականության մեջ առկա մոտեցումներին՝ նշենք, որ գերմանացի տեսաբանների պնդմամբ գերմանական փորձում առկա է ընդհանուր փոխըմբռնում այն մասին, որ փորձաշրջանը կարող է դադարեցվել առանց դատարանի կողմից անձի դատապարտման այն դեպքերում, երբ իրավախախտը խոստովանել է իր կողմից հանցանքի կատարումը²: Ընդ որում՝ խոստովանությունը կարող է լինել, օրինակ, պաշտպանի կամ դատավորի ներկայությամբ: Չնայած գերմանացի տեսաբանների մոտեցմանը՝ Գերմանիայի Սահմանադրական դատարանը գտել է, որ ընդհանուր առմամբ պայմանական ազատումը վերացնելը և անձին պատիժը կրելու ուղարկելը պահանջում են փորձաշրջանի ընթացքում կատարված ենթադրյալ հանցանքի համար դատապարտում³: Հիմքում ունենալով անմեղության կանխավարկածը՝ մենք ևս այն համոզման ենք, որ **փորձաշրջանի ընթացքում դիտավորյալ հանցանքի կատարման հիմքով պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը կարող է վերացվել, եթե առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ, որով հաստատվել է փորձաշրջանի ընթացքում դիտավորյալ հանցանքի կատարումը:** Ընդ որում՝ ասվածը պետք է հավասարապես վերաբերի ոչ միայն դիտավորյալ, այլ նաև անզգույշ հանցանքին, քանի որ փորձաշրջանի ընթացքում նոր հանցանքի կատարման ուժով կարծես թե վերանում է դատարանի կողմից դատապարտյալի վերաբերյալ ձևավորված դրական կանխատեսումը, համաձայն որի՝ փորձաշրջանի ընթացքում անձը կդրսևորի պատշաճ վարքագիծ, և նրա կողմից կրկնահանցագործության ռիսկերը կլինեն նվազագույն: Այլ կերպ՝ **փորձաշրջանի ընթացքում անզգույշ հանցանքի կատարումը պետք է դիտարկվի պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու պարտադիր հիմք:**

¹ St´u Council Of Europe Committee Of Ministers Recommendation Rec (2003)22 of the Committee of Ministers to member states on conditional release (parole) (Adopted by the Committee of Ministers on 24 September 2003 at the 853rd meeting of the Ministers' Deputies).

² St´u օրինակ **Ineke Pruin**, Recalling conditionally released prisoners in Germany, European Journal of Probation University of Bucharest, www.ejprob.ro, ISSN: 2006 – 2203, Vol. 4, No1, 2012, էջ 65:

³ St´u BVerfG NJW 05, 817:

SOME ISSUES ON JUDICIAL SUPERVISION OVER THE CONDITIONAL EARLY RELEASE (PAROLE)

Arpine Sargsyan

*Head of Anti-Corruption and Penitentiary Policy Development Department,
Ministry of Justice of the RA,
Post-Graduate Student at the YSU Chair of Criminal Law*

The article is devoted to the judicial supervision over the conditional early release (parole). The author has raised and analyzed some of the key issues related to the subject matter and presented suggestions for their solution: within the framework of the article, the discretionary and mandatory grounds of recalling conditional early release (parole) were discussed.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СУДЕБНОГО НАДЗОРА ЗА УСЛОВНО-ДОСРОЧНЫМ ОСВОБОЖДЕНИЕМ

Арпине Саргсян

*Начальник департамента развития антикоррупционной
и пенитенциарной политики
Министерства юстиции РА,
аспирант кафедры уголовного права ЕГУ*

Работа посвящена судебному надзору за условно-досрочным освобождением. Автор выявил и проанализировал основополагающие проблемы, касающиеся предмета обсуждения, и предложил соответствующие решения. В рамках данной статьи рассмотрены вопросы дискреционных и обязательных оснований для отмены условно-досрочного освобождения.

Բանալի բառեր – *սլանդից սլանճանական վաղաժամկետ ազատում,
դատապարտիչ, դատական վերահսկողություն, փորձաշրջան*

Ключевые слова: *условно-досрочное освобождение, осужденный, судебный надзор, испытательный срок*

Key words: *conditional early release (parole), prisoner, judicial supervision, probation*

**Հարգելի՛ հեղինակներ,
Հանդեսին նյութեր հանձնելիս խնդրում ենք
պահպանել հետևյալ պահանջները.**

Խմբագրական խորհուրդը և խմբագրությունը կքննարկեն միայն այն նյութերը, որոնք կուղարկվեն էլեկտրոնային փոստով կամ խմբագրություն կներկայացվեն թղթային տարբերակով՝ էլեկտրոնայինի հետ միասին:

Հոդվածները առավելագույնը պետք է ունենան 25.000 տպագիր նիշ՝ ներառյալ տողատակերը:

Նյութերն ընդունվում են համապատասխան բուհերի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների բաժինների երաշխավորության, ինչպես նաև մասնագետի կարծիքի առկայության դեպքում: Նյութին կից անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի վերնագիրը, համառոտագիրը, հեղինակի տվյալները և բանալի բառեր՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:

Նյութերի ծավալը որոշելիս խնդրում ենք հիմք ընդունել հետևյալ պահանջները. տեքստը տպագրվում է սովորական A4 չափի թղթի վրա՝ 1.5 տողաչափով, հիմնական տեքստի տառերի չափը՝ 12, տողատակերի տառերի չափը՝ 10, լուսացքները՝ ծախից, վերևից, աջից և ներքևից՝ 2 սմ, Unicode տառատեսակով՝ «Arial Unicode»:

Նորմատիվ ակտեր օգտագործելիս տեքստում պետք է նշել դրա տեսակը (Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիր և այլն), ընդունման ժամանակահատվածը (ընդունման օրը՝ թվերով, ամիսը՝ տառերով, ընդունման տարին՝ քառանիշ թվերով, օրինակ՝ 2013 թվականի դեկտեմբերի 12), չակերտներում նշել լրիվ (առանց կրճատումների) անվանումը (օրինակ՝ ոչ թե ՀՀ, այլ Հայաստանի Հանրապետություն): Այս դեպքում տողատակում բավարար է նշել հրատարակության աղբյուրը:

Տեքստում կարելի է նշել ակտի տեսակը, ամսաթիվը և առանց չակերտների կրճատ անվանումը, որը կտա ճիշտ պատկերացում փաստաթղթի մասին:

Հեղինակներին խստիվ խորհուրդ է տրվում մինչև ուղարկելը մանրամասն ստուգել շարվածքի, ինչպես նաև համապատասխան իրավաբանական հասկացությունների ճշտությունը:

Նյութի առաջին էջում՝ վերնագրից հետո, նշվում են տեղեկություններ հեղինակի մասին, որոնք կարտացոլվեն մեր պարբերականում՝ հեղինակի անուն և ազգանունը ամբողջությամբ, պաշտոնը և աշխատանքի վայրը, առկայության դեպքում՝ գիտական աստիճանը և կոչումը: Օրինակ՝ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու ...:

Վերջին էջում հեղինակը պարտադիր ստորագրում է, նշում կոնտակտային տվյալները: